



2416-2418

49.99-5

U-75





y-u. w45

1101

p 626

5010

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՆՈՐ ԳՐԱՏՈՒՆ Ա. Պ. ԵԱԶԸՃԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

49199-5

Ա-75

My

ՉԱՊԷԼ 2. ԱՍԱՏՈՒՐ

Printed in Turkey

ԳՈՂԻՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՐԴԻ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ

Ա. ԳՅԲԵ

ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՒՅՈՒՐԴԷՆ ՎԱԻԵՐԱՑՈՒԱԾ



Կ. ՊՈԼԻՍ

ՆՈՐ ԳՐԱՏՈՒՆ

Ա. Պ. ԵԱԶԸՃԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

1909

2010



12/01

Printed in Turkey

ՅԱՌԱՋԱԲԱՆ

ՅՊՈՐԱՆ, ՎԻՄԱԳՐԱՏՈՒՆ, ԿԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՆՈՑ

Ե. Մ Ա Տ Թ Է Ռ Ս Ե Ա Ն

Թիւ 27, Զինանանըյար եօգուշու, Կ. Պոլիս



1895
39

2002

Եստ հեռու չեն այն ժամանակները, ուր մեր վարժարաններուն մէջ գրարար քերականութիւն գաս կը տրուէր անշափահաս մանուկներու որոնք հազիւ կարդալ ու գրել ուսած էին: Գրարարը անհասկընալի լեզու մըն էր իրենց համար, և տարիներ կ'անցընէին գոց սորվելով հորվումներ ու խոնարհումներ որոնց նշանակութիւնը գրեթէ չէին բմբուներ:

Փորձառութիւնը զգացուց թէ ժամագաճառութիւն էր գրարարի աշխատցնել այդ հասակի տղաքը, իրենց խօսած լեզուն սորվեցընելէ առաջ, և Ուսումնական Խորհուրդը իր ծրագրին մէջ ընդունեցաւ աշխարհարար քերականութիւնը նախակրթարաններու մէջ աւանդելու գրութիւնը:

Սկայն այս պէտքը ճանչցուելէ գրեթէ մէկ ու կէս դար առաջ 1726ին, Միխիմ ար Աբբայ մտածած էր արդէն ճշգիւ մեր գաւառաբարբառին քերականական օրէնքները, և պատրաստած էր քերականութիւն մը որ գեռ ձեռագիր կը մնայ Ս. Ղազարու վանքը. անոր մէկ համառօտութիւնը միայն ապագրուած է տաճկերէն լեզուով 1727ին: Յետոյ, 1847ին, Էլիաս Ռիկա՝ ամերիկացի միսիոնար մը՝ Պոլսոյ և Փոքր Ասիոյ աշխարհարարին քերականութիւնը գրած է անգլերէն լեզուով: Այս երկու երկերը չենք տեսած. միայն գիտենք թէ գործնական արդիւնք մը ունեցած չեն աշխարհարարի ուսումը մեր մէջ ծաւալելու տեսակետով:

Մեր վարժարաններուն մէջ նոր լեզուն աւանդելու նպատակով հրատարակուած առաջին քերականութիւնը Ուղղախօսութիւնն է, 1853ին տպուած այս գործը սրուն գլխաւոր հեղինակն է Ռուսինեան, կը ներկայացնէ աշխարհարարը ոչ այնպէս ինչպէս որ է, այլ նորօրինակ ուղղագրութեամբ ու կանոններով որոնց մէջ մեծ դեր կը կատարէ հեղինակին քմահաճոյքը:

Այնուհետև 1864ին Պոլիս տպուած է Քիրէճճեանի քերականութիւնը, որ թէպէտ այժմ մոռցուած՝ սակայն ունի իր լաւ կողմերը, և կրնայ նկատուիլ աշխարհարարի քերականութեան առաջին գասագիրքը, որ գործնապէս օգտակար եղած ըլլայ:

Յետոյ, թուականի կարգով, կուգայ Հ. Այսրենեանի հոյակապ երկը, Բնական Բերականուրիւն արդի աշխարհաբար լեզուի, 1866ին տպուած Վիեննայի մէջ: Այս գիրքը, որ մեր դարուն հոյ տաղանդին մեծ արտագրութիւններէն մէկն է, երեւան բերած է աշխարհաբարի գոյութեան իրաւունքը՝ գրարարէն անջատ իր ընդարձակ յառաջաբանը յիշակերտ մըն է աշխարհաբարի պատմութեան, հին դարերէն մինչեւ մեր ժամանակները, իսկ բուն քերականութեան մէջ Հ. Այսրենեան կ'ուսուցանուի՝ մանրակրկիտ հետազոտութիւններով՝ Պոլոյ և Փոքր-Ասիոյ դաւառարարութիւն, երեւան կը հանէ անոր թաքուն գանձերը, և կը ճշդէ անոր քերականական կանոնները:

Սակայն Հ. Այսրենեանի այս կիտաւոր երկաթութիւնը, դառադիրք մը չըլլալուն պատճառաւ, բնական էր որ չընդհանրանար մեր վարժարաններուն մէջ. միայն թէ զարմանալի է որ մեր այն ժամանակի աշխարհաբար գրողները, ընդհանրապէս գրաւար քերականութիւններուն վրայ լեզուն ուսած, չկրցան կամ չուզեցին օգտուիլ այդ աշխատութեանն որ ժողովուրդին լեզուն կը պատկերացնէր, ու հեռանալով անկէ, գացին յարեցան գրարարին, որուն մէջ ուզեցին ձուլել արդի աշխարհաբարը:

Այս շարժման հետ յառաջ կու գան այն բազմազան ձեւերը զորո աշխարհաբարին տուաւ ամէն գրող իր ճաշակին և հմտութեան համեմատ: Այսպէս տեւեց մինչև 1880ի տակները, ուր նոր գրողներու սերունդ մը, հետեւելով քննի մը հիներու, եկաւ հակադրծել այդ ձգտումին դէմ, և աշխարհաբարը վերտացաւ իր բնական, պարզ, յստակ ու ժողովրդական նկարագիրը, քայլ մը աւնելով դէպ ի 1840ի և 50ի գրողէս սերունդին լեզուն, դէպ ի ետ քայլ մը, որ սակայն յառաջդիմութիւն մին էր աշխարհաբար լեզուն համար:

Գալով աշխարհաբարի քերականութեան դասագիրքերուն, անանք արդէն սկսած էին, 1880էն ետքը, մուտ գտնել մեր վարժարաններուն մէջ. Գարագաշեան, Թէրզեան, Աճէմեան, Գալթեան, Պօզաճեան, Պետիկեան հեռզհեռէ հրատարակեցին իրենց գործերը՝ զորո քննած, իրարու հետ բաղդատած, և գործադրութեան դնելով, անձնական փորձաւութեամբ օգտուած ենք անոնցմէ՝ այս քերականութիւնը գրելու համար: Այս գործին մէջ, ուր աշխատութեան կարեւոր բաժին մը ունեցած է ամուսինս՝ Հրոնա Աստուր, գլխաւոր ջանքերնիս եղած է պատկերացնել արդի հոյերէնին օրէնքները, քաղելով զանոնք լաւագոյն գրողներու երկերէն, և ներշնչուելով մանաւանդ մեր ժողովուրդին գործածած կանոններէն, աղբիւր ունենալով

մեզ Պոլոյ աշխարհաբարը՝ Մերք մեր կողմէ բնաւ օրէնք մը հեղինակած չենք, որովհետեւ այդ ձեռնհասութիւնը չենք ծանցցած մեզի, նկատելով որ լեզուն մէջ բան մը հեղինակելու իրաւունքը ժողովուրդին կը պատկանի և ո՛չ անհատներուն:

Մեր ընդունած կանոնները ամբողջովին ընդունուած չեն սակայն այս Ա. Գրքին մէջ, որ 9-11 տարեկան մանուկներու սահմանուած տարրական դասընթացք մըն է: Հոս դրած ենք ինչ որ այս աշխատութեան շրջանակը կը ներէ, և Բ. Գրքին ու Գ. Գրքին մէջ մանաւանդ կ'երևայ արդիւնքը այն հետազոտութեանց, զորո կատարած ենք արդի աշխարհաբարին օրէնքները ճշդելու համար, կարգ մը այնպիսի կէտեր ալ երեւան ըրելով, որոնք ցարգ դիտուած չէին:

Մեր քերականութեան համար ընտրած ենք Ֆաէտէպը Պաթայի մեթոտը, որ իր մէջ կը պարունակէ ընթերցանութեան և օւղղագրութեան հասուածներ, քերականութեան կանոններ իրենց հրահանգներով և շարադրութեան ու արտասանութեան դասեր: Բոլոր ոտանաւորները մասնաւորապէս պատրաստուած են այս գրքին համար, մէկ մասը թարգմանութեամբ, մէկ մասը հետեւողութեամբ և փոքր մաս մըն ալ հեղինակութեամբ: Իսկ շարադրութեան դասերը ընթերցանութեան ծառայող հասուածներուն վրայ յօրինուած են հարցումներով որոնք գրաւոր և ըրեանացի պատասխանները պիտի վարժեցնեն աղաքը՝ գրելու և պատմելու: Յիշեալ հասուածներուն, ինչպէս բոլոր քերականութեան մէջ՝ ինամբ տարած ենք լեզուի միութիւն պահելու, և գործադրած ենք ճշդիւ ինչ որ աւանդած ենք տեսականով: Ոտանաւորներուն մէջ միայն ընդունած ենք լեզուի անձնան զարտուղութիւններ, գլխաւորաբար յօդերու գործածութեան մասին: այս կանոնները պիտի աւանդենք Բ. Գրքին և Գ. Գրքին մէջ:

Մեր դասախօսութեան ընթացքին մէջ՝ անձնական փորձաւորութեամբ տեսած ենք այս մեթոտին առաւելութիւնները, որովհետեւ մեր քերականութիւնը երկու տարի գործադրելէ ետքը հրատարակ կը հանենք: Մասնաւորապէս դիտած ենք որ աղաք դիւրութեամբ և հաճոյքով կը պատրաստեն այս դասագրքին պարտականութիւնները, ինչ որ միակ պայմանն է յաջող դասաւանդութեան:

ՆԱԽՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ

Բ Ա Ռ Ե Ի Խ Օ Ս Ք

Ա. ԸՆԹԵՐՅՈՒԱԾ. — ԲԱՐԻ Ա.ՂՋԻԿ

Արսինէ բարի աղջիկ մըն է: Փողոցները չի պտըտիր: Չար տղոց հետ չի խաղար: Ուշադրութեամբ իր դասերուն կը պարապի: Զբօսանքի ժամուն իր պուպրիկով կը զուարճանայ: Յետոյ իր պզտիկ եզրայրը կը պտըտցնէ պարտէզին մէջ: Միշտ կը հսկէ որ վտանգ մը չպատահի մանկիկին: Իր ծնողքը շատ կը սիրեն զինքը:

[Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր]

1. Յոհնակել այս հասուածը, բաժնել բառերը իրարմէ հորիզոնական գծով, եւ խօսքերը ուղղահայեաց գծով:

Օրինակ.— Արսինէ-բարի-աղջիկ-մըն-է: | Փողոցները և այլն:

2. Սորվիլ այս հասուածին ուղղագրութիւնը:

Գ Ա Ս

1. Բառերը ի՞նչ բանի կը ծառայեն:— Բառերը խօսելու և գրելու կը ծառայեն:

2. Խօսքը ի՞նչ է:— Խօսքը բառերու միացումն է իմաստ մը յայտնելու համար:

3. Պատասխանել հետևեալ հարցումներուն՝ բնականացի եւ գրաւոր:

1.— Արսինէ ի՞նչպէս աղջիկ է: 2.— Փողոցները կը պտըտի՞ր 3.— Չար տղոց հետ կը խաղայ: 4.— Ի՞նչ բանի կը պարապի: 5.— Ի՞նչ կ'ընէ զբօսանքի ժամուն: 6.— Ուրիշ ի՞նչ կ'ընէ: 7.— Ինչո՞ւ կը հսկէ մանկիկին վրայ: 8.— Ո՞վ կը սիրէ զինքը:

4. Օրինակել եւ գոց սորվիլ հետևեալ հոլովումը:

Ուղղական	Վտանգ
Սեռական	Վտանգ ի
Բացառական	Վտանգ է
Գործիական	Վտանգ ով

Գիտողութիւն.— Բառի մը վերջաւորութեան այս կերպով փոխուելուն հոլովում կ'ըստի:

Ի. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԲԱՐԻ Ա.ՂՋԻԿ

Փոքրիկ աղջիկ մըն եմ բարի,
 կը խելօքնամ ամէն տարի.
 Գիրքերուս հետ կ'ապրիմ մինակ.
 Անոնք եղան հաճոյքս հիմակ:

Միրգ, կարկանդակ, սեր և շաքար
 Հրապոյր չունին մի ինձ համար
 Գլորիչ, կարկին, թուղթ ու տետրակ
 Խաղալիքներս եղան հիմակ:

Վ Ա Ն Կ

Բ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — ԱՌՏՈՒՆ

Առտու է: Աքաղաղները կը խօսին: Տանը մէջ
ամէն մարդ կ'արթննայ: Հայրիկը կը մեկնի: Կ'երթայ
իր աշխատանոցին մէջ զբաղելու: Մայրիկը զմեզ կը
հագուեցնէ, կը մաքրէ եւ նախաճաշնիս կը պատրաստէ:
Յետոյ ես դպրոց կ'երթամ փոքրիկ եղբօրս հետ: Մեծ
քոյրս տունը կը կենայ մայրիկին օգնելու համար:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

5. Օրինակել այս հասուածը, եւ զատել անոր վանկերն ու բառերը:

Օրինակ. — Առտու | է: Աքաղաղները | կը | խօսին:

6. Սորվիլ այս հասուածին ուղղագրութիւնը:

7. Օրինակել մէկ, երկու եւ աւելի վանկ ունեցող հետեւեալ բառերը
զատ զատ սինականբոլ մէջ:

Սեղան, սփռոց, անձեռոց, Սանաման, պնակ, սկաւառակ, ղզալ,
պատառաքաղ, դանակ, աղցանոց, աղաման, զաւած, սրուակ, սրճաման,
հաց, զինի, միս, կաթ, կարագ:

Դ Ա Ս

3. Վանկը ի՞նչ է. — Երբ մէկ կամ աւելի
տառեր մէկ հնչումով կ'արտասանուին վանկ մը
կը կազմեն, ինչպէս. մարդ, հաց, հոգի:

8. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի եւ գրաւոր.

- 1. — Աքաղաղները երբ կը խօսին:
- 2. — Հայրիկը ո՞ր կ'երթայ առտուն:
- 3. — Ի՞նչ կ'ընէ իր աշխատանոցին մէջ:
- 4. — Ինչո՞ւ համար կ'աշխատի:
- 5. — Մայրիկը ի՞նչ կ'ընէ:
- 6. — Ո՞ր ժամուն նախաճաշ կ'ընենք:
- 7. — Յորեկուան կերակուրը ի՞նչ կը կոչուի:
- 8. — Իրիկուանը:
- 9. — Դուն որո՞նք հետ դպրոց կ'երթաւ:
- 10. — Մեծ քոյրդ ի՞նչ կ'ընէ:

9. Օրինակել եւ գոց սորվիլ հետեւալ հոլովումը:

Ուշդ.	Դպրոց
Սեռ.	Դպրոց ի
Բաց.	Դպրոց է
Գործ.	Դպրոց սվ

Այսպէս հոլովել՝ գրաւոր եւ բերանացի.

Աքաղաղ, աշխատանոց, նախաճաշ, մայրիկ, հայրիկ, կերակուր:

2. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԴՆՂՋՈՒԿԻՆ, ՊԱՆԻՐԸ

Դեղշուկն օր մը պանիր զընած՝
Դարանին մէջ կը պահէր,
Երբ ճեղքուած քին մէջէն յանկարծ
Ընդունարեց մուկ մը զէր:

Բերել տըւաւ կատու մը լաւ
Որ պահպանէ գոյքն իրեն.
Փխիկին առաջ մուկը կերաս
Պանիրն անոր վրայէն:

Գ Ի Ր

Գ. ԸՆԹԵՐՅՈՒԱԾ. — ԾՆԻԿԸ

Պզտիկ շուն մը ունիմ: Մեր տունը ծնած եւ մեր ձեռքը մեծցած է: Երկու տարու է արդէն, բայց միշտ կըր եւ պզտիկ է: Անունը Պիժու է: Երբոր զինքը կանչեմ, կը վազէ կու գայ: Դպրոց գացած ատենս՝ սակառու բերանը առած կ'ընկերանայ ինձի: Ինձի հետ կը խաղայ: Գիշերները անկողնիս տակ կը պառկի, եւ երբ դուրսէն ձայն մը լսէ, անմիջապէս ականջները վեր կը վերցնէ ու կը հաջէ:

Հ Ր Ա. Հ Ա Ն Գ Ն Ե Ր

40. Օրինակել այս հասուածը. եւ ամէն մէկ բառին ձայնաւորներն ու բաղաձայնները գտնել:

Օրինակ. — Պզտիկ բառին մէջ մէկ ձայնաւոր կայ՝ **ի**, և չորս բաղաձայն՝ **պ, գ, ս, կ**:

41. Սորվիլ այս հասուածին ուղղագրութիւնը:

Գ Ա Ս

4. Գրուած բառերը ինչէ՞ կը բաղկանան: — Գրուած բառերը գիրերէ կը բաղկանան:

5. Քանի՞ տեսակ գիր կայ: — Երկու տեսակ գիր կայ. ձայնաւոր և բաղաձայն:

6. Ձայնաւորները որո՞նք են: — Ձայնաւորները այն գիրերն են որ ինքնին ձայն ունին, և ութը հաս են. **ա, ե, է, ը, ի, ո, ղ, օ**:

7. Բաղաձայնները որո՞նք են. — Բաղաձայնները այն գիրերն են որ ձայնաւորներուն օգնութեամբ միայն կրնան ձայն հանել, և երեսուն հաս են. **բ, գ, դ, զ, թ, լ, խ, ժ, կ, հ, ձ, ղ, ս, Վ, շ, չ, ջ, յ, զ, ռ, ջ, ի, յ, պ, զ, ո, ս, ղ, ս, ռ, ց, փ, ք, ւ**:

42. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի եւ գրաւոր.

- 1. — Ի՞նչ ունիս դուն: 2. — Ո՞ւր ծնած և ո՞ր մեծցած է: 3. — Քանի տարու է: 4. — Անունը ի՞նչ է: 5. — Ի՞նչ կ'ընէ երբ զինքը կանչես: 6. — Դպրոց գացած ատենդ ի՞նչ կ'ընէ: 7. — Գիշերները ո՞ր կը պառկի: 8. — Ի՞նչու կը հաջէ: 9. — Եունը ի՞նչպէս կենդանի է:

43. Օրինակել եւ գոց սորվիլ հետեւեալ հորովումը.

Ուղղ.	Ձայն
Սեռ.	Ձայն ի
Բաց.	Ձայն է
Գործ.	Ձայն ու

Այսպէս հորովել՝ գրաւոր եւ բերանացի.

Բառ, սակառ, ականջ:

3. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԾՆԻԿԸ

Շընիկս իմ սիրուն,
Ի՞նչ աղուոր ես դուն,
Ի՞նչ գանգուր վարսեր՝
Գլխէդ են կախուեր:
Երբ ուրախ ըլլամ,
Ու խնդամ խաղամ,
Ինձի հետ դուն ալ
Կը սիրես խաղալ:
Իսկ երբ սաստեն գիս,
Ու ցաւի հոգիս,
Դուն ալ ինձի պէս
Արցունք կը Թափես:

Ե ԵՒ Է ԶԱՅՆԱԻՈՐՆԵՐԸ

Գ. ԸՆԹԵՐՅՈՒԱԾ. — ՄԱՒԲՐԱՍԷՒՐ ՏՂԱՆ

Վահան մաքրատէր տղայ մըն է: Գիր գրած ատեն երբեք մատերը չ'աղտոտեր, եւ հագուստին վրայ թանաքի բիծ մը չի տեսնուիր: Ճաշի ատեն անձեռոցը միշտ կուրծքին վրայ կը պահէ: Կերակուրը միշտ զգուշու- թեամբ կը տանի բերնին որ չթափի: Վրան գլուխը միշտ կանոնաւոր է և մաքուր: Ամէն մարդ հաճոյքով կը մօտենայ իրեն: Ամէնուն սիրելի դարձած է:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

14. Օրինակել այս հասուածը եւ խաչանիշով նշանակել այն բառերը, որոնց մէջ Ե եւ Է տառերը մի եւ նոյն հնչումը ունին, իսկ ստորագծել զանոնք, որոնց մէջ այդ տառերը իրենց յատուկ հընչումը կը պահեն:

15. Սորվիլ այս հասուածին ուղղագրութիւնը:

Դ Ա Ա

8. Ե եւ Է ձայնաւորները ի՞նչ հնչում ունին բառերուն մէջտեղը: — Ե և Է ձայնաւորները բառերուն մէջտեղը՝ երկու բաղաձայնի միջև՝ միեւնոյն հնչումը ունին, ինչպէս. *Մաքրատէր, իրենց:*

9. Ե ձայնաւորը ի՞նչպէս կը հնչուի բառերուն սկիզբը: — Ե ձայնաւորը իր յատուկ հնչումը կը պահէ բառերուն սկիզբը, ինչպէս. *Երջանիկ:*

10. Բառերուն վերջը Ե գիրը կը գործածուի՞: — Ե գիրը բնաւ չի գործածուիր բառերուն վերջը:

16. Պատասխանել հետեւեալ հարցումներուն բերանացի եւ գրաւոր.

1. — Ի՞նչպէս տղայ է Վահան 2. — Գիր գրած ատեն ձեռքերը կ'աղտոտէ: 3. — Սեղանին վրայ անձեռոց կը կրէ: 4. — Կերակուրը ինչպէս կը տանի բերնին 5. — Ինչո՞ւ 6. — Վրան գլուխը ինչպէս է: 7. — Ամէն մարդ կը մօտենայ իրեն 8. — Ինչո՞ւ հաճոյքով կը մօտենայ: 9. — Ինչո՞ւ սիրելի է ամէնուն:

17. Օրինակել եւ զոց սորվիլ հետեւեալ հոլովումը.

Ուղղ.	Զգուշում իւն
Սեւ.	Զգուշում ետն
Բաց.	Զգուշում եմէ:
Գործ.	Զգուշում եամբ

Այսպէս հոլովել՝ գրաւոր եւ բերանացի.

[Մաքրութիւն, ծուլութիւն, հեզութիւն, չարութիւն]

4. ԱՐՏԱԱՆՈՒԹԻՒՆ. — ԱՐԾԻՒՆ ՈՒ ԵՂՈՒՆՁԸ

Արծիւն, օր մը, տէրն ահարկու
չանթերու,

Ծառի մը ծայրն եկաւ իջաւ

ըշտապաւ.

Եւ խղունջ մը նշմարելով

հոն իր քով,

« Զարմանք, ըսաւ, անսրգ զեռուն,

Ինչպէս դուն

Ելար եղար ինձ դըրացի:

— Սողազիւ »

ՈՒԵԹ ԶԱՅՆԱԻՈՐՆԵՐԸ

Ե. ԸՆԹԵՐՅՈՒԱԾ. — ՕՐԻՈՐԿ ՎԱԿԵՆՈՑ

Ես քոյր մը ունիմ Ովսաննա անուանով, որուն Օրիորդ վախկոտ կ'ըսեն տանը մէջ: Ամէն բանէ կը դողայ: Գիշեր ատեն չի կրնար ինքնիրեն քովի սենեակը երթալ: Հովին ձայնէն կը սարսափի: Պառկած տեղը՝ եթէ դուրսը շշուկ մը լսէ, գլուխը ծածկոցին տակ կը պահէ: Ով որ կ'իմանայ իր այսչափ վախկոտ ըլլալը, կը խնդայ վրան: Ծնողքս կը յանդիմանեն միշտ զինքը իր այս թերութեանը համար:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

48. Օրինակել այս հասուածը, ի աչանիշով ցոյց տալ այն բառերը որոնց մէջ **ո** եւ **օ** ձայնաւորները միեւնոյն կերպով կը հնչուին, եւ ստորագծել այն բառերը որոնց մէջ **ո** գիրը իր յատուկ հընչումը կը պահէ:
49. Սորվիլ այս հասուածին ուղղագրութիւնը:

Գ Ա Ս

11. ՈՒԵԹ ձայնաւորները ի՞նչպէս կը հընչուին բառերուն մէջտեղը: — ՈՒԵԹ ձայնաւորները միեւնոյն կերպով կը հնչուին բառերուն մէջտեղը, ինչպէս. *օրորոց, ախոռոց:*

12. Ի՞նչպէս կը հնչուի ՈՒ ձայնաւորը Վ բաղաձայնէն առաջ: — ՈՒ ձայնաւորը Վ բաղաձայնէն առաջ գրուելով **օ** ի նման կը հնչուի, ինչպէս. *ոյլ, ոպկիսնոս, եւայլն.*

13. ՈՒ ձայնաւորը ի՞նչպէս կը հնչուի բառերուն սկիզբը: — ՈՒ ձայնաւորը իր յատուկ հնչումը կը պահէ բառերուն սկիզբը, ինչպէս. *ոսկի, ուսայն:*

20. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի եւ գրաւոր:

- 1.— Գոյրդ ի՞նչպէս կ'անուանեն տանը մէջ: 2.— Ինչո՞ւ համար: 3.— Գիշերը կրնայ միակ պտըտիլ: 4.— Ի՞նչ բանէ կը սարսափի: 5.— Ի՞նչ կը նշանակէ սարսափիլ: 6.— Եթէ շշուկ մը լսէ, ինչ կ'ընէ: 7.— Իր վախկոտ ըլլալը լսողը ինչ կ'ընէ: 8.— Ինչո՞ւ համար: 9.— Ծնողքդ ինչպէս կը վարուին իրեն հետ: 10.— Ինչո՞ւ համար կը յանդիմանեն զինքը: 11.— Ի՞նչ կը նշանակէ քերուքիւն:

24. Օրինակել եւ գոց սորվիլ հետեւեալ հոլովումը.

Ուղղ.	Թերութիւն
Սեռ.	Թերութեան
Բաց.	Թերութեան
Գործ.	Թերութեամբ


Այսպէս հոլովել գրաւոր եւ բերանացի.

Գիտութիւն, զօրութիւն, վատութիւն, քաջութիւն

5. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՓՈՐՐԻԿ ԲԱՐՁԻԿԸ

Փորրիկ բարձիկ սիրական,
 Կակուզ՝ գլխուս տակ տըկար,
 ձերմակ, տաքուկ, պատուական
 Փետրով լեցուած ինձ համար
 Հովին ձայնէն երբ վախնամ,
 Գայլն ու մրրիկ երբ գոռան,
 Վըրադ ննչել միշտ կու գամ,
 Փորրիկ բարձիկ սիրական
 Կան անթիւ խեղճ մանուկներ
 Մերկ, մայր չունին, չունին տուն,
 Եւ բարձ մ'անգամ չեն գտներ
 Երբ աչքերին փակէ բուն
 Ո՞հ, դանձն բախտ, միշտ՝ քընատ՝
 կը տառապին երբ այսպէս,
 Անուշ մայրիկ, անընդհատ
 Արիւն կ'երթայ իմ սրտէս:

1895
39



ՏԻԿԻՆ ՏԷՊՈՏ ՎԱԼՄՈՒ

ՈՒՒ Հ Ն Չ ՈՒ Մ Ը

2. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ, — ՆՈՒԱՐԳԻՆ ՊՈՒՊՐԻԿԸ

Նուարդ աղուոր պուպրիկ մը ունի: Աչքերը կապոյտ եւ մազերը դեղին են: Այտերուն վրայ պզտիկ փոսիկներ կան որոնք հիացում կ'ազդեն ամէնուն: Բերանը կը բացուի ու կը գոցուի ճերմակ ակուններուն վրայ: Նուարդ մօր մը պէս կը խնամէ զայն: Չմեռուան համար վարդագոյն ասուրիէ գեղեցիկ շրջազգեստ մը եւ ճերմակ թաւիչէ լայն գլխարկ մը շինեց անոր: Մուշտակէ պատուական վերարկու մըն ալ պիտի կարէ: Տեսնենք ինչե՛ր պիտի պատրաստէ ամառուան համար:

Հ Ր Ա Հ Ա Ն Ք Ն Ե Ր

- 22. Օրինակել այս հասուածը, եւ խաչանիշով ցոյց տալ այն բառերը որոնց մէջ ու ն վ կը հնչուի:
- 23. Սորվիլ այս հասուածին ուղղագրութիւնը:

Դ Ա Ս

14. ՈՒ ի՞նչ հնչում կ'ստանայ բառի մը մէջ-տեղը ձայնաւորէ մը առաջ դրուելով: — ՈՒ բառի մը մէջտեղը ձայնաւորէ մը առաջ գրուելով վի հնչում կ'ստանայ, ինչպէս. կը գոցուի պէտք է կարգաւ կը գոցվի, նուարդ պէտք է կարգաւ նըվարդ:

24. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի եւ զրաւոր:

1. — Նուարդ ի՞նչ ունի: 2. — Պուպրիկին մազերն ու աչքերը ի՞նչ գոյն ունին: 3. — Ի՞նչ կայ այտերուն վրայ: 4. — Ի՞նչ կը նշանակէ հիացում ազդել: 5. — Բերանը կը բացուի: 6. — Նուարդ ինչպէս կը խնամէ զայն: 7. — Ի՞նչ շինեց անոր՝ ձմեռուան համար: 8. — Ուրիշ ինչ պիտի կարէ անոր:

25. Օրինակել եւ գոց սորվիլ հետեւեալ հոլովումը.

Ուղղ.	Հիաց ում
Սեռ.	Հիաց ման կամ Հիաց ումի
Բաց.	Հիաց ումէ
Գործ.	Հիաց ումով կամ Հիաց մամբ

Այսպէս հոլովել՝ զրաւոր՝ եւ բերանացի.

Մտածում, լուծում, երգում, զգացում, կոչում, զարգացում, ուսում

Ուղղական ընել հետեւեալ բառերը.

Զմայմամբ, ցայտման, ծագման, ցնծումի, խնդումով, լրման, կծկումով, պրկման, սեղմումէ, որդման, հոսումէ:

6. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՊՈՒՊՐԻԿԻՆ

Ծափիկ ծափիկ ծիրանի
 Կարմիր խնձոր կը նմանի,
 Ոսկի դեղձան մազերն ալ
 Հովը թել թել կը տանի:

Լոյս լոյս աղուոր աղանի
 Պայծառ արեւ կը նմանի,
 Ծովէն կապոյտ աչուկն ալ
 Վեր վեր երկինք կը նայի:

Ծաղիկ ծաղիկ ծիրանի
 Վառ վառ վարդի կը նմանի,
 Զինէն ճերմակ թաթիկն ալ
 Կ'ուզէ մարգրիտ մատանի:

Յ Գ Ի Բ Ը

Է. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — ԶԿՆՈՐՄՈՒԹԵԱՆ ՀԱՃՈՅՔԸ

Հայկ, մեծ եղբայրս, նաւակ մը գնեց: Ամէն իրիկուն զմեզ ծովուն վրայ կը պտըտցնէ: Երբեմն ալ ձուկ որսայու կը տանի զմեզ ծովուն բացերը: Մեր կարթերը առաջուց կը պատրաստենք: Խայծերը կեռ ասեղին ծայրը կ'անցընենք, ու մինչեւ ջուրին յատակը կ'երկնցնենք: Երբ ձուկը դայ խայծը ուտելու, խկոյն վեր կը քաշենք: Խատուտիկ ձուկեր նաւակին մէջ կը լեցուին, եւ ասդին անդին կը ցատքուտեն:

Հ Բ Ա Հ Ա Ն Գ Ն Ե Բ

- 26. Օրինակել այս հատուածը, խաչանիշով ցոյց ցալ այն բառերը, որոնց մէջ յ գիրը կը հնչուի, եւ ստորագծել այն բառերը, որոնց վերջի յ գիրը անծայն կը մնայ:
- 27. Կրկին օրինակելով այս հատուածը, ստորագծել այն բառերը, որոնց մէջ յ գիրը մեղմ է ի պէս կը հնչուի, եւ խաչանիշով ցոյց ցալ այն բառերը որոնց մէջ ի ի հնչումը կ'ստանայ:
- 28. Գծել ճաշք բառ, որոնք յ ով վերջանան:
- 29. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը:

Դ Ա Ս

15. Յ գիրը ի՞նչպէս կը հնչուի բառերուն վերջը: — Յ գիրը անձայն կը մնայ բառերուն վերջը, բաց ի կարգ մը միավանկներէ. հայ, բայ, ելն:

16. Յ գիրը ի՞նչպէս կ'արտասանուի բառերուն սկիզբը: — Յ գիրը բառերուն սկիզբը հ ի պէս կ'արտասանուի, ինչպէս. յազոս, յախեստան:

17. Ի՞նչպէս կը հնչուի Յ գիրը երբ ա, ի, ո ձայնաւորներուն միացայ բառերուն մէջսեղը: — Յ գիրը երբ բառերուն մէջսեղն է, ձայնաւորէ մը ետքը՝ կիսաձայն ի ի պէս կը հնչուի, ինչպէս մայր, իցնալ, փոյր:

30. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի եւ գրաւոր.

- 1. — Հայկ ի՞նչ գնեց: 2. — Իրիկունները ո՞ւր կը պտըտցնէ զձեզ: 3. — Ո՞ւր կը տանի զձեզ ձուկ որսալու: 4. — Ի՞նչ է կարթը: 5. — Ի՞նչ է խայծը: 6. — Ի՞նչ բանի կեռ կ'ըսուի: 7. — Ձեր կարթերը ո՞ւր կ'երկնցնէք: 8. — Ի՞նչ կ'ընէք երբ ձուկը գայ խայծը ուտելու: 9. — Ի՞նչ կը նշանակէ խառնտիկ: 10. — Ձուկերը ի՞նչ կ'ընեն նաւուն մէջ:

31. Օրինակել եւ գոց սորվի՝ հետեւեալ հոլովումը.

Ուղղ.	Ծով
Սեռ.	Ծով ու
Բաց.	Ծով է
Գործ.	Ծովով

Այսպէս հոլովել՝ սա միավանկ բառերը.

Նաւ, հաւ, շահ, զահ, պահ, հայ, ձի, դար, մարդ, արջ, կով, դի, Թի, մանչ:

7. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԶՈՒԱՐԹ ՆԱՒԱՍՏԻՆ

Զուարթ նաւաստին
 Ծովերուն վըրայ,
 Հովին հոսանքին
 Դիմագրաւ կ'երթայ:
 Զերթ ծովու թռչուն
 Միշտ ծայրը կայմին,
 Իր երգը հնչուն
 Կը յանձնէ հովին:
 Կ'անցնի վըտանգէն
 Աշխոյժ և ուրախ,
 Ու չ'ազդեր իրեն
 Մըրիկն անգամ վախ:
 Սեւ ամպն ալ վերէն
 Երբ իջնէ զլիտն,
 Կը կրկնէ նորէն
 Իր երգը հնչուն:

ԱՆՈՒՆ ԿԱՄ ԳՈՅԱԿԱՆ

ԱՆՁԻ, ԱՆԱՍՈՒՆԻ ԵՒ ԻՐԻ ԱՆՈՒՆՆԵՐ

ԸՆԴՅՈՒՄՆԵՐՅՈՒԱԾ. — ԿԱՂԱՆԳԻ ՆՈՒԷՐՆԵՐՍ

Հայր մը, մայր մը, եղբայր մը եւ երկու քոյր ու նիմ: Հայրս եւ մայրս զիս շատ կը սիրեն: Հայրս այս տարի կաղանդին աղուոր խաղալիկ մը նուիրեց ինձի: Այս նուէրը փարախ մըն է, որուն մէջ կայ ձի մը, կով մը, երկու մաքի, այծ մը. շուն մը եւ ուլ մը: Իսկ մայրս կահաւորուած պղտիկ տուն մը նուիրեց: Այս տունը ունի սեղանատուն մը, սրահ մը եւ ննջասենեակ մը:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

32. Գրել գառ գառ սիւնակներու մէջ այս հասուածին մէջի անձե-
րուն. անասուններուն եւ իրերուն անունները:

33. Սորվիլ այս հասուածին ուղղագրութիւնը:

34. Մէյմէկ նախադասութիւն շինել հետեւեալ բառերով.

Վառեակ, մորուկ, հորթ, ուլ, գառնուկ, թոժիւն, գուռակ, կորիւն, եղնորթ, գաւազ, խոճկոր:

Օրինակ. — Ձիուն ձագը մտնուկ կը կոչուի:

Գ Ա Ս

18. Ի՞նչ է անունը կամ գոյականը: — Ա-
մէն անձ, ամէն անասուն, ամէն իր անուն մը
ունի որուն գոյական ալ կ'ըսուի, ինչպէս. հո-
վիւ (մարդու անուն), կասու (անասունի անուն),
տուն (իրի անուն):

35. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի եւ գրաւոր:

1. — Քու ընտանիքը բանի հոգիէ կը բաղկանայ: 2. — Ենդրը
զքեզ կը սիրեն: 3. — Հայրդ ինչ նուիրեց քեզի: 4. — Ե՞րբ նուէր կու
տան իրարու: 5. — Ի՞նչ է փարախը: 6. — Փարախիդ մէջ ինչ անա-
սուններ կան: 7. — Հորքը ինչ է: 8. — Գառնուկը: 9. Ո՞ւրը: 10. —
Ո՞վ արօտ կը տանի հօտը: 11. — Ո՞վ կը պահպանէ հօտը: 12. — Մայրդ
ինչ նուէր տուաւ քեզի:

36. Օրինակել եւ գոց սորվիլ հետեւեալ հոլովումը.

Ուղղ.	Տարի
Սեռ.	Տար ուում
Բաց.	Տարի է կամ Տար ուրնէ
Գործ.	Տարի ուլ

Այսպէս հոլովել՝ գրաւոր եւ բերանացի.

Ամառ, ձմեռ, երէկ, հիմակ, վաղը, ատեն, օր:

Օրինակել եւ գոց սորվիլ հետեւեալ հոլովումը.

Ուղղ.	Հայր
Սեռ.	Հ օր
Բաց.	Հ օրմէ
Գործ.	Հ օրմով

Այսպէս հոլովել.

Մայր, եղբայր, կնքամայր, կնքահայր, մօրեղբայր, հօրեղբայր, սա-
նահայր:

ՆԻԻԹԱԿԱՆ ԵՒ ՎԵՐԱՑԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Թ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — ՃՆՃՂՈՒԿԸ

Ճնճղուկ մը ազարակի մը պատին վրայ բոյն դրեր էր: Ամէն օր ազարակին հաւերուն կը նայէր, եւ անոնցմէ կը նախանձէր, որովհետեւ ինք ձմեռուան մէջ անօթի կը մեռնէր, մինչդեռ անոնք աղէկ կ'ուտէին կը խմէին: Առտու մը շնկոց մը լսելով արթնցաւ քունէն: Խռովութիւն մը նշմարեց ազարակին հաւերուն մէջ: Ուշադրութեամբ դիտեց՝ ազարակին տէրը հաւնոցը մտաւ, երկու վառեակ առաւ ու գլուխնին կտրել տուաւ: Ճնճղուկը ա՛լ չգանգատեցաւ իր դժբախտութենէն:

Հ Ր Ա Ղ Ա Ն Գ Ն Ե Ր

- 37. Օրինակել այս հասուածք, ստորագծել նիւթական անունները, եւ խաչանիշով ցոյց տալ վերացական անունները:
- 38. Տասը հաս նիւթական եւ տասը հաս վերացական անուն գծնել, ու զատ զատ սիւնակներու մէջ գրել:
- 39. Սորվիլ այս հասուածին ուղղագրութիւնը:

Գ Ա Ս

19. Որո՞նք են նիւթական անունները:— Նիւթական կ'ըսուին այն անունները, որոնց ցոյց տուած անձը, իրը կամ անասունը կը տեսնենք կամ կը շոյափենք, ինչպէս. ծաղիկ, օձ, մարդ:

20. Որո՞նք են վերացական անունները:— Վերացական կ'ըսուին այն անունները, որոնց ցոյց տուած գաղափարը մտքով միայն կ'ըմբռնենք, ինչպէս. եռանդ, զգացում, գիտութիւն:

21. Ո՞ր բառերը ընդհանրապէս վերացական են:— Ուրիշն և ուժ վերջաւորող բառերը վերացական են:

40. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի եւ գրաւոր.

1. — Ճնճղուկը ո՞ր բոյն դրեր էր: 2. — Ի՞նչ է ձնճղուկը: 3. — Դեռ ուրիշ ինչ թռչուններ գիտէք: 4. — Ի՞նչ է ազարակը: 5. — Ճնճղուկը ինչո՞ւ կը նախանձէր ազարակին հաւերէն: 6. — Առտու մը ինչ պատահեցաւ: 7. — Ի՞նչ նշմարեց ազարակին հաւերուն մէջ: 8. — Հաւերը ինչո՞ւ խռովեր էին: 9. — Ազարակին տէրը ինչ ընել տուաւ: 10. — Ճնճղուկը այնուհետեւ զանգատեցաւ իր վիճակէն: 11. — Ինչո՞ւ չգանգատեցաւ:

41. Օրինակել եւ զոց սորվիլ հետեւեալ հորվումները.

Ուղղ.	Ներ	Քոյր	Կին
Սեռ.	Ներ ոջ	Քր ոջ	Կն ոջ
Բաց.	Ներ ոջմէ	Քր ոջմէ	Կն ոջմէ
Գործ.	Ներ ոջմով	Քր ոջմով	Կն ոջմով

Այսպէս՝ հորվել՝ գրաւոր եւ բերանացի.

Տիկին, տալ, տագր, աներ, տէր, տէրտէր, տանտէր:

Օրինակել եւ զոց սորվիլ հետեւեալ հորվումը.

Ուղղ.	Աղջիկ
Սեռ.	Աղջկ աճ
Բաց.	Աղջիկ է
Գործ.	Աղջիկ ով

Այսպէս հորվել՝ գրաւոր եւ բերանացի.

Էրկի, կնիկ:

ՅԱՏՈՒԿ ԵՒ ՀԱՍԱՐԱԿ ԱՆՈՒՆ

Ժ. ԸՆԹԵՐՅՈՒԱԾ. — ԶԱՏԻԿ 80ՆԸ

Զատիկը Բրիտանոսի յարութեան տօնն է, եւ ուրախութեան օր մը բոլոր Բրիտանոսներուն համար: Առտուն կանուխ եկեղեցիին զանգակները կը հնչուին: Ամէն մարդ իր ամէնէն գեղեցիկ արդուզարդովը հագուած շքուած աղօթելու կ'երթայ Աստուծոյ: Եկեղեցիին խորանն ալ իր ամէնէն շքեղ զարդարանքովը կը փայլի: Ճրագներ, շղարչներ, ծաղիկներ լեցուն են տաճարին մէջ: Բրիտանոսներուն սեղանը կը զարդարուի կարմիր հակիթով եւ ուրիշ ուտելիքներով:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

- 42. Օրինակել այս հասուածը, ստորագծել յատուկ անունները, եւ խաչանիշով ցոյց տալ հասարակ անունները:
- 43. Սորվիլ այս հասուածին ուղղագրութիւնը:

Դ Ա Ս

22. Քանի՞ տեսակ է անունը: — Անունը երկու տեսակ է. յատուկ եւ հասարակ:

23. Ո՞րն է յատուկ անունը: — Յատուկ անունը մասնաւոր անձի մը կամ առարկայի մը կը տրուի զայն իր նմաններէն զանազանելու համար: Յատուկ են, զոր օրինակ, մարդոց, ընտանիքներու, լեռներու, ծովերու, քաղաքներու անունները, ինչպէս. Վանուս, Պոլիս, Մարմարա:

24. Ո՞րն է հասարակ անունը: — Հասարակ են այն անունները, որոնք միեւնոյն տեսակէ ամէն առարկաներու կրնան տրուիլ, ինչպէս. տուն, ֆաղաֆ, տղայ:

44. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի եւ գրաւոր.

1. — Ի՞նչ է Զատիկը: — 2. — Եկեղեցիին զանգակները երբ կը հնչուին: 3. — Ամէն մարդ ի՞նչ ընելու կ'երթայ: 4. — Եկեղեցիին խորանը ի՞նչ կ'ըլլայ: 5. — Ի՞նչ կայ տաճարին մէջ: 6. — Ի՞նչ է խորանը: 7. — Ի՞նչ է տաճարը: 8. — Բրիտանոսներուն սեղանին վրայ ի՞նչ մասնաւոր ուտելիք կը գտնուի Զատիկին:

45. Օրինակել եւ գոց սորվիլ հետեւեալ հոլովումները.

Ուղղ.	Աստուած	Սէր
Սեռ.	Աստուծ ոյ	Սիր ոյ
Բաց.	Աստուծ մէջ	Սէր է
Գործ.	Աստուծ մով	Սիր ով

8. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՓՈՒԲՐԻՆ ՎԱՐՁԱՆԱԼԸ

Վանդակիկ մը զըրի աղուոր իմ պարտէզիս մէջ պրուն, Որ Յուշուն մը գայ ուղեւոր Աստու մը հոն շինել բոյն, Ո՛վ քաղցրախօս շիկահաւիկ, իմ տունն ընտուէ քեզ բընակ, Միայն երգ մը կ'ուզեմ փոքրիկ Տունիս վարձքին փոխանակ:

Եւ երբ ուզես ամառ օրեր Պուրակին մէջ ապրիլ գատ, Բու փափաքիդ դէմ չեմ դըներ Եւ կ'արձակեմ զքեզ ազատ Բանտարկելու չունիմ փափաք Ըզքեզ, Յուշեկս անուշիկ. Ո՛հ, երգով մը եկուր մինակ Վարձել տընակս իմ փոքրիկ:

Ա Ն Ո Ւ Ն Ի Ն Թ Ի Ի Ը

ՅԱ. ԸՆԹԵՐՅՈՒԱԾ. — ՄԱՐԳՐՈՒՍ ՄԱՐԲՐԻՆԸ

Մարդուս մարմինը ունի գլուխ, բուն եւ անդամներ: Գլխուն վրայ կայ գանկ, դէմք, ձախտ եւ քունքեր, աչքեր, յոնքեր եւ արտուանունքներ, ականջներ եւ այտեր, քիթ եւ ուունգեր, բերան եւ շրթունքներ, եւ ծնօտ: Բունին վրայ են վիզը, կուրծքը, փորը եւ կունակը: Անդամներն են՝ բազուկներ եւ ձեռքեր, սրունքներ եւ ոտքեր:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

- 46. Օրինակել այս հասուածը, եւ նշանակել եզակիները ե ով, յոխնակիները յ ով:
- 47. Սորվիլ այս հասուածին ուղղագրութիւնը:
- 48. Յորնակի ընել հետեւեալ բառերը.

Բերան	Մօրուք	Լեզու	Գանկ
Ծնօտ	Պէխ	Քիթ	Չայն
Շրթունք	Կունակ	Կոկորդ	Աղաղակ

Դ Ա Ա

25. Թիւը քանի՞ է: — Թիւը երկուք է. եզակի եւ յոխնակի:

26. Անուն մը ե՞րբ եզակի է եւ ե՞րբ յոխնակի: — Անուն մը եզակի է երբ մէկ առարկայ մը կը ցուցնէ, յորնակի է երբ մէկէ աւելի առարկայ կը ցուցնէ:

27. Միավանկ եզակի բառ մը ի՞նչպէս պէտք է յոխնակի ընել: — Միավանկ բառերուն ծայրը պէտք է եր աւելցնել, ինչպէս. այտեր, քիթեր, տուներ:

49. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի եւ գրաւոր.

- 1. — Որո՞նք են մարդու մարմինն երեք զխաւոր մասերը: 2. — Մտածուէ՞ր հարտը կը կեդրոնանայ: 3. — Ի՞նչ է մարմինն բունը: 4. — Որո՞նք են անդամները: 5. — Որո՞նք են զխուն մասերը: 6. — Ի՞նչ է գանկը: 7. — Դե՞մքը: 8. — Քունքները: 9. — Ո՞րն է տեսութեան զործարանը: 10. — Ո՞ր կը կեդրոնանայ շարժութիւնը: 11. — Ի՞նչ բանի կը ծառայէ իջը: 12. — Ի՞նչ է հոստոտքիւնը: 13. — Որո՞նք են բերնին մասերը: 14. — Ի՞նչ բանի կը ծառայէ լեզուն: 15. — Ակունները: 16. — Խոչափո՞ղը: 17. — Որո՞նք են բունին մասերը: 18. — Ի՞նչ բանի կը ծառայէ ստամոքսը: 19. — Ո՞ր պահուած են աղիքները: 20. — Որո՞նք են շարժման զործարանները: 21. — Ի՞նչ բանի կը ծառայեն ոտները: 22. — Չեռները: 23. — Ըսէ՞ք ձեռքին հինգ մատերուն անունները: 24. — Որո՞նք են հինգ զգայարանները:

Դ Ա Ա

28. Բազմավանկ եզակի բառ մը ի՞նչպէս պէտք է յոխնակի ընել: — Բազմավանկ բառերուն վերջը պէտք է ներ աւելցնել, ինչպէս. ականջներ, ծնօտներ:

29. Անձայն Յ ով վերջացող բառերը ի՞նչպէս պէտք է յոխնակի կ'ըլլան: — Անձայն Յ ով վերջացող բառերը յորնակի ըրած ատեննիս՝ պէտք է ծայրի Յ ն ջըջնէք, ինչպէս. քանակայ, քանակներ, մեքենայ, մեքենաներ,

Հ Ո Լ Ո Վ Ն Ե Ր

ԺԲ. ԸՆԹԵՐՅՈՒԱԾ. — ԶՈՒԱՐՃԱԼԻ ՊԵՐՏԵՋԸ

Կիրակի օրը եղբայրս զուարճալի տեղ մը տարաւ զիս : Նաւակով ծովէն անցանք, եւ ծառերով լեցուն պարտէզ մը գացինք : Հոն մինչեւ իրիկուն զուարճացանք : Տեսակ տեսակ կենդանիներ կային : Մարդու կերպարանքով կապիկներ, նապաստակներ, ծառի պէտ եղջիւրներով եղնիկներ, գոյնզգոյն փետուրներով սիրամարգներ, աղանիներ, ագռաւներ, նաև լճակներուն մէջ ձուկեր : Եղբայրս ընաւ չէր վախնար այդ անասուններէն եւ անոնց քով կ'երթար. ամէնուն անունը գիտէր. անոնց յատկութիւններուն վրայ կը խօսէր ինծի :

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

50. Որոշել այս հասուածին մէջի բոլոր հոլովները եւ գաս գաս սիւնակերու մէջը գրել.

Օրինակ. — Ուղղ.	Սեռ.	Բաց.	Գործ.
Կիրակի	Մարդու	Ծովէն	Նաւակով

51. Սորվիլ այս հասուածին ուղղագրութիւնը :

52. Օրինակել եւ գոց սորվիլ հետեւեալ հոլովումները.

ԵԶԱԿԻ	ՅՈՔՆԱԿԻ	ԵԶԱԿԻ	ՅՈՔՆԱԿԻ
Ուղղ. Հայց. Ծառ	Ծառ եր	Ագռաւ	Ագռաւ Գեր
Սեռ. Տրակ. Ծառ ի	Ծառ երու	Ագռաւ ի	Ագռաւ Գերու
Բաց.	Ծառ է	Ագռաւ է	Ագռաւ Գերէ
Գործ.	Ծառ ով	Ագռաւ ով	Ագռաւ Գերով

53. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի եւ գրաւոր.

1. — Կիրակի օրը եղբայրդ հըր տարաւ զքեզ :
2. — Ո՞ր կէտն անցաք Նաւակով :
3. — Ի՞նչ ըրիք այդ պարտէզին մէջ :
4. — Ի՞նչ կար հոն :
5. — Չորհոջանի որն է կ'ըսուի :
6. — Ո՞ր կը պահեն Պոչունները :
7. — Կապիկը ի՞նչ տեսակ կենդանի է :
8. — Աղանիները ի՞նչ գոյն ունին :
9. — Ձուկերը հըր կը գտնուին :

Դ Ա Ս

30. Ի՞նչ է հողովումը : — Անունի մը վերջաւորութեան փոխուելուն հողովում կ'ըսուի :

31. Հոլովը քանի՞ է : — Հոլովը վեց է . ուղղական, հայցական, սեռական, տրական, բացառական, գործիական :

32. Այս հոլովները ի՞նչ հարցումներու կը պատասխանեն : — Ուղղականը կը պատասխանէ ո՞վ հարցման, հայցականը՝ զո՞վ, սեռականը ո՞րո՞ն, տրականը՝ որո՞ն, բացառականը՝ որմէ՞, գործիականը՝ որո՞վ :

33. Հոլովման ընդհանուր կանոնը ո՞րն է : — Հոլովման ընդհանուր կանոնն է, եզակիի մէջ ի, է, ո՞վ, յօդնակիի մէջ՝ եր, երու, երէ, երով կամ ներ, ներու, ներէ, ներով. տե՛ս ծառ, ագռաւ :

ՀՈԼՈՎՆԵՐՈՒՆ ԶԵՒԵՐԸ

ԺԳ. ԸՆԹԵՐՅՈՒԱԾ. — ՀԱՅ ԳԻՐԵՐԸ

Հայ եկեղեցին տարին անգամ մը կը տօնէ Սահա-
կայ եւ Մեսրոպայ տօնը: Այդ տուրը Հայրապետները
գտած են մեր լեզուին գիրերը: Լեզուի մը զարգացման
ամէնէն մեծ միջոցը իր գիրն է: Եթէ գիր չունենայինք,
գրականութիւն ալ չպիտի ունենայինք: Չպիտի կրնա-
յինք իրարու հետ հաղորդակցիլ հեռուէն: Ուստի երբ
տղայ մը կարդալ ու գրել սորվի, պէտք է ճանչնայ
մեր գիրերուն հեղինակները ամէնէն առաջ, եւ երախ-
տագիտութեամբ յիշէ անոնց անունը:

Հ Ր Ա. Հ Ա Ն Գ Ն Ե Ր

- 54. Օրինակել այս հասուածը, եւ ստորագծել զարտուղի հոլովները:
- 55. Սորվիլ այս հասուածին ուղղագրութիւնը:

Գ Ա Ս

34. Ո՞ր բառերն են որ ընդհանուր օրէնքէն
սարքեր կերպով կը հոլովուին. — Ընդհանուր
օրէնքէն տարրեր կերպով կը հօլովուին.

1. Ուրիւն վերջացող բառերը, ինչպէս. ու-
րախտաթիւն, ուրախութեան, ևլն.

2. Ում վերջացող բառերը, ինչպէս. հիւ-
ցում, հիւսցման, ևլն.

3. Փամանակ ցուցնող բառերը, ինչպէս. ա-
միս, անտուան, ևլն.

4. Կարգ մը միավանկ բառեր, ինչպէս. ծով,
ծովու, ևլն.

5. Ազգականութեան կապ ցուցնող բառերը,
ինչպէս. հայր, հօր, ևլն.:

35. Ասոնցմէ զայս կա՞ն ուրիշ բառեր որոնք
զարտուղի կերպով հոլովուին:— Կան նաև կարգ-
մը բառեր, որոնց հօլովումը զարտուղի է, ինչ-
պէս. Աստուած, սէր, տղայ, ևլն.:

56. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ քերանացի եւ գրաւոր.

1. — Ո՞ր եկեղեցին կը տօնէ Սահակայ եւ Մեսրոպայ տօնը: 2. —
Ինչո՞ւ համար կը տօնէ: 3. — Անոնցմէ առաջ Հայերը թնչ գիր կը գործա-
ծէին: 4. — Ո՞րն է լեզուի մը զարգացման միջոցը: 5. — Ի՞նչ կ'ըլլար,
եթէ մարդիկ զիր չունենային: 6. — Տղաք զո՞վ պէտք է ճանչնան ամէնէն
առաջ երբ կարդալ գրել սորվին: 7. — Ի՞նչ զգացումով պէտք է յիշեն
անոնց անունները:

57. Օրինակել եւ գոց սորվիլ հետեւեալ հոլովումը.

Յ Ո Ք Ն Ա Կ Ի

Ուղղ. Հայց.	Գիտութիւն ՆԵՐ
Սեռ. Տրակ.	Գիտութիւն ՆԵՐՈՒ կամ Գիտում ԵԱՆԿ
Բաց.	Գիտութիւն ՆԵՐԷ
Գործ.	Գիտութիւն ՆԵՐՈՎ

Այսպէս հոլովել՝ գրաւոր եւ քերանացի, հետեւեալ անուններուն
յոքնակիները.

Ճշգումիւն, ուղղութիւն, ստումիւն, խարդախութիւն, մարտութիւն,
համեստութիւն, խումիւն, ժրութիւն, ծերութիւն, մանկութիւն

Օրինակել եւ գոց սորվիլ հետեւեալ հոլովումը.

Յ Ո Ք Ն Ա Կ Ի

Ուղղ. Հայց.	Հիացում ՆԵՐ
Սեռ. Տրակ.	Հիացում ՆԵՐՈՒ կամ Հիաց ՄԱՆԿ
Բաց.	Հիացում ՆԵՐԷ
Գործ.	Հիացում ՆԵՐՈՎ

Այսպէս հոլովել հետեւեալ բառերուն յոքնակիները.

Զգացում, մտածում, զարգացում, յաւելում

ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆ

Ե Զ Ա Կ Ի		Յ Ո Ք Ն Ա Կ Ի	
Ո. Հ.	Վարդ	Վարդ ԵՐ	
Ս. Տ.	Վարդ Ի	Վարդ ԵՐՈՒ	
Բ.	Վարդ Է	Վարդ ԵՐԷ	
Գ.	Վարդ ով	Վարդ ԵՐՈՎ	

Բ Ա Յ Ա Ռ ՈՒ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Ա.

Ե Զ Ա Կ Ի		Յ Ո Ք Ն Ա Կ Ի	
Ո. Հ.	Ուրախութիւն	Ուրախութիւն ԵՐ	
Ս. Տ.	Ուրախութեան	Ուրախութիւն ԵՐՈՒ	
Բ.	Ուրախութեան ԵՆԷ	Կա՛մ Ուրախութեան ԵՆԵՆԳ	
Գ.	Ուրախութեան ԵՄԲ	Ուրախութիւն ԵՐԷ	
		Ուրախութիւն ԵՐՈՎ	

Բ.

Ե Զ Ա Կ Ի		Յ Ո Ք Ն Ա Կ Ի	
Ո. Հ.	Զարգացում	Զարգացում ԵՐ	
Ս. Տ.	Զարգացում Ի կա՛մ Զարգաց ման	Զարգացում ԵՐՈՒ	
Բ.	Զարգացում Է	Կա՛մ Զարգաց մանԳ	
Գ.]	Զարգացում ով կա՛մ Զարգաց մամբ	Զարգացում ԵՐԷ	
		Զարգացում ԵՐՈՎ	

Գ.

Դ.

Ե Զ Ա Կ Ի		Յ Ո Ք Ն Ա Կ Ի	
Ո. Հ.	Տարի	Տարի ԵՐ	Ծով
Ս. Տ.	Տար ուան	Տարի ԵՐՈՒ	Ծով ԵՐ
Բ.	Տարի Է	Տարի ԵՐԷ	Ծով ԵՐՈՒ
	Կա՛մ Տար ուրԳԷ		Ծով ԵՐԷ
Գ.	Տարի ով	Տարի ԵՐՈՎ	Ծով ով
			Ծով ԵՐՈՎ

Ե.

Զ.

Ե Զ Ա Կ Ի		Յ Ո Ք Ն Ա Կ Ի		Ե Զ Ա Կ Ի		Յ Ո Ք Ն Ա Կ Ի	
Ո. Հ.	Հայր	Հայր ԵՐ	Ներ	Ներ ԵՐ			
Ս. Տ.	Հ օր	Հայր ԵՐՈՒ	Ներ ոջ	Ներ ԵՐՈՒ			
Բ.	Հ օրմէ	Հայր ԵՐԷ	Ներ ոջմէ	Ներ ԵՐԷ			
Գ.	Հ օրմով	Հայր ԵՐՈՎ	Ներ ոջմով	Ներ ԵՐՈՎ			

Է.

Ը.

Ե Զ Ա Կ Ի		Յ Ո Ք Ն Ա Կ Ի		Ե Զ Ա Կ Ի		Յ Ո Ք Ն Ա Կ Ի	
Ո. Հ.	Աղջիկ	Աղջիկ ԵՐ	Սէր	Սէր ԵՐ			
Ս. Տ.	Աղջկ աճ	Աղջիկ ԵՐՈՒ	Սիր ոջ	Սէր ԵՐՈՒ			
Բ.	Աղջիկ Է	Աղջիկ ԵՐԷ	Սէր Է	Սէր ԵՐԷ			
Գ.	Աղջիկ ով	Աղջիկ ԵՐՈՎ	Սիր ով	Սէր ԵՐՈՎ			

Թ.

Ե Զ Ա Կ Ի

Ո. Հ.	Աստուած
Ս. Տ.	Աստուած ոջ
Բ.	Աստուած մէ
Գ.]	Աստուած մով

Ժ.

ԺԱ.

Ե Զ Ա Կ Ի		Յ Ո Ք Ն Ա Կ Ի		Ե Զ Ա Կ Ի		Յ Ո Ք Ն Ա Կ Ի	
Ո. Հ.	Տղայ	Տղա Բ	Մարդ	Մարդ Իկ			
Ս. Տ.	Տղու	Տղ ոջ	Մարդ ու	Մարդ ոջ			
Բ.	Տղայ Է	Տղ ոջմէ	Մարդ Է	Մարդ ոջմէ			
Գ.	Տղայ ով	Տղ ոջմով	Մարդ ով	Մարդ ոջմով			

Յ Օ Դ

Ո Ր Ո Շ Ի Չ Յ Օ Դ

ԺԴ. ԸՆԹԵՐՅՈՒԱՄ. — ՍՏԱԽՕՍ ԱՂԶԻԼԸ

Զարուկ աղուոր պզտիկ աղջիկ ժըն է, բայց մեծ թերութիւն մը ունի. միշտ սուտ կը խօսի: Իր հայրն ու մայրը դժգոհ են այս բանէն: Կը խրատեն, կը պատժեն զինքը, բայց ան նորէն ճշմարիտը չ'ըսեր: Այս պատճառաւ մէկը անոր խօսքին չի հաւտար: Երբ բերանը բանայ բան մը պատմելու համար, իր ընկերները «Սո՛ւտ ես» կը պոռան երեսին: Ի՞նչ զգուցի բան է նտախօսութիւնը:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

58. Օրինակել այս հասուածը, եւ ստորագծել յօդերը:

59. Սորվիլ այդ հասուածին ուղղագրութիւնը:

Դ Ա Ս

36. Քանի՞ տեսակ յօդ կայ. — Երկու տեսակ յօդ կայ. որոշիչ և անորոշ:

37. Ո՞րն է որոշիչ յօդը: — Որոշիչ յօդ կը կոչուին Ը և Ն գիրերը, որոնք անունի մը վրայ կը դրուին անոր իմաստը որոշելու համար:

38. Ե՞րբ Ը կը գործածուի: — Ը կը գործածուի բառի մը վրայ, որուն վերջին գիրը բաղաձայն է, ինչպէս. կաղիւն, կաղիւնը:

39. Ն յօդը ե՞րբ կը դրուի: — Ն յօդը կը դրուի, եթէ բառին վերջին գիրը ձայնաւոր է, ինչպէս. կասու, կասուն, ճի, ճին:

60. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի եւ գրաւոր.

1. — Ո՞վ է Զարուկ: 2. — Զարուկի մեծ թերութիւնը ինչ է: 3. — Ի՞նչ է ստախօսութիւնը: 4. — Ո՞վ դժգոհ է այս բանէն: 5. — Զարուկին ինչ կ'ընեն այս թերութեանը համար: 6. — Ինչո՞ւ չեն հաւտար անոր խօսքին: 7. — Երբ բերանը բանայ, ընկերները ինչ կ'ընեն: 8. — Ի՞նչ է ստախօսութեան վնասը:

61. Յարմար յօդեր դնել հետեւեալ բառերուն վերջը.

Գաւաթ, պտուկ, նշենի, բարտի, շուն ու կատու, գիտութիւն, հաւեր, տղար ու հայր, մայր իսկ, սպասաւոր ալ, նուագ, խորան, եկեղեցի, կենդանի, ճամբայ, խաբերայ, ծով, այգի, աղքատ ու ճոխ, սուր, ենթակայ, առարկայ, քահանայ ու ժողովուրդ, ամառ ու ձմեռ, փոսուռայ ու թիթեռնիկ, տուներ ալ, գորգ, պատկեր է, մեղու անգամ, փեսայ ու հարս, ձեղուն, իշխան:

Դ Ա Ս

40. Ն յօդը ուրի՞ց ե՞րբ կը գործածուի: — Ն յօդը կը գործածուի նաեւ ձայնաւորով սկսող հետեւեալ բառերուն առջեւ. ու, ալ, իսկ, անգամ, եւ, ես, է, եւնի, էֆ, են, էի, էիր, էր, էիւնի, էիֆ, էին:

41. Անձայն Յ ով վերջացող բառերուն ծայրը ի՞նչպէս յօդ կը դրուի: — Անձայն Յ ով վերջացող բառերուն Յ ն կը ջնջուի յօդ դրուած ատեն, ինչպէս. սասանայ, սասանան, կարսայ, կարսան:

Ա Ն Ո Ւ Ո Շ Յ Օ Դ

ԺԵ. ԸՆԹԵՐՅՈՒԱԾ. — ՆՈՐԱԾԻՆԸ

Այս կիրակի եկեղեցի տարինք ու մկրտեցինք իմ նորածին քոյրս: Անունը Արփինէ դրինք, Աւագանին մէջ կը պոռար, կը ճչէր, ու ձիւնաթոյր թաթիկները օդին մէջ կ'երերցնէր: Յետոյ ժանեակէ ձերմակ չըջազգեստ մը հազցուցինք իրեն, փետրազարդ սիրուն գդակ մը դրինք գլուխը: Երբ տուն բերինք ու շղարչներուն մէջ պառկեցուցինք զինքը, շատ աղուորցեր էր: Փոքրիկ անկողնին քով գացի, համբոյր մը այտերէն եւ համբոյր մըն ալ թաթիկներէն առի: Յետոյ օրօր ըսի որ քնանայ:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

62. Թրինակել այս հասուածը, եւ ստորագծել անորոշ յօդերը:

63. Սորվիլ այս հասուածին ուղղագրութիւնը:

Դ Ա Ս

42. Անորոշ յօդը ո՞րն է: — Անորոշ յօդն է մը կամ մըն:

43. Մը ե՞րբ կը գործածուի: — Մը կը գործածուի ամէն անունի քով անորոշ իմաստ մը տալու համար անոր, ինչպէս. մարդ մը (անորոշ մարդ մը), ձի մը, եւլն.:

44. Մըն երբ կը գործածուի: — Մըն կը գործածուի եւ, ես, է, եւն, էք, եմ, էի, էիր, էր, էիւն, էիք, էին և այ բառերէն առաջ, ինչպէս. մարդ մըն է, վաս մըն էք, ապուշ մըն էր, հիւանդ մըն աչ մեռաւ:

64. պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի եւ գրաւոր:

- 1. — Այս կիրակի ո՞ւր տարիք փոքրիկ քոյրդ:
- 2. — Ինչո՞ւ համար:
- 3. — Անունը ի՞նչ դրիք:
- 4. — Աւագանին մէջ ի՞նչ կ'ընէր:
- 5. — Ի՞նչ հազցուցիք իրեն:
- 6. — Գլուխը ի՞նչ դրիք:
- 7. — Երբ տուն բերիք ի՞նչ ըրիք:
- 8. — Ի՞նչպէս կ'երեւար շղարչներուն մէջ:
- 9. — Դ. Դուն ի՞նչ ըրիք:
- 10. — Ետքը ի՞նչ ըրիք:

65. Անորոշ յօդեր դնել հետեւեալ անուններուն վրայ.

Քահանայ . . . եկաւ Աշակերտ . . . ալ աւելցաւ Քոյր . . . ալ ունեցայ: Գիրք . . . բերի: Ծոյլ տղայ . . . ես դուն: Հօրաքոյր . . . ունիմ: Դեռ պզտիկ տղայ . . . էր ան: Մեծ պատկերհան . . . է ան: Տուն . . . գնեցի: Տղայ . . . մկրտեցիր: Մրցանակ . . . ստացայ: Պատիժ . . . էր աս:

9. ԱՐՏԱԱՆՈՒԹԻՒՆ. — ԱՍԱԽՕՍԻՆ, ՊՍՏԻԺԸ

Փոքրիկ հովիւ մըն էր Միրան,
 Որ ամէն օր դաշտին վըրան
 Արածելու կ'երթար առտուն
 Հօան իր գիւղին ոչխարներուն
 Օր մը նեղուած հոն միս մինակ,
 Ըսաւ. «Աղուոր խաղ մը խաղանք»
 Եւ սկսաւ պոռալ ուժով.
 «Գայլ կայ, գայլ կայ, հասէք շուտով»
 Գիւղացիներ եկան հասան,
 Ոչ գայլ գտան, ոչ ալ գազան
 Քահ քահ ինդաց անկիրթ տղան.
 Ըսաւ անոնց. «Գատակ էր ան»:
 Գայլեր եկան օր մը իրաւ,
 Մարդ իր ձայնին մըտիկ չըրաւ.
 Մէկը՝ չեղաւ իրեն պաշտպան.
 Կըտոր կըտոր եղաւ Միրան:

ԱՆՈՒՆԻՆ ԵՒ ՅՕԴԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ

ԺԶ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — ՄԵՐ ՊԱՐՏԷԶԸ

Մեր տունը ընդարձակ պարտեզ մը ունի: Ածուռնե-
րով, ծառուղիներով ու լճակներով զարդարուած է պար-
տեզին ամէն կողմը: Ծափրանները աւազ ցանուած են:
Ցանկին վրայ խիտ տերեւներ կը սողոսկին: Մացառնե-
րուն մէջ երգեցիկ թռչուններ բոյն դրած են, որոնց
ձայնէն առտունները կ'արթնան: Ածուռները լեցուն են
գոյնզգոյն ծաղիկներով, որոնց շուջը հազարաւոր թի-
թեռնիկներ ու մեղուներ կը թռչտին: Պտուղները ծա-
ռերէն վար կը կախուին: Խոշոր աւազան մը կ'ոռոգէ
այս պարտեզը իր բազմաթիւ խողովակներով:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

- 66. Օրինակի այս հասուածը, ստորագծել տնունները, եւ խաչանի-
շով ցոյց քալ յոյերը:
- 67. Սորվիլ այս հասուածին ուղղագրութիւնը:
- 68. Օրինակել հետեւեալ լուծումը

Լճակներով	Հասարակ անուն, յոգնակի գործիական:
Պարտեզ	Հասարակ անուն, եզակի ուղղական:
Մը	Անորոշ յօդ պարտեզին:
Ծառերու և	Հասարակ անուն, յօգնակի սեռական (և որոշիչ յօդ):
Տերեւները	Հասարակ անուն, յոգնակի ուղղական (ը որոշիչ յօդ):

Դ Ա Ս

45. Անուն մը ի՞նչպէս կը լուծուի. — Ա-
նուն մը լուծելու համար պէտք է ըսել թէ յա-
տուկ է կամ հաասարակ, եզակի կամ յոխնակի,
և որոշել թէ ինչ հորով է:

46. Յօղը ի՞նչպէս կը լուծուի. — Յօղը
լուծելու համար պէտք է ըսել թէ որոշիչ է կամ
անորոշ:

69. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի եւ գրաւոր

- 1. — Ձեր տան պարտեզը ի՞նչպէս է:
- 2. — Պարտեզին ամէն կողմը
ինչպէս զարդարուած է:
- 3. — Ի՞նչ ցանուած է ճամբաներուն վրայ:
- 4. — Ի՞նչ կը սողոսկի ցանկին վրայ:
- 5. — Ի՞նչ կը նշանակէ սողոսկիչ:
- 6. — Որո՞նք բոյն դրած են մացառներուն մէջ:
- 7. — Ի՞նչ ըսել է բոյն
դներ:
- 8. — Առտունները որոնց ձայնէն կ'արթնան:
- 9. — Ածուռները ին-
չով լեցուն են:
- 10. — Որո՞նք կը թռչտին ծաղիկներուն շուրջը:
- 11. — Ի՞նչ
կը կախուի ծառէն վար:
- 12. — Ո՞վ կ'ոռոգէ պարտեզը:
- 13. — Ինչով
կ'ոռոգէ:
- 14. — Ի՞նչ է աւազանը:
- 15. — Ի՞նչ է խողովակը:

10. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՏԵՐԵՒԸ

Քու ցօղունէդ զատուած դուն,
Խեղճուկ տերեւ ազագուն,
Ո՞ր կողմ կ'երթաս — Ձեմ զիտեր.
Մրրիկն օր մը խորտակեց
Նեցուկս իմին՝ կաղին մեծ:
Յողղող շունչով զեփիւռներ
Եւ հիւսիւսակն ալ հըզօր
Ձիս այն օրէն կը վարեն
Դէպի դաշտերն անտառէն,
Եւ լեռներէն դէպի ձոր
Կ'երթամ յաւէտ հովաբախ
Միշտ անտրտունչ և անվախ
Ուր ամէն բան կ'երթայ յար,
Թերթը վարդին հողմավար,
Մուրտին տերեւն ալ մուար:

ԱՌՆՈՒՏ

ՅԱՏԿԱՅՈՒՑԻՉ ԵՒ ՅԱՏԿԱՑԵԱԼ՝

ԺԵ. ԸՆՔԵՐՑՈՒԱՄ. — ՄԵՒ ԴՐԱՑՈՒՆ ՏՂԱՆ

Չաւէն մեր դրացիին տղան է: Տասերկու տարեկան չկայ դեռ, բայց դպրոցէն ելած ու կօշկակարի մը խանութը մտած է իբրև աշակերտ: Ամէն առտու կանուխ գործին կ'երթայ: Մինչև իրիկուն կը յօգնի, կ'աշխատի փոքրիկ օրական մը շահելու համար, որովհետև իր ընտանիքը աղքատ է, և կ'ուզէ անոր ապրուստին օգնել: Իրիկուններն ալ ուսման կը պարապի, որպէս զի միտքը կրթէ: Ամէն մարդ երանի կուտայ Չաւէնին մօրը անանկ զաւակ մը ունենալուն համար:

Հ Ր Ա. Հ Ա. Ն Գ Ն Ե Ր

70. Օրինակելայս հառուածը, ստորագծել յասկացուցիչները, և խաչանիշով ցոյց տալ յասկացեալները:

71. Սորվիլ այս հառուածին ուղղագրութիւնը:

72. Մէյմէկ յասկացուցիչ գտնել հետեւեալ անուններուն վրայ

• • • դուռը	• • • ղեկը	• • • բանակին
• • • ապակին	• • • անիւը	• • • վանդակը
• • • ծայրը	• • • շրջանակը	• • • ակօսան
• • • կոծը	• • • ժանեակը	• • • սփռոցը
• • • տերեւը	• • • գօտին	• • • կօշիկը
• • • ճիւղը	• • • ալիքը	• • • տետրակը

Դ Ա Ա

47. Յասկացուցիչ որո՞ւ կ'ըսուի: — Յասկացուցիչ կը կոչուի այն անունը որ բանի մը օրուն ըլլալը կը ցուցնէ, ինչպէս. վարդին թերթը:

73. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի և գրաւոր:

1. — Ո՞վ է Չաւէն: 2. — Քանի տարեկան է Չաւէն: 3. — Դպրոց կ'երթայ: 4. — Հապա հեր կ'երթայ ամէն առտու: 5. — Մինչև իրիկուն ինչ կ'ընէ հոն: 6. — Ինչո՞ւ կ'աշխատի: 7. — Ինչո՞ւ դրամ շահիլ կ'ուզէ: 8. — Իրիկունները ինչ կ'ընէ: 9. — Ինչո՞ւ ուսման կը պարապի: 10. — Ինչո՞ւ երանի կուտան Չաւէնին մօրը: 11. — Ի՞նչ ըսել է երանի տալ:
74. Լուծել հետեւեալ ըսուերը:

Դիւարակին փետուրը — Հարսին պտակը — Մարդու մը պարտքը — Տիկնոջ հայելին — Կատուին Թաթիկները — Ժամացոյցի մը սլաքը — Հաւերուն հակիթը — Թռչունի մը երգը — Տարուան գարունը — Կեանքին օրերը — Մօր մը խնամքը — Չաւկի մը սէրը

Լ Ո Ւ Ծ Մ Ա Ն Օ Ր Ի Ն Ա Կ

Մարդու	Հասարակ անուն, եզակի սեռական յատկացուցիչ պատճիւն
Մը	Անորոշ յօդ մարդու ին
Պատճիւր	Հասարակ անուն, եզակի ուղղական, յատկացեալ մարդու ին (ը որոշիչ յօդ):

Դ Ա Ա

48. Յասկացեալ որո՞ւ կ'ըսուի: — Յատկացուցիչին վերաբերող անունը յասկացեալ կը կոչուի, ինչպէս. վարդին թերթը:

49. Յասկացուցիչը ի՞նչ հոլով կ'ըլլայ: — Յատկացուցիչը սեռական հօլով կ'ըլլայ:

50. Յասկացուցիչը ի՞նչ հարցման կը պատասխանէ և ո՞ւր կը դրուի: — Յատկացուցիչը որո՞ւն հարցման կը պատասխանէ և յատկացեալէն առաջ կը դրուի, ինչպէս. որո՞ւն թերթը. — վարդին թերթը:

Ա Ծ Ա Կ Ա Ն

ՈՐԱԿԱԿԱՆ ԱԾԱԿԱՆ

ԺԸ. ԸՆԹԵՐՅՈՒՄԾ. — Ա.Յ.Յ.Ի.Ն.

Երէկ հայրս այգի մը տարաւ զիս : Ժամերով պտըտեցանք խիտ խիտ որթարուններուն մէջ : Փոքրիկ բուներէն վար կախուած էին խաղողի լեցուն ողկոյզները . ոմանք դեղին , ոմանք կարմրորակ , և ոմանք սև : Տհաս խաղողները կանանչ էին բոլորովին : Հասուններէն ոմանք կլոր էին , ոմանք ալ ձուածև : Ամէնքը մէկէն այնչափ աղուոր կերեւային լայն տերեւներուն մէջտեղէն որ պահ մը դանոնք ուտելու փափաքնիս մոռցանք , ու դիտելով միայն զուարճացանք :

Հ Ր Ա. Հ Ա Ն Գ Ն Ե Ր

- 75. Օրինակել այս հատուածը , ստորագծել որակական ածականները և խաչանիշով ցոյց տալ անունները .
- 76. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը .

Գ Ա Ս

51. Ի՞նչ է ածականը : — Ածականը բառ մըն է որ անունէ մը առաջ կը դրուի , և անոր մէկ հանգամանքը կը ցույնէ , ինչպէս . աղիաճ մառդ , երկու խնձոր :

52. Ածականները թիւ եւ հոյով ունի՞ն : — Ածականները ոչ թիւ ունին և ոչ հոյով , անուններու հետ կը գործածուին , և անշիտիտիս են :

53. Որակական ածականը ի՞նչ կը ցուցնէ : — Որակական ածականը անունի մը ինչպէս ըլլալը կը ցույնէ , և ի՞նչպէս հարցման կը պատասխանէ , զոր օրինակ . մախուր , սգեղ , պզտիկ :

77 Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի եւ գրաւոր .

- 2. — Երէկ հայրդ ո՞ր տարու զբեզլ :
- 3. — Ո՞ւր պտըտեցար :
- 4. — Ի՞նչ է որդարունը :
- 5. — Բուներէն վար ի՞նչ կախուեր էր :
- 6. — Ի՞նչ է ողկոյզը :
- 7. — Ի՞նչպէս էին տհաս խաղողները :
- 8. — Հասունները ի՞նչ ձև ունէին :
- 9. — Ի՞նչպէս կ'երեւային անոնք :
- 10. — Գինին ինչէ կը շինուի :
- 11. — Ի՞նչպէս կը շինուի :

78. Օրինակել հետեւեալները , ստորագծելով ածականները

Փոքրիկ տղան , կապոյտ երկինք , սև ամպեր , անկեղծ բարեկամը , պարարտ կովերը , հլու աշակերտը , աղուոր խնձոր մը , յստակ ջուր , սուր դանակը :

79. Հետեւեալ անուններուն զոյնը ցոյց տուող յարմար ածականներ գտնել .

Ածուխ , կաւիճ , գինի , մոխիր , նարինջ , խոտ , վարդ , յասմիկ , ծով , տերեւ , խնձոր , խաղող , ոսկի , գրատպատակ , սեր , նուռ , կեռաս , շրթունք , մարգրիտ , յակինթ , զերուխտ , փերուզակ , սուտակ , սատափ :

11. ՄՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԽԱՂՈՂԸ

Տերեւներուն մէջէն բարակ	Արցոնք են Թէ շաղի կամիլ ,
Որ սնդուտի կը նմանին ,	Ամպին ցանցէն ցողուած շիծ շիծ ,
Կուռ ողկոյզներ սեւ ու ճերմակ	Զմրուխտ աղեօք , վնոր նորածիլ ,
Վար կը կախեն հատիկներին :	Կամ երկինքէն ինկած ժըպիտ :
Ոմանք երկայն , ոմանք կլոր ,	Անոնք արցունք չեն , ոչ գոհար .
Մանրիկ , փայլուն և լուսանցիկ .	Ոչ ալ ծաղիկ , ոչ ալ կիտուած .
Տերեւներուն վըրայ խոշոր՝	Անուշ խաղող են գովարար ,
Կը կարծելին բանուած ծաղիկ :	Միրգ գոր միայն օրինեց Աստուած :

Չայն շինեցին լոյս հրեշտակներ
Մուրք մատերովն իրենց ճարտար ,
Այգիներուն աշնան նըւէր ,
Սիրուն տըղնք , ձեզի համար :

ՅՈՒՑԱԿԱՆ ԱԾԱԿԱՆ

ԺԹ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ — ԳՒՒՂԱՑԻՆԵՐՈՒՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Այս տարի ամառը գիւղ գացեր էինք: Ամէն օր դաշտերը կ'երթայի գիւղացիներուն աշխատանքը դիտելու: Այդ գործունեայ մարդիկ արտոյտին ձայնէն կ'արթննան առտուն, եւ կանուխ արտ կ'երթան: Բորորդները այն տաքին, արեւուն գիմացը, հնձուած խոտը կը շրջեն, որ չորնալով խար կը դառնայ: Հնձողները այն դաշտերուն մէջ հասունցած հասկերը կը քաղեն, եւ խուրձ կը կապեն: Զուարթ եւ առողջ ոգեւորութիւն մը կ'երեւայ այդ պարզ մարդոց մէջ:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

80. Թրինակել այս հասուածը, ցոյց թալ ռուսական ածականները ստորագծելով, եւ ցուցական ածականները՝ խաչանիշ դնելով:

81. Սորվիլ այս հասուածին ուղղագրութիւնը:

Դ Ա Ս

54. Յուցական ածականները ի՞նչ ցոյց կուտան: — Յուցական ածականները ցոյց կուտան այն անունները, որոնց վրայ կը խօսուի:

55. Յուցական ածականները որո՞նք են: — Յուցական ածականներն են. այս, աւ, սա, այդ, ա՛ս, այն, ան:

82. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի ու գրաւոր:

- 1. — Այս տարի ամառը ո՞ր գացեր էիք:
- 2. — Ամէն օր ո՞ր կ'երթայիր:
- 3. — Ի՞նչ ընելու համար:
- 4. — Ի՞նչ բանէ կ'արթննան այդ գործունեայ մարդիկ:
- 5. — Ի՞նչ ըսել է գործունեայ:
- 6. — Կանուխ ո՞ր կ'երթան:
- 7. — Ծորորդները ի՞նչ կ'ընեն:
- 8. — Խոտը չորնալով ի՞նչ կը դառնայ:
- 9. — Հնձողները ի՞նչ կ'ընեն:
- 10. — Ո՞ր կը փոխարեն խուրձերը:
- 11. — Ի՞նչ կը նշանակէ ոգեւորութիւն բառը:

83. Լուծել հետեւեալները.

Այդ մարդուն ճերմակ գոակը. — Այս անուշ գինին. — Այդ գորշ ամպերը. — Այն յդեղին մագերը. — Մարիամին կարմիր գլխարկը. — Քրօջը ոսկեղօծ գիրքը. — Հացին փշրանքը:

Լ Ո Ւ Ծ Մ Ա Ն Թ Ր Ի Ն Ս Կ

Այդ	Յուցական ածական մարդուն ին:
Մարդուն	Հասարակ անուն, եզակի սեռական, յատկացուցիչ գոյակ ին:
Ճերմակ	Որակական ածական գոյակ ին:
Գրակը	Հասարակ անուն, եզ. ուղղական, յատկացեալ մարդուն ին:

Ծանօթութիւն. — Ածականները լուծելու համար պէտք է ըսել թէ ի՞նչ տեսակ են, և որո՞ւ կը վերաբերին:

Դ Ա Ս

56. Ի՞նչ պարագայի մէջ կը գործածուին այս, այդ, այն: — Այս կը գործածուի մեզի ամէնէն մօտ եղող առարկայի մը համար, խայդ՝ քիչ մը հեռու եղողին, և այն՝ ամէնէն հեռու եղողին համար:

57. Յուցական ածականէն ետք եկող անունը յօդ կ'առնէ: — Յուցական ածականէն ետքը եկող անունը ն կամ Ը յօդը կ'առնէ, ինչպէս. այս մարդը, այն կատուն:

ՍՏԱՑԱԿԱՆ ԱԾԱԿԱՆ

Ի. ԸՆԹԵՐՅՈՒԱԾ. — ՆԱԽԱՆՁՈՑ ՏՂԱՆ

Մեր դպրոցին մէջ աշակերտ մը կայ Յովսէփ անու- նով: Նախանձոտ տղայ մըն է: Իր դասընկերներուն յաջողութիւնը ցաւ կը պատճառէ իրեն: Ինք ծոյլ է, եւ փոխանակ ուրիշներէն օրինակ առնելու՝ կ'ուզէ որ անոնք ալ իրեն նմանին: Մեր տետրակները կ'աղտոտէ, մեր գիրքերուն վրայ թանաքի բիծեր կը լեցնէ, որպէս զի մենք ալ պատժուինք: Ես կը ցաւիմ իր վրայ, եւ ձեռքէս եկածը կ'ընեմ համոզելու համար որ իր վար- մանքը փոխէ, որովհետեւ եթէ այսպէս շարունակէ, պիտի արտաքսուի դպրոցէն:

Հ Ր Ա Հ Ա Ն Ք Ն Ե Ր

- 84. Օրինակել այս հասուածք, ստորագծել անունները, եւ խաչանի- շով ցոյց տալ ստացական ածականները:
- 84. Սորվիլ այս հասուածին ուղղագրութիւնը:
- 85. Լուծել այս հասուածին անունները եւ ածականները:
- 86. Յարմար ստացական շաճականներ դնել կէտերուն տեղ:

Մարիամ . . . բարեկամուհիս այցելութեան եկաւ ինձի, . . . Դա- րեգին եղբորը հետ . . . մայրն ալ մէկտեղ էր: Մէկը . . . մատնոցը և ասեղը բերեր էր կարիս օգնելու համար, միւսն ալ . . . հողերը և գնդակ- ները: Ճաշէն ետքը մենք ալ . . . խաղալիկները մէջտեղ հանեցինք, և աղուոր խաղերով ժամանակ անցուցինք:

88. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի եւ գրաւոր.

- 1. — Ո՞վ է Յովսէփի 2. — Ի՞նչպէս տղայ է Յովսէփի 3. — Ի՞ր դասընկերներուն յաջողութիւնը ի՞նչ կը պատճառէ իրեն 4. — Ինք ի՞նչ- պէս է, և ի՞նչպէս կ'ուզէ որ ըլլան ուրիշները 5. — Ի՞նչ վնաս կու տայ ձեզի 6. — Ինչո՞ւ համար 7. — Ի՞նչ կ'զգաս դուն իրեն համար 8. — Ի՞նչ բանի կը համոզես զինքը 9. — Ի՞նչ պիտի պատահի եթէ իր վար- մունքը չփոխէ 10. — Ո՞ր տղաքը կ'արտաքսեն դպրոցէն:

Դ Ա Ս

58. Ստացական ածականները ի՞նչ կը ցու- ցնեն: — Ստացական ածականները բանի մը որուն ըլլալը կը ցուցնեն:

59. Ստացական ածականները որո՞նք են: — Ստացական ածականները հետեւեալներն են.

ԵԶԱԿԻ	ՅՈՒՆԱԿԻ
Իմ	Մեր
Քու	Ձեր
Իր	Իրենց

60. Ստացական ածականին վերաբերող անունները ի՞նչ գիր կ'առնեն իրենց վերջը: — Ստացական ածականին վերաբերող անունները ի- րենց վերջը ս, դ, ն կամ ռ գիրերը կ'առնեն, ինչպէս. իմ գլխարկս, իմ հոշիւնոցդ, իր ձեռ- նոցը, մեյ, ձեր, իրենց զգեսները:

Ս, Պ, Ն ԿԱՐ Ը ԳԻՐԵՐԸ ԱՍՏՅԱԿԱՆ ԱԾԱԿԱՆԻ ՏԵՂ

ԻԱ, ԸՆԹԵՐՑՈՒԱԾ.—ՍՆԵՐԳԵՐՆ ՈՒ ՇԵՐԱՄԸ

Սարգերը շերամին ըսին. «Յոգնութիւնդ շատ է, աշխատանքդ երկար է, բայց գործդ շատ պզտիկ: Նայէ, մենք երկու վայրկեանի մէջ որչա՛փ կտաւ կը հիւսենք: Գուն՝ օրերով կը դառնաս կը դառնաս, եւ հաղիւ կրնաս փոքրիկ բժոժդ լեցնել:» Շերամը պատասխանեց. «Գործերնիդ արագ է, բայց անօգուտ: Բոյսը աշխարհք մեաւքսս ոսկիով կը գնէ, և ոստայննիդ կ'աւլէ կը նետէ:»

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

- 89. Օրինակիլ այս հասուածը, եւ ստորագծել ստացական ւծականի տեղ գործածուած գիրերը եւ մասնիկները:
- 90. Սորվիլ այս հասուածին ուղղագրութիւնը:
- 91. Ստացական ւծականներ դնել այս հասուածին մէջ **ս, դ, ն** գիրերը եւ **նիս, նիդ, նին** մասնիկները ունեցող բառերուն առջև: Օրինակ. — Սարգերը շերամին ըսին. «Քու յոգնութիւնդ, և ին.»:

Գ Ա Ս

61. Ո՞ր գիրերը կրնան *ստացական ւծականի*ն տեղը բռնել: — Եզակիի մէջ **ս, դ, ն** կամ՝ **ը** գիրերը կրնան *ստացական ւծականին տեղը բռնել, ինչպէս*. գիրքս, հողք, մասնիկն:

Յոքնակիի մէջ՝ միավանկ բառերու համար՝ *երնիս, երնիդ, երնին* մասնիկները, *ինչպէս*. գիրքերնիս, հողերնիդ, սիրտերնին:

Բազմավանկ բառերու համար՝ *նիս, նիդ, նին* մասնիկները, *ինչպէս* *ասեղնիս, գլխարկնիդ, հագուստնին*:

92. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի եւ գրաւոր:

- 1. — Սարգերը ինչ ըսին շերամին:
- 2. — Ի՞նչպէս կենդանի է սարգը:
- 3. — Ո՞րք կը գտնուի:
- 4. — Սարգին հիւսած կտաւը ի՞նչ կը կոչուի:
- 5. — Մարդուս օգուտ ունի:
- 6. — Շերամը ի՞նչ պատասխանեց սարգերուն:
- 7. — Ի՞նչ տեսակ կենդանի է շերամը:
- 8. — Շերամը ի՞նչ կը շինէ:
- 9. — Ո՞րք կը շինէ:
- 10. — Շերամին շինած փոքրիկ բոյնը ի՞նչ կը կոչուի:
- 11. — Շերամը ի՞նչպէս դուրս կ'ելլէ բժոժին մէջէն:
- 12. — Շերամը ի՞նչով կը սնի:

12. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԾԵՆԾԸ

Մարգար կու լար	Ու դեռ Մարգար
Կ'ուզէր շարար .	Կը պոռչըտար .
Մայրիկն ըսաւ	«Հիմայ բերէք»
Իր տղուն . «Լաւ,	Կ'ուզեմ պէպէք»
Երկու հատ առ	Իր ձայներէն
Ստիպն մի լար»	Հայրը վերէն
Կերաւ տղան	Վագեց շուտ վար
Շարարն անձայն	Տըղուն բով չար .
Ու պահանջեց	« — Պէպէք կ'ուզես
Նաւակը մեծ .	Նուէր տամ բեզ»
«Առ նաւակն ալ,	Աղուոր ծեծ մ'էր
Բայց պէտք չէ լալ»	Տրուած նուէր»
« — Բերէք ինձ ջուր,	Լըռեց տղան
Աման մը ջուր,	Չըհանեց ձայն»
Որուն վրայ	Բիւր երանի
Նաւըս ծրփայ»	Պէտք է տըրուի
« — Ա՛ռ բեզ ջուրն ալ»	Չաւակներուն
« — Ինձ պէտք է տալ	Որ խտուածին
Պէպէք մ'աղուոր	Մերթ կը տեսնեն
Որ ըլլայ նոր»	Ծընողքներնէն»

ԹՈՒԱԿԱՆ ԱԾԱԿԱՆ

ԻԲ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — ՀՌԻՍՆԻ ԲԱՐՅԵԿԱՍՏՈՒ ՀԻՆ.

Այսօր տասներորդ անգամ ըլլալով այցելութեան գացի բարեկամուհիս՝ Մաննիկին, որ հիւանդ է հինգ օրէի վեր: Խեղճ աղջիկը սաստիկ տենդէ մը կը տանջուի: Գիշերները երեք չորս անգամ կ'արթննայ, գլուխը կրակներու մէջ կ'այրի: Երկու կարող բժիշկներ կը դարմանեն զինքը, չորս հինգ հոգի ալ վրան կը հսկեն: Ես առաջին անգամ է որ անանկ ծանր հիւանդ մը կը տեսնեմ, և իր չարչարուիլը դիտելով՝ շատ կը յուզուիմ: Աւելի աղէկ էր որ ես տառապէի, քան թէ անոր տառապիլը տեսնէի:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

- 93. Օրինակել այս հասուածը, եւ ստորագծել քուական ածականները:
- 94. Սորվիլ այս հասուածին ուղղագրութիւնը:
- 95. Լուծել այս հասուածին անունները եւ ածականները:

Դ Ա Ս

62. Որո՞նք կ'ըսուին քուական ածական = — Թուական ածական կ'ըսուին այն բառերը, որոնք անունի մը քանի հաս կամ քանիերորդ ըլլալը կը ցուցնեն, ինչպէս . մեկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, եօթը, ութը, ինը, տասը, ևլն. : Առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ, վեցերորդ, եօթներորդ, ութներորդ, իններորդ, տասներորդ, ևլն. :

96. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի եւ գրաւոր.

1. — Քանի անգամ այցելութեան գացիր Մաննիկին: 2. — Ինչո՞ւ գացիր: 3. — Ի՞նչ է իր հիւանդութիւնը: 4. — Ի՞նչ կը պատահի իրեն զիշերները: 5. — Ո՞վ կը դարմանէ զինքը: 6. — Ո՞վ կը հսկէ վրան: 7. — Այդպէս հիւանդ տեսնծ ես ուրիշ անգամ: 8. — Ի՞նչ կ'զգաս անոր չարչարուիլը տեսնելով:

97. Թուական ածականներ դնել կէտերուն տեղ:

Յակոբ իր օման . . . յարկը վարձու տուաւ — Ես . . . տարեկան էի էրր դպրոց մտայ — . . . տարի աշխատեցայ ուսմանս շրջանը աւարտելու համար — Մայրս . . . տարեկան էր երբ մեռաւ — Յունիս՝ տարուան . . . ամիսն է — Պետրոս դպրոցին . . . կարգին աշակերտներէն է — Եղբայրս իր ամուսնութեան . . . տարին մեռաւ:

13. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԾՈՒՆԵՆ ՈՒ ԲՈՅՑ

Ծուխը կ'ըսէր բոցին՝ իր մօր լուսավառ
— Մայրիկ, ըսէ, ի՞նչ է աս
Որ բեզմէ կեանք առի, բայց միշտ եմ խաւար,
Մինչդեռ դուն միշտ կը շողաս
— Աղջիկս, ըսաւ բոցն անոր,
Անլուր բան չէ ոչ ալ նոր,
Եւ դուն ալ փաստ մ'ես հիմակ
Որ հոս մարդ լոկ իր բուն լոյսովն է փայլուն
Բաւական չէ որ տըղաք
Ծընին հօրմէ մեծանուն

Լ.Ը ՊՕՆԺԷՆԻ

Ա Ն Ո Ր Ո Շ Ա Ծ Ա Կ Ա Ն

ԻԳ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ.—ԻՆՔՆՍԱՀԱՒԱՆ ԱՂՋԻՆԸ

Լուսիկ անմիտ աղջիկ մըն է: Ինքզինքը շատ խեղացի և շատ հմուտ կը կարծէ: Հպարտութեամբ ամէն մարդու կը պատմէ դպրոցին մէջ իր ստացած գովեստները: Բոլոր ծանօթները վրան կը խնդան: Ինքզինքէն զատ ուրիշ մէկուն չի հաւնիր, և այնչափ կարեւորութիւն կու տայ իր անձին որ մարդ չի կրնար ծիծաղը զսպել: Ամէն մէկ խօսքին մէջ իր ինքնահաւանութեան ապացոյցը կայ: Այս պատճառաւ բնաւ բարեկամ չունի:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

- 98. Օրինակել այս հասուածը, եւ ստորագծել ակորոշ ածականները:
- 99. Սորվիլ այս հասուածին ուղղագրութիւնը:
- 100. Անորոշ ածականներ դնել կէտերուն տեղ:

. . . տղու քնձոր տուի . . . տղոց հետ բարեկամ ըլլալը անօգուտ է . . . անգամ քեզի խօսեցայ . . . վարագոյր լուալ տուի: Այս հագուստը նոր է, բայց . . . հագուստս շատ հին է: . . . տղայ կար դպրոցին մէջ: . . . պտուղները կ'ուտուին:

Դ Ա Ս

63. Անորոշ ածականները փոռ՞ն են. — Անորոշ ածականները անոնք են որ անորոշ իմաստ մը կու տան անունին, ինչպէս. արեւն, ուրիշ, արեւն մէկ, միւս, նոյն, քանի մը, ասանկ, ասանկ, անանկ, այսչափ, այդչափ, այնչափ, քանի՞, ի՞նչպէս, ո՞ր, ևլն:

101. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի եւ գրաւոր.

1.—Լուսիկ ինչպէս աղջիկ է: 2.—Ինքզինքը ինչ կը կարծէ: 3.— Ի՞նչ կը պատմէ ամէն մարդու: 4.— Ի՞նչպէս կը պատմէ: 5.— Ի՞նչ է հպարտութիւնը: 6.— Ծանօթները ինչ կ'ընեն: 7.— Որո՞ւ կը հաւնի: 8.— Ի՞նչ կայ ամէն մէկ խօսքին մէջ: 9.— Ինքնահաւանութիւնը ինչ է: 10.— Ապացոյցը ինչ է: 11.— Շատ բարեկամ ունի՞: 12.— Ինչո՞ւ բարեկամ չունի:

102. Որոշել հետեւեալ նախադասութեանց մէջ զտուած ածականներուն տեսակները:

Մեծ օժեակները բռնուած էին այս գիշեր: — Երկու անգամ ձեզի եկայ, և ձեր սպասուելին միայն գտայ: — Իմ մեծ աղջիկս ճամբորդութիւն պիտի ընէ այս տարի: — Ամէն ամառ օդափոխ ւժեան կ'երթամ իմ հօրս հետ: — Երեք զաւակ ունիմ. երկուքը դպրոց կ'երթան, մէկն ալ տունը կը կենայ: — Ո՞ր աղջկան հաւնեցար: — Պատիկ ձիերը շատ անգամ մեծերէն աւելի սիրուն կ'ըլլան:

14. ԱՐՏԱԱՆՈՒԹԻՒՆ.—ԱՄՈՒՂ ՀԱՍԱԿ

ԵՒ ՊՍԵՐԱՊ ՏԱԿԱՌԸ

Հասուն հասկեր երբ զըլուինին
Կը խոնարհեն մինչեւ գետին,
Սա մէկն ինչո՞ւ բարձր է այնքան:
— Սին զլսուն մէջ հասեր չկան:
— Սա տակառն ալ՝ զոր այգեպան
Կը զըլտորէ դէպի հընձան,
Ինչո՞ւ կ'ընէ աղմուկ այնչափ.
— Որովհետեւ մէջն է պարապ:

ՊՈՒՌԿԵՆ

ԴԵՐԱՆՈՒՆ

ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

ԻԳ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ.—ԾՕՂՂՆԵՐԸ ԵՒ ՊՑՈՒՂՆԵՐԸ

Ամէն իրիկուն երբ դպրոցէն դառնամ, քրոջս՝ Ատ-
րինէին հետ պարտէզ կ'իջնեմ: Ես պտուղները շատ կը
սիրեմ, ինքն ալ՝ ծաղիկները: Ինք ինծի համար դեղ-
ձեք, ծիրաններ կը փրցնէ. ես ալ իրեն համար վարդեր,
յափուկներ կը ժողվեմ: Ինք ինձմէ աւելի շուտ կը քալէ.
Ես ալ կը վազեմ որ իրմէ առաջ անցնիմ: Այսպէս աղէկ
մը զուարճանալէ ետքը՝ մեր կողովները պտուղներով ու
ծաղիկներով կը լեցնենք, և կը տանինք մեր մայրիկին,
որ շատ կ'ախորժի անոնցս:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

- 103. Օրինակի այս հասուածը, ստորագծել անձնական դերանուն-
ները եւ ա, բ, գ գիրերով ցոյց տալ դէմքերը:
- 104. Սորվիլի այս հասուածին ուղղագրութիւնը:

Դ Ա Ս

64. Դերանունը ի՞նչ է: — Դերանունը բառ
մըն է, որ անունին տեղը կը դրուի զայն չկրկնե-
լու համար, և ունի թիւ, հոյով, դէմք:

65. Դէմքը քանի՞ է: — Դէմքը երեք է.
առաջին, երկրորդ, երրորդ:

66. Որո՞նք են անձնական դերանունները: —
Անձնական դերանունները հետեւեալներն են.

Ա. Դէմք	ԵԶԱԿԻ	ՅՈՒՆԱԿԻ
Բ. յ	Ես	Մենք
Գ. յ	Դուն	Դուք
	Ինք	Իրենք

105. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի եւ գրաւոր.

- 1.—Ամէն իրիկուն՝ երբ դպրոցէն դառնաս, ինչ կ'ընես
- 2.—Դուն ինչ կը սիրես
- 3.—Ատրինէն ինչ կը սիրէ:
- 4.—Ինք ինչ կը փրցնէ քեզի համար
- 5.—Դուն ինչ կը ժողվես իրեն համար
- 6.—Ետքը ինչ կ'ընէք:
- 7.—Ինչո՞ւ կը տանիք ձեր մայրիկին:

106. Օրինակի եւ զոց սորվիլ հետեւեալ հոյովումը.

	ԵԶԱԿԻ	ՅՈՒՆԱԿԻ
Ուղղ.	Ես	Մենք
Սեռ.	Զիս	Զմեզ
Տրակ.	Իմ, իմին	Մեր, մերին
Հայց.	Ինձ, ինծի	Մեզ, մեզի
Բաց.	Ինձմէ, ինէ	Մեզմէ, մենէ
Գործ.	Ինձմով	Մեզմով

15. ԱՐՏԱԱՆՈՒԹԻՒՆ.—ՄՍՅՈՐԸ ԵՒ ԵՐԿՈՒ ԶԱՒԱԿՆԵՐԸ

Մեր Թաղին մէջ խեղճ աղբատ
Մայր մը կար շատ երջանիկ.
Ունէր զաւակ երկու հաստ.
Մէկը մեծ՝ միւսն էր փոքրիկ:

Ասոնք մէկտեղ կ'ապրէին
Փայփայելով գիրար միշտ.
Կապուած սիրով կամոզին՝
Զէին ճանչցած երբեք վիշտ:

Օր մը մեծը մօրն ըսաւ.
« Գիտեմ, զիս շատ կը սիրես
Բայց չես կրնար դուն բընաւ
Սիրել, որքան ես ըզքեզ »

Մայրը հարցուց իր տղոն.
« Ինչո՞ւ կ'ըսես ատանկ բանս
— Երկու զաւակ ունիս դուն,
Գոչեց, ես՝ մնայ մը միայն »

ՅՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

ԻԵ. ԸՆՅԵՐՑՈՒԱԾ. — ՓՈՒԳՐԻԿ, ԿԱՏՈՒՆԵՐԸ

Հօրեղբայրս դուրսէն երեք հատ փոքրիկ կատու զրկեր է ինծի: Ասոնցմէ մէկը ճերմակ՝ միւսը շէկ՝ երրորդն ալ գորշ է: Երէկ իրիկուն մեր տան բակին մէջ շատ մը խաղացին: Ճերմակ կատուն ամէնէն կայտառն է: Պոչին գնդակ մը կապեցի, ու սկսաւ ինք իր վրայ դառնալ: Շէկը ետեէն վազեց, անոր ալ առջին խնձոր մը նետեցի: Իսկ գորշը՝ ատոնց վազվզելը տեսնելով՝ շփոթած կը նայէր: Քանի մը ժամ զուարճացայ անոնցմով:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

- 107. Օրինակել այս հասուածը, ստորագծել ցուցական դերանունները, եւ ա, բ, գ գիրերով ցոյց տալ դեմքերը:
- 108. Սորվիլ այս հասուածին ուղղագրութիւնը:

Դ Ա Ս

67. Յուցական դերանունները որո՞նք են: —
Յուցական դերանունները հետեւեալներն են.

	ԵԶԱԿԻ	ՅՈՒՆԱԿԻ
Ա. Դեմք	Այս, աս, ասիկա, սա	Ասոնք
Բ. »	Այդ, ատ, ատիկա	Ատոնք
Գ. »	Այն, ան, անիկա	Անոնք

68. Ան, անիկա, անոնք ուրիշ ո՞ր տեսակ դերանունի տեղ կը գործածուին: — Ան, անիկա, անոնք իբրև անձնական դերանուն ալ կը գործածուին:

109. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի եւ գրաւոր.

- 1. — Հօրեղբայրդ ի՞նչ զրկեր է բեզի:
- 2. — Ասոնք ի՞նչպէս են:
- 3. — Ի՞նչ ըրին երէկ իրիկուն: — 4. Ի՞նչ ըրիր ճերմակ կատուին: —
- 5. Ան ի՞նչ ըրաւ:
- 6. — Շէկը ի՞նչ ըրաւ:
- 7. — Դուն ի՞նչ նետեցիր անոր առջին:
- 8. — Գորշը ի՞նչ կ'ընէր:
- 9. — Կրցար զուարճանալ անոնցմով:

110. Օրինակել եւ գոց սորվիլ հետեւեալ հոլովումը.

	ԵԶԱԿԻ	ՅՈՒՆԱԿԻ
Ուղղ. Հայց.	Այս, աս, ասիկա	Ասոնք
Սեռ. Տրակ.	Ասոր	Ատոնց
Բաց.	Ասիկէ	Ատոնցմէ
Գործ.	Ասով	Ատոնցմով

16. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՊՍ. ՀԱ. ՊՍ. Ն ՀՐԵՇՏԱԿԸ

Հսկէ, հրեշտակ, իմ զարթումիս,
Այնպէս ըսաւ բանի որ Տէր.
Մահճիս մօտիկ պահպանէ զիս
Երբոր ննջեմ ամէն զիշերս
Դու՞ ունեցիր անճիս անզօր,
Ու մի թողուր զիս մենաւոր,
Խօսէ՛ ճամբան ինձ շարունակ,
Եւ երբ մըտիկ կ'ընեմ բեզ լուռ.
Որպէս զի վար չիմամ մինակ,
Բայի հրեշտակ, ձեռքդ ինծի տուր:

ՏԻԿԻՆ ԹԱՍԹԻՒ

ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐՈՒՆ ՀՈԼՈՎՈՒՄԸ

Ա. Դ Է Մ Ք

	Եզակի	Յօքնակի
Ուղղ.	Ես	Մենք
Հայց.	Զիս	Զմեզ
Սեռ.	Իմ, իմին	Մեր, մերին
Տրակ.	Ինձ, ինձի	Մեզ, մեզի
Բաց.	Ինձմէ, ինէ	Մեզմէ, մենէ
Գործ.	Ինձմով	Մեզմով

Բ. Դ Է Մ Ք

	Եզակի	Յօքնակի
Ուղղ.	Դու	Դուք
Հայց.	Զքեզ	Զձեզ
Սեռ.	Դու, քուկին	Ձեր, ձերին
Տրակ.	Դեզ, քեզի	Ձեզ, ձեզի
Բաց.	Դեզմէ, քենէ	Ձեզմէ, ձենէ
Գործ.	Դեզմով	Ձեզմով

Գ. Դ Է Մ Ք

	Եզակի	Յօքնակի
Ուղղ.	Ինք	Իրենք
Հայց.	Զինք	Զիրենք
Սեռ.	Իր, իրեն	Իրենց
Տրակ.	Իրեն	Իրենց
Բաց.	Իրմէ	Իրենցմէ
Գործ.	Իրմով	Իրենցմով

ՅՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐՈՒՆ ՀՈԼՈՎՈՒՄԸ

Ա Յ Ս

	Եզակի	Յօքնակի
Ուղղ. Հայց.	Այս, աս, ասիկա	Ասոնք
Սեռ.	Ասոր	Ասոնց
Բաց.	Ասկէ	Ասոնցմէ
Գործ.	Ասով	Ասոնցմով

Ա Յ Դ

	Եզակի	Յօքնակի
Ուղղ. Հայց.	Այդ, ասդ, ասիկա	Ասոնք
Սեռ.	Ասոր	Ասոնց
Բաց.	Ասկէ	Ասոնցմէ
Գործ.	Ասով	Ասոնցմով

Ա Յ Ն

	Եզակի	Յօքնակի
Ուղղ. Հայց.	Այն, ան, անիկա	Անոնք
Սեռ.	Անոր	Անոնց
Բաց.	Անկէ	Անոնցմէ
Գործ.	Անով	Անոնցմով

Ս Տ Ա Յ Ա Կ Ա Ն Դ Ե Ր Ա Ն Ո Ւ Ն

ԻԶ. ԸՆԹԵՐՅՈՒԱԾ. — ՄԵՐ ՊՈՒՊՐՈՒԿՆԵՐԸ

Մայրիկը նոր պուպրիկներ գնեց խնձի և Անայիսին համար: Իմինս խարտեաչ է, իրենը թուխ: Իմինս գորշ աչքեր ունի, իրենը սև: Անայիս իրենը չի սիրեր, իմս կ'ուզէ: Այս պատճառաւ վէճը պակաս չէ մեր մէջէն: Մայրիկը շատ կը վշտանայ այս բանին համար և կ'աշխատի զմեզ հաշտեցնել: Ես ալ միտքս դրի որ իմս Անայիսին տամ, և անորը ես առնեմ:

Հ Ր Ա Ղ Ա Ն Գ Ն Ե Ր

- 411. Օրինակել այս հաստ ածը եւ ստորագծել ստացական դերանունները:
- 412. Ոորովի այս հաստ ածին ուղղագրութիւնը:
- 413. Լուծել այս հաստ ածին բոլոր անունները եւ դերանունները:

Օ Ր Ի Ն Ա Կ

Իրինս	Ստացական	դերանուն	եզակի	ուղղական	Ա.	Դէմք:
Իրենը	»	»	»	»	Գ.	»

Դ Ա Ս

69. Ստացական դերանունները ի՞նչ կը ցուցնեն: — Ստացական դերանունները բանի մը սրուն ըլլալը կը ցուցնեն, և հետեւեալներն են.

Ե Ձ Ա Կ Ի

Ա.	Դեմք	Իմս, իմինս	Մերը, մերինը
Բ.	»	Քուկդ, բուկինդ	Ձերը, ձերինը
Գ.	»	Իրը, իրենը	Իրենցը

Յ Ո Ք Ն Ա Կ Ի

Ա.	Դեմք	Իմիններս	Մերինները
Բ.	»	Քուկիններդ	Ձերինները
Գ.	»	Իրենները	Իրենցները

72. Դերանունները լուծելու համար ի՞նչ պէտք է ըսել: — Դերանունները լուծելու համար պէտք է ըսել անոնց տեսակը, հոյովը, դեմքը:

444. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ ընտանացի եւ գրաւոր.

- 1.— Մայրիկը ի՞նչ գնեց բեզի և Անայիսին համար: 2.— Քուկինդ ի՞նչպէս է: 3.— Աչքերնին ի՞նչպէս են: 4.— Գո՞հ էք ձեր պուպրիկներէն: 5.— Վէճ ունե՞ք մէջերնիդ: 6.— Ի՞նչ պատճառաւ: 7.— Ձեր մայրիկը ի՞նչ կ'ընէ ձեր վէճը տեսնելով: 8.— Դուն միտքդ ի՞նչ դրի: 9.— Ինչո՞ւ համար:

17. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՌԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆԸ

Երկրի մէջ ամէն իր
Ունի մաս արեւէն,
Փուշն ունի վարդ կարմիր
Եւ զիշերն այգն իրեն:

Էն տուաւ խոտ մարգին
Դաշտերուն հունձը բեղուն,
Եւ օղին գոռ արծուին,
Մացառներ բոյներուն:

Ծառն ունի դալարին,
Մեղուն մեղր անուշիկ,
Հոսող ջուրն իր հծծիւն,
Եւ շիրիմն իր երկինք:

Լաւագոյն կեղորնի
Իրերն հոս կը ձգտին,
Ծաղկին պէտք ծիլն ունի,
Եւ սիրտն ալ մտերմին:

ՏԸ ԼՕՆԼԻ

ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

ԻԷ. ԸՆԹԵՐՅՈՒԱԾ.—ԾՈՅԼ ԱՂԶԻԼԸ

Վարդուհի ծոյլ աղջիկ մըն է, որ անտուները ուշ կ'ելլէ անկողնէն: Սենեակը տակնուվրայ կը թողու: Ասդին անգին կը ձգէ զգետանները, որոնք փոշիին մէջ կ'աղտոտին: Ամէն բան խառնիխուռն կը նեաէ դարանին մէջ, որուն գորոցները բաց կը մնան միշտ: Կօշիկներէն մէկը անկողնին ներքեւ է, միւսը աթոռի մը տակ: Իր փոքրիկ զեղձանիկն իսկ, զոր այնքան կը սիրէ, շատ անգամ անօթի կը մնայ իր ծուլութեան պատճառաւ:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

115. Օրինակել այս հասուածը, ստորագծել յարաբերական դերանունները, եւ խաչանիշով ցոյց տալ յարաբերեալները:

Գ Ա Ս

71. Յարաբերական դերանունը ի՞նչ է: — Յարաբերական դերանունը որ բառն է, և իրմէ առաջ յիշուած բառ մը կը յարաբերէ. այդ բառն ալ կ'ըսուի յարաբերեալ:

72. Յարաբերական դերանունը թիւ, դէմք եւ հոյս ունի՞: — Յարաբերական դերանունը թիւ ու հոյս ունի, և երեք դէմքի համար ալ կրնայ գործածուիլ:

73. Ի՞նչպէս կը հոլովուի յարաբերական դերանունը. — Յարաբերական դերանունը հետեւեալ կերպով կը հոլովուի:

	ԵԶԱԿԻ	ՅՈՒՆԱԿԻ
Ուղղ.	Որ	Որոնք
Հայց.	Չոր	Չորս
Սեռ.	Որուն	Որոնց
Տրակ.	Որու	Որոնց
Բաց.	Որմէ	Որոնցմէ
Գործ.	Որով	Որոնցմով

116. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի եւ գրաւոր.

1.— Ի՞նչպէս աղջիկ է Վարդուհի 2.— Ե՞րբ կ'ելլէ անկողնէն 3.— Իր սենեակը ի՞նչպէս կը թողու 4.— Չգետանները ի՞նչ փիճակի մէջ կը ձգէ: — Ի՞նչ խնամք պէտք է տանիլ զգետաններուն որ մարուր մնան 6.— Կօշիկները ո՞ւր կը թողու 7.— Իր փոքրիկ զեղձանիկը կը խնամէ: 8.— Ի՞նչ է զեղձանիկը 9.— Ուրիշ երգեցիկ թռչուններ գիտէր:

117. Լուծել հետեւեալ դերանունները:

Որոնք, մենք, մեզ, անոնց, մերը, որ, ատոնք, բուրդ, զայն, իրենք, որուն, իմինս, իրենցմէ, անոնք, ատոնցմով, որմէ, ձերինը, ատոնցմէ, բեզի:

18. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՏՂՈՒ ՀԱՐՅՈՒՄ

— Հայրիկ, հով կ'անցնի ամէնէն արագ,
Հովերը արդեօք, զետը սըրընծաց,
Արդեօք ասոնպս որ կ'իյնայ վայրահակ
Առկայծ ակօսով բոցի պէս վառուած:

Արդեօք ամպերը, ծնունն եմերային,
Եւ կամ օդապար ծիծեռն ուղեւոր,
Բոցածաւալ փոնջն արդեօք հրժիռին,
Երկինքին շանթը թէ փայլակն անոր:

Աւազը խըլուած եզերքէն ծովուն,
ձերմակ օճառին պղպղջակն ոսին,
Օդապարիկը, տերեւն ազազուն,
Երազը, արդեօք դերձանը կոյսին:

— Իցիւ թէ անգէտ մընաս միշտ, որդեակ,
Անուշ և տըխուր սա փորձառուժեան,
Թէ ինչ որ կ'անցնի ամէնէն արագ,
Մարդոց չապրելու օրերն են միայն:

ՎԻՓՈՆԹ ՏԸ ԺԻՌԷԼ

Ա Ն Ո Ր Ո Շ Դ Ե Ր Ա Ն Ո Ւ Ն

ԻՇ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — ՄԵՐ ՆՈՐ ՏՈՒՆԸ

Անցեալ տարի մեր տունը այրեցաւ և այս տարի հայրս ուրիշ մը շինել տուաւ: Երէկ եկանք բնակիլ այս տան մէջ: Սենեակները բոլորն ալ այնչափ աղուոր են որ չեմ գիտեր թէ ո՞րը ընտրեմ ինձի համար: Մէկը վարդապոյն է, միւսը դեղին, ուրիշ մը կապոյտ, և ամէնքն ալ իրարմէ տարբեր նկարներով զարդարուած: Ամէն մէկուն մէջ իրեն յարմար կարասիներ զետեղուած են: Ոմանք սնդուսով կահուած են, ոմանք ալ թաւիչով. ամէնքն ալ իրարմէ սիրուն և ճաշակաւոր են:

Հ Ր Ա. Հ Ա Ն Գ Յ Ն Ե Ր

118. Օրինակել այս հասուածը եւ ստորագծել ակոռոջ դերանունները:

119. Սորվիլ այս հասուածին ուղղագրութիւնը:

120. Ակոռոջ դերանուններ զնել հետեւեալ կէտերուն տեղ.

. . . ալ հոն էին . . . կար հոն: Այս երկուքն ալ . . . են . . . կ'ուզես ինձմէ: Իմ ուզածս աս չէ, . . . է: . . . բաւական է: Ասոնցմէ . . . իմն է, . . . քուկդ է: . . . չունիմ քեզի տալու:

Գ Ա Ս

74. Ակոռոջ դերանունն որո՞ւ կ'ըսուի:— Ակոռոջ կ'ըսուին այն գերանունները որ անորոջ գաղափար մը կ'արթնցնեն մեր մտքին մէջ. ինչպէս, ամենիք, մեկը, ոչնակ, իրար, բան մը, ինչ որ, ոչինչ, ամեն մեկը, ոչ մեկը, ուրիշը, միեւնոյնը, միւսը, այսպիսիք, ո՞րը, ո՞րչափը, ի՞նչ, և այլն:

121. Պատասխանել հետեւեալ հարցոյ մներուն բերանացի եւ գրաւոր

1.— Ձեր տունը ի՞նչ եղաւ անցեալ տարի: 2.— Հայրդ ի՞նչ քրաւ այս տարի: 3.— Ե՞րբ եկաք բնակիլ այդ տան մէջ: 4.— Ո՞ր սենեակը ընտրեցիր քեզի համար: 5.— Սենեակները ի՞նչպէս են: 6.— Ի՞նչ զետեղուած է ամէն մէկուն մէջ: 7.— Ի՞նչպէս կահուած են անոնք:

122. Մէյմէկ խօսք շինել հետեւեալ դերանուններով.

Ո՞րը, քուկդ, ան, մէկը, ասոնք, բան մը, իրեն, քեզմէ, դուն, մերը, ան, ամէնքը, ատիկա:

Օրինակ.— Այս գրիչներէն ո՞րը կ'ուզես:

123. Անուններ զնել հետեւեալ խօսքերուն մէջ գտնուած դերանուններուն տեղ.

Ո՞րը աղուոր է:— Անիկա ստախօս տղայէն չ'ախորժիր:— Քովս մեկը չկայ:— Քրոջս տուէք աստիճան:— Բան մը չտեսայ:— Եղածները պատմեցի իրեն:— Բեզմէ զատ մեկը չունիմ:— Դուն իմ բարեկամս ես:— Մեր տունը երեք սենեակ ունի, մերը՝ հինգ հատ ունի:— Ամենիք հոն նստեր էին:— Ես շինած եմ ասիկա:

Օրինակ.— Սենեակը աղուոր է:— Գրիգոր ստախօս տղայէն չ'ախորժիր:

19. ԱՐՏԱՍԱՐՈՒԹԻՒՆ

Սողոկելով բաղեղն ելաւ պատն ի վեր. վարդենիին հասակն հոնկէ կը ծաղրէր: Թուփը փոքրիկ ըսաւ. «Նայէ առանձին ես բարձրացայ այս կէտին. Բայց դուն որ սէգ ես այդքան, կը սողայիր առանց պատին օգնութեան»:

Բ Ա Յ

Ե Ն Յ Ա Կ Ա Յ

ԻՅ. ԸՆԹԵՐՅՈՒԱԾ. — ՀՈՎԻՒԸ

Արևը ծագելուն պէս՝ հովիւր իր հօտը կ'առնէ, դաշտը կը տանի արածելու համար: Գառնուկը, ուլը կը ցափուտեն խոտերուն վրայ, իրենց մօր քով: Պահապան շունը անոնց վրայ կը հսկէ: Եւ հովիւր կանանչ մարգիւն վրայ տարածուած՝ կը նիրհէ ծառի մը հովանիին տակ: Անուշ հովը կը փչէ: Սրինգի մը ձայնը կը հնչէ անտառին խորէն, և լեռը արծազանգ կու տայ: Թռչունը կ'երգէ մացառին մէջ, ոչխարը կը մայէ, և օդը կը լեցուի այս բնական երաժշտութեամբ:

Հ Ր Ա: Հ Ա Ն Գ Ն Ե Ր

- 124. Օրինակել այս հասուածը, եւ ստուգծել բայերը:
- 125. Սորվիլ այս հասուածին ուղղագրութիւնը:
- 126. Խօսքեր շինել հետեւեալ եկրականերուն գործողութիւնը ցուցնող բայերով.
Եկրականեր.—Տղայ, թռչուն, ձուկ, զանգակ, շուր, կրակ, հով:
Օրինակ.—Տղան կու լայ:
- 127. Խօսքեր շինել հետեւեալ բայերուն յարմար եկրականեր գտնելով.
Բայեր.—Կը բառաչէ, կը հաչէ, կը կորէ, կը ինդայ, կը փայլի, կը թռչի, կը հոսի:
Օրինակ.—Կովը կը բառաչէ:

128. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի եւ գրաւոր.

1.—Հովիւր երբ իր հօտը արածելու կը տանի: 2.—Ո՞վ կը ցափուտէ խոտերուն վրայ: 3.—Ո՞վ կը հսկէ անոնց վրայ: 4.—Հովիւր ի՞նչ կ'ընէ: 5.—Ի՞նչ ձայն կը հնչէ անտառին խորէն: 6.—Ո՞վ արծազանգ կու տայ: 7.—Արծազանգը ի՞նչ է: 8.—Ո՞վ կ'երգէ մացառներուն մէջ: 9.—Ոչխարները ի՞նչ կ'ընեն: 10.—Օդը ի՞նչով կը լեցուի: 11.—Ի՞նչ է բնական երաժշտութիւնը:

129. Օրինակել եւ գոց սորվիլ հետեւեալ բայը.

Ես	կը հսկեմ	Մենք	կը հսկենք
Դու	կը հսկես	Դուք	կը հսկէք
Ան	կը հսկէ	Անոնք	կը հսկեն

Դ Ա Ս

75. Բայը ի՞նչ կը ցուցնէ: —Բայը բան մը ընել կամ ըլլալ կը ցուցնէ, ինչպէս. *սեսնել, մեռնիլ:*

76. Եկրական ի՞նչ է: — Եկրական բային գործողութիւնը ընողն է, ինչպէս. *ես սեսայ, փոյրս կարեց:*

77. Եկրական ի՞նչպէս կը գտնուի: — Ենթական կը գտնուի ո՞վ հարցումը ընելով, ինչպէս. *Ո՞վ սեսար.* — Ես: — Ո՞վ կարեց. — *Քոյրս:*

78. Եկրական ի՞նչ սեակ բառ է: — Ենթական ընդհանրապէս անուն մը կամ դերանուն մըն է, ինչպէս. *փոյրս, ես:*

Ս Ե Ռ Ի Խ Ն Դ Ի Ր

Լ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ.—ԲԱՂԵՂԵՐ ԵՒ ԿՐԴՆԻՆ

Բաղեղ մը՝ կաղնիի մը կոճղին փաթթուած՝ կ'աճէր ու կը բողբոջէր ծլարձակ: Կաղնին զայն կը պահպանէր շարունակ հովէն ու անձրևէն, իսկ բաղեղը կը գեղազարդէր դարաւոր ծառը իր գունագեղ ծաղիկներով: Օր մը, բաղեղը շատ ձանձրանալով այս խաղաղ կեանքէն, կամաց մը բաժնուեցաւ իր պաշտպան հովանիէն, ու գնաց բաց օդին մէջ մինակ ապրելու: Բայց իր անխոհեմութեան պատիժը շուտով գտաւ, որովհետև հիւսիսակը փչեց ուժգին, և բարակ բունը որ ամէն զեփիւռի կը շարժի, սկսաւ ծածանիլ, ծռիլ, իջնել, ելլել, մինչև որ խորտակուելով խնկաւ, ու ցամքեցաւ հովին և արեւուն տակ:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

- 130. Օրինակել այս հասուածը, ցոյց տալ սեռի խնդիրները՝ ստորագծելով:
- 131. Սորվիլ այս հասուածին ուղղագրութիւնը:

Գ Ա Ս

79. Քանի՞ սեսակ խնդիր կայ: — Երկու տեսակ խնդիր կայ. սեռի խնդիր և բնութեան խնդիր:

80. Սեռի խնդիրը ի՞նչ հոլով կ'ըլլայ եւ ի՞նչ հարցումով կը գտնուի: — Սեռի խնդիրը հայցական հոլով կ'ըլլայ և զո՞վ կամ ի՞նչ բանը հարցումով կը գտնուի, ինչպէս. Կասուն ծեծեցի: — Զո՞վ ծեծեցիր: — Կասուն:

132. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի եւ գրաւոր.

- 1.— Բաղեղը որո՞ւ փաթուած էր: 2.— Ի՞նչ է բաղեղը: 3.— Ի՞նչ է կաղնին: 4.— Այս երկու ծառերէն որն է՝ աւելի ուժովը: 5.— Ո՞րը ծաղիկ կու տայ: 6.— Ո՞րը օգտակար կ'ըլլայ միւսին: 7.— Բաղեղը ի՞նչ ըրաւ: 8.— Բաղեղին ըրածը օգտակար եղաւ իրեն: 9.— Ինչո՞ւ վնասակար եղաւ: 10.— Ի՞նչպէս պէտք էր վարուիլ:

133. Գօէք հետեւեալ քայներուն յարմար սեռի խնդիրները:

Դասատուն . . . : Մայրը . . . կը սնուցանէ: Որդերը . . . կը կրծնն Արեւը . . . տաքցուց: Ատաղձագործը . . . շինեց: Հովը . . . պիտի խորտակէ: Կովը . . . կուտայ: Ոչխարը . . . կ'ուտէ: Կատուն . . . ջրանց: Մեղուները . . . կը շինեն: Գոյրս . . . կորսնցուց:

20. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ.—ՊԱՀՈՒԱԾ ԳԱՆՁԸ

Երկրագործ մը հիւանդոտ
Կ'զգայ թէ մահն է շատ մօտ,
Ու կը ժողվէ մահձին շուքը
Իր զաւակներն աշալուքը:

«Տըղաք, չըլլայ որ երբեք,
Կ'ըսէ, չըլլայ որ ծախէք
Հօրենական մեր կալուած,
Զի գանձ մըն է հոն պահուած:

Ձեմ գիտեր տեղն այդ գանձին,
Բայց փորեցէք առանձին.
Մայրդ չիմանայ ձեզվէ զատ,
Պեղեցէք հողն անվրհատ:»

Երբոր մեռաւ ձերունին,
Միշտ փորեցին արտերնին,
Եւ օրերով տքնեցան
Յետոյ ըրին վարուցան:

Ու չըզբտան գանձ բընաւ,
Բայց շատ առատ հունձք եղաւ.
Տըղաքն ըսին. «Հասկըցանք
Այդ նոյս գանձն էր աշխատանք:»

Բ Ն Ո Ւ Յ Ե Ա Ն Խ Ն Գ Ի Ր

ԼԱ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ.—Վ.Ե.ՀԱՆՁՆՈՒԹՅՈՒՆ

Հարուստ տիկին մը ծանրագին շրջազգեստ մը յանձներ էր աղքատ դերձակուհիի մը կարելու համար: Խեղճ աղջիկը կանթեղին լոյսովը գիշերը կ'աշխատէր, երբ յանկարծ կանթեղը շրջելով կազը թափեցաւ, և չփակին թեզանիքներէն մէկն ալ բռնկեցաւ: Դժբախտ աղջիկը յուսահատութենէն կու լար կ'ողբար և չէր համարձակեր տիկնոջ ներկայանալ: Բայց ան, հետեւեալ օրը, ոչ միայն չյանդիմանեց զինքը, այլ և կարողէքին վրայ նուէր մըն ալ աւելցուց իր պատճառով կրած տառապանքին համար:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

134. Օրինակել այս հասուածը եւ քսորագծել բնութեան խնդիրները:

135. Սորվիլ այս հասուածին ուղղագրութիւնը:

Դ Ա Ս

81. Բնութեան խնդիրը ի՞նչ հուրով կ'ըլլայ, եւ ի՞նչ հարցումով կը գտնուի: — Բնութեան խնդիրը ընդհանրապէս տրական, բացառական և գործիական կ'ըլլայ ու կը գտնուի որ՞որ կամ ի՞նչ բանի, որմէ՞ կամ ի՞նչ բանէ, ինչո՞ւ կամ ի՞նչ բանով հարցումներով:

136. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի եւ գրաւոր.

1.—Հարուստ տիկին մը քնն յանձներ էր դերձակուհիին: 2.—Շրջազգեստ բառը սևոյ՞ խնդիր է: 3.—Աղջիկը ինչ՞նչ կանթեղին լոյսովը կ'աշխատէր: 4.—Կանթեղին շրջէլէն քնն պատահեցաւ: 5.—Ուրիշ քնն վտանգ կրնար պատահիլ: 6.—Կար կարող աղջիկը ինչ՞նչ այնքան յուզուեցաւ: 7.—Տիկինը քնն ըրաւ: 8.—Այդ տիկնոջ ըրածը քնն տեսակ գործ էր:

137. Դէ՛ք հետեւեալ բայերուն յարմար բնութեան խնդիրներ եւ հարցումներուն սեղ դէ՛ք.

Ազարակապանը (որմէ) կամ կը կծէ: Մշակները (քնն բանով) ցորենը կը հնձնեն: (Որո՞ւ) երկու ոչխար յանձնեցինք արածելու համար: Ես (քնն բանով) չեմ կրնար զուարճանալ: Դուն (քնն բանէ) չես արտոյ՞ր: Անոնք (քնն բանի) ուշադրութիւն չեն ընել: Մենք միշտ (ինչով) կը ճամբորդենք:

138. Դէ՛ք հետեւեալ խօսքերուն մէջ բնութեան խնդիրները.

Ծովը լեցուն է ձուկերով: Միշտ ձեզմէ մեծերուն նայեցէք և անոնցմէ օրինակ առէք: Փայտդ կացինով կտրեց: Անծանօթ տղոց հետ մի խաղար, Անմիտ բարեկամներէն հետու կեցէք: Հաւատքով ապրեցէք:

ԲԱՅԵՐՈՒՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ

ԼԲ. ԸՆԹԵՐՅՈՒԱԾ. — ՓՈՍՍՈՒՌԱՆԵՐԸ

Մեր պարտէզը լեցուն է փոսուռաներով: Երբ գիշեր ըլլայ, ծառերուն ճիւղերուն մէջէն երևան կու գան պղտիկ կանթեղներու պէս: Կը ցատքոտեն, կը թռչտին, կ'ելլեն, կ'իջնեն, իրարու ետեւէ կը վազեն, ծաղիկներուն շուրջը կը դառնան, և երբ մացառներուն վրայ թառին, կարծես իրենք ալ լուսեղէն ծաղիկներ են: Եղբայրս զանոնք կը բռնէ, և տուփի մը մէջ կը պահէ: Հոն քիչ քիչ լոյսերնին կը մարի ու կը մեռնին: Այս բանը իմ սրտիս շատ կը դպչի. չեմ կրնար փխտել այն խեղճ պղտիկ անասուններուն, որոնց տեսքը այնքան հաճոյք կը պատճառէ:

Հ Ր Ա. Հ Ա Ն Գ Ն Ե Ր

139. Օրինակել այս հասուածք, ցոյց տալ դերանունները իրենց դէմբերովը, և ստորագծել բայերը:

140. Սորվիլ այս հասուածին ուղղագրութիւնը:

Դ Ա Ս

82. Ժամանակը քանի՞ է: — Ժամանակը երեք է. ներկայ, անցեալ և ապառնի:

83. Ներկան, անցեալը և ապառնին քանի՞ տեսակ են: — Ներկան մէկ է: Անցեալը երկուք է. անցեալ անկասար և անցեալ կասարեալ: Ապառնին երկուք է. քացարձակ ապառնի և անկասար ապառնի:

141. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի՞նք գրաւոր.

1.—Ձեր պարտէզը ինչո՞վ լեցուն է: 2.—Ի՞նչ է փոսուռան: 3.—Ցորեկներն ալ իր լոյսը կ'երեւայ: 4.—Ինչո՞ւ չ'երեւար: 5.—Գիշերները ինչ կ'ընեն փոսուռաները: 6.—Եղբայրդ ինչ կ'ընէ անոնց: 7.—Ի՞նչ կ'ըլլան անոնք այդ տուփին մէջ: 8.—Այդ բանը որո՞նք սրտին կը դպչի: 9.—Ինչո՞ւ համար: 10.—Պէտք է չարչարենք կենդանիները մեր զուարճութեան համար:

142. Խոնարհել և զոց սորվիլ հետեւեալ բայը.

ԵԶԱԿԻ

ՅՈՒՆԱԿԻ

Ես	կը վազէի	Մենք	կը վազէինք
Դու	կը վազէիր	Դուք	կը վազէիք
Ան	կը վազէր	Անոնք	կը վազէին

143. Հետեւեալ բայերը եզակի ընել.

Կը կարդար: — Կը փափարէր: — Պիտի ժպտնէր: — Երգեցինք: — Կը պարենք: — Պիտի խնդան: — Աղաչեցինք: — Կը յուզուիր: — Դրկեցինք: — Պռագիք:

21. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՓՈՍՍՈՒՌԱՆ

Ես կը սիրեմ բացասումներն անտառին Գիշերուան զով ժամերուն մէջ՝ առանձին. Ըստուերին մէջ կը գտնեմ լոյս բաւական, Ձի իմ կանթեղս է միշտ ինձմէ անբաժան:

Երբ երկինքին մարին շողերն ու կայծեր ձամբուն վըրայ, զոր մուծ գիշերն է ծածկեր, Ես ցոյց կուտամ իրեն շաւիղն անցորդին, Մոլորակներն երբ քոյի տակ պահուըտին,

Սակայն ցորեկն երբ ճաճանչոյն արեւուն Կ'ըլլան դաշտերն ու քաղաքներն ողորուն, Ես կը քաշուիմ. ինձմէ մեծեր Թող ճըզնին Լուսաւորել Թատերաբեմն աշխարհին:

Ժ. ԺԱՔ ԲՈՒՆԱ

Է Ա Կ Ա Ն Բ Ա Յ

Սահմանական եղանակ

Ներկայ

	եզակի		Յոթնակի
Ա.	Դեմք ես եմ		Մենք ենք
Բ.	» Դուն ես		Դուք էք
Գ.	» Ան է		Անոնք են

Անցեալ Անկասար

	եզակի		Յոթնակի
Ա.	Դեմք ես էի		Մենք էինք
Բ.	» Դուն էիր		Դուք էիք
Գ.	» Ան էր		Անոնք էին

Անցեալ Կասարեալ

	եզակի		Յոթնակի
Ա.	Դեմք ես եղայ		Մենք եղանք
Բ.	» Դուն եղար		Դուք եղաք
Գ.	» Ան եղաւ		Անոնք եղան

Բացարձակ Ապառնի

	եզակի		Յոթնակի
Ա.	Դեմք ես պիտի ըլլամ		Մենք պիտի ըլլանք
Բ.	» Դուն պիտի ըլլաս		Դուք պիտի ըլլաք
Գ.	» Ան պիտի ըլլայ		Անոնք պիտի ըլլան

Անկասար Ապառնի

	եզակի		Յոթնակի
Ա.	Դեմք ես պիտի ըլլայի		Մենք պիտի ըլլայինք
Բ.	» Դուն պիտի ըլլայիր		Դուք պիտի ըլլայիք
Գ.	» Ան պիտի ըլլար		Անոնք պիտի ըլլային

Հրամայական եղանակ

եզակի

Յոթնակի

Ա.	Դեմք	— —	Մենք ըլլա՛նք
Բ.	» Դուն	եղի՛ր	Դուք եղէ՛ք

Ստորագասական եղանակ

Ներկայ

	եզակի		Յոթնակի
Ա.	Դեմք ես ըլլամ		Մենք ըլլանք
Բ.	» Դուն ըլլաս		Դուք ըլլաք
Գ.	» Ան ըլլայ		Անոնք ըլլան

Անկասար

եզակի

Յոթնակի

Ա.	Դեմք ես ըլլայի		Մենք ըլլայինք
Բ.	» Դուն ըլլայիր		Դուք ըլլայիք
Գ.	» Ան ըլլար		Անոնք ըլլային

Անորոշ եղանակ

Աներեւոյթ

Ըլլալ

Ներկայ Ընդունելութիւն

եղող

Անցեալ Ընդունելութիւն

եղած, եղեր

Ապառնի Ընդունելութիւն

Ըլլալու

Ս Տ Ո Ր Ո Գ Ե Լ Ի

ԼԳ. ԸՆԹԵՐՅՈՒԱԾ.— ԼԱԼԿԱՆ ՏՂԱՆ

Սարգիս լալկան տղայ մըն է: Ոչ կրնաս ըսածին դիտողութիւն ընել, ոչ ալ կատակի ձևով խօսք մը ըսել իրեն: Մայրը յուսահատ է անոր կրթութեան մասին, որովհետեւ եթէ իր մէկ յանցանքը երեսին տայ, անմիջապէս աչքերը կը թրջուին, ու կ'սկսի լալ: Դէմքը միշտ կախ է, և թարթիչներուն ետին արցունքի կաթիլ մը պատրաստ կը կենայ: Ես չեմ ուզեր իրեն մօտենալ, վասն զի իր վարմունքը անտանելի է ինծի:

Լ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

- 144. Օրինակել այս հասուածը, եւ ստորագծել ստորագելիները:
- 145. Մտովի այս հասուածին ուղղագրութիւնը:
- 146. Կրել հետեւեալ խօսքերը միայն մէկ եկերակայով.

Յակոբ եւ Սարգիս չար են: Մաննիկ և Սօֆիկ հնազանդներն Սոխակն ու դեղձանիկը երգիչ են: Կատուն և մուկը գող են: Ես և բոլոր տկար էինք: Հայրս և մայրս դժբախտ եղան:

Օրինակ.—Յակոբ չար է:

Դ Ա Ս

84. Ի՞նչ է ստորագելիցն: — Ստորագելին անուն մը կամ ածական մըն է, որ սովորաբար էական բային հետ կը գործածուի, և ենթակային ինչ կամ ինչպէս բլալը կը ցուցնէ:

85. Ստորագելին ի՞նչ հոլով եւ ի՞նչ թիւ կ'ուցենայ: — Ստորագելին սովորաբար ուղղական կ'ըլլայ և եզակի կը մնայ:

147. Պատասխանել հետեւեալ հարցումներուն բերանացի եւ գրաւոր.

- 1.— Ի՞նչպէս տղայ է Սարգիս: 2.— Կրնան դիտողութիւն ընել իբրբայ: 3.— Ինչո՞ւ համար: 4.— Մայրը ինչո՞ւ յուսահատ է իր մասին: 5.— Ի՞նչ կը նշանակէ յուսահատ բռնար: 6.— Իր դէմքը ի՞նչպէս է: 7.— Արցունքը ուրի՞ց կը վազէ: 8.— Կ'ուզես իրեն մօտենալ: 9.— Ինչո՞ւ համար:

148. Ստորագելիները զննել հետեւեալ կէտերուն տեղ.

Մարդը . . . է: Օճը . . . է: Կեանքը . . . է: Մոլորակները . . . են: Ծաղիկը . . . է: Ծառերը . . . են: Օղը . . . է: Այգին . . . է: Աղբիւրը . . . է: Երկինքը . . . է: Ապակին . . . է: Հացը . . . է:

22. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ.— ՀԱՅԼԻՆՆ

Փորրիկ Աննան հայլիին մէջ կը զմայլէր
 Իր դէմքին.
 «Շուտ տեղը դիր, գոչեց մայրը անհամբեր,
 Այդ հայլին»
 — «Իմ պատկերս հոն տեսնել կ'ուզեմ,» պողոտայան
 Վերջապէս.
 Ու կը ճըչէր, կու լար, կ'ողբար բարձրաձայն
 Խենդի պէս:
 «Տեսնել կ'ուզես, մայրիկն հարցուց, նայէ լաւ,»
 Եւ Աննան
 Իր գայրոյթովն անուրի դէմք մը տեսաւ.
 Ինքն էր ան:

ԼՈՒԻ ԲԱԹԻՉՊՅՆ

ԵՐԵՔ ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼԴ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — ԱՐԾԱԹ ԴՐԱՄԸ

Կազանդին՝ Տիգրանին հայրը արծաթ դրամ մը տուաւ իրեն որ իր քրոջը՝ Նոյեմիին հետ երթայ շաքար վնէ : Քոյր և եղբայր ճամբան քալած ատեննին խանութներուն կը նայէին, որոնց ցուցափեղկերուն մէջ շարուած էին գոյնզգոյն շաքարէ խաղալիքներ, ծաղիկներ, պտուղներ : Նոյեմի ամէնուն ալ կը հաւնէր և ամէնէն ալ գնել կը բաղձար : Իսկ Տիգրան կը խորհէր թէ պէտք չէր դրամը պարապ տեղը վատնել : Յանկարծ պղտիկ աղքատ աղջիկ մը, որ ձեռք չունէր և որուն վիզէն պարկ մը կախուած էր, եկաւ քովերնին կայնեցաւ, «Անթի եմ» ըսաւ : Տիգրան և Նոյեմի իրարու երես նայեցան : Իրենք կուշտ էին : Ալ շաքար ուտելու ակործակին չմնաց : Տիգրան կամաց մը իր արծաթ դրամը աղջկանը պարկին մէջ նետեց, և տուն վերադարձան երկուքն ալ զուարթ ու երջանիկ :

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

- 149. Գրել այս հասուածին ամէն մէկ քային ներքեւ ո՞ր շճողութեան վերաբերիլը .
- 150. Սորվիլ այս հասուածին ուղղագրութիւնը :
- 151. Այս հասուածին բոլոր բայերը աներևոյթի վերածել, եւ ամէն մէկը զատ զատ սիւնակներու մէջ գրել իր շճողութեան համեմատ :

Գ Ա Ս

86. Քանի՞ շճողութիւն կայ :—Երեք շճողութիւն կայ . Ա. եղ վերջաւորող բայերը, ինչպէս՝ սիրել, Բ. իղ վերջաւորող բայերը, ինչպէս՝ խօսիլ, Գ. աղ վերջաւորող բայերը, ինչպէս՝ կարդալ :

87. Ի՞նչ է աներևոյթը :—Աներևոյթը՝ բային այն ձեւն է որ եղ, իղ, աղ կը վերջաւորի . բային անունն է :

152. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի եւ գրաւոր .

- 1.—Տիգրանին հայրը ինչ տուաւ իրեն Կազանդին օրը :
- 2.—Ինչո՞ւ տուաւ :
- 3.—Քոյր և եղբայր ինչ կ'ընէին ճամբան քալած ատեննին :
- 4.—Ի՞նչ շարուած էր ցուցափեղկերուն մէջ :
- 5.—Նոյեմի ինչ կ'ընէր :
- 6.—Տիգրան ինչ կը խորհէր :
- 7.—Ի՞նչ պատահեցաւ այն միջոցին :
- 8.—Աղքատ աղջիկը ինչ ըսաւ :
- 9.—Տիգրան և Նոյեմի ինչ ըրին :
- 10.—Իրենք ալ անօթի էին :
- 11.—Տիգրան ինչ ըրաւ :
- 12.—Յետոյ ինչ ըրին :
- 13.—Ինչո՞ւ համար ուրախ և երջանիկ էին :

153. Յորնակիի վերածել ի՞ծ. ընծերցուածը :

Օրինակ.—Արեւը ծագելուն պէս հովիւները իրենց հօտերը կ'առնեն դաշտերը կը տանին, եւայլն :

23. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՉԻՆ ԵՒ ՅՈՒԼԸ

Առոյց ձի մը մանուկ մ'առած իր վըրան
Դաշտերուն մէջ ասդին անդին կուգար ման .
Մերթ կը վագէր. կը վագվըգէր ոտտատուն,
Եւ մերթ հազիւ կը դպչէր Թարմ խոտերուն :

«Ի՞նչ, մըռնչեց ցուն անդիէն զայրացած,
Ըզբեզ վարել պըզտիկ տըղիւն այդ վընացի
Շուտ պատժէ զայն, և վըրայէզ նետէ վար,
Երթայ սորվի որ ձիուն հետ չեն խաղար :»

— «Ի՞նչ յաղթանակ, ինչ փառք և ինչ մեծ պատիւ,
Ըսաւ անոր ծիծաղելով ձին ազնիւ .
Աճօթ չէ ինձ, և չեն խընդար իմ վըրաս
Երբ վար նետեմ սա խեղճ մանուկն անվընաս :»

Ա. ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ. — ՍԻՐԵԼ

Սահմանական եղանակ
Ներկայ

եզակի	Յոքնակի
Կը սիրեմ	Կը սիրենք
Կը սիրես	Կը սիրէք
Կը սիրէ	Կը սիրեն

Անցեալ Անկասար

եզակի	Յոքնակի
Կը սիրէի	Կը սիրէինք
Կը սիրէիր	Կը սիրէիք
Կը սիրէր	Կը սիրէին

Անցեալ Կասարեալ

եզակի	Յոքնակի
Սիրեցի	Սիրեցինք
Սիրեցիր	Սիրեցիք
Սիրեց	Սիրեցին

Բացարձակ Ապառնի

եզակի	Յոքնակի
Պիտի սիրեմ	Պիտի սիրենք
Պիտի սիրես	Պիտի սիրէք
Պիտի սիրէ	Պիտի սիրեն

Անկասար Ապառնի

եզակի	Յոքնակի
Պիտի սիրէի	Պիտի սիրէինք
Պիտի սիրէիր	Պիտի սիրէիք
Պիտի սիրէր	Պիտի սիրէին

Հրամայական եղանակ

եզակի	Յոքնակի
Սիրէ՛	Սիրե՛նք
Սիրէ՛	Սիրեցէ՛ք

Ստորագասական եղանակ

Ներկայ	
եզակի	Յոքնակի
Սիրեմ	Սիրենք
Սիրես	Սիրէք
Սիրէ	Սիրեն

Անկասար

եզակի	Յոքնակի
Սիրէի	Սիրէինք
Սիրէիր	Սիրէիք
Սիրէր	Սիրէին

Անորոշ եղանակ

Աներեւոյթ

Սիրել

Ներկայ Ընդունելութիւն

Սիրող

Անցեալ Ընդունելութիւն

Սիրած, սիրեր

Ապառնի Ընդունելութիւն

Սիրելու

Բ. ԼՇՈՐԴՈՒԹԻՒՆ. — ԽՍՍԻԼ

Սահմանական եղանակ
Ներկայ

Եզակի	Յորնակի
Կը խօսիմ	Կը խօսինք
Կը խօսիս	Կը խօսիք
Կը խօսի	Կը խօսին

Անցեալ Անկասար

Եզակի	Յորնակի
Կը խօսէի	Կը խօսէինք
Կը խօսէիր	Կը խօսէիք
Կը խօսէր	Կը խօսէին

Անցեալ Կասարեալ

Եզակի	Յորնակի
Խօսեցայ	Խօսեցանք
Խօսեցար	Խօսեցաք
Խօսեցաւ	Խօսեցան

Բացարձակ Ապառնի

Եզակի	Յորնակի
Պիտի խօսիմ	Պիտի խօսինք
Պիտի խօսիս	Պիտի խօսիք
Պիտի խօսի	Պիտի խօսին

Անկասար Ապառնի

Եզակի	Յորնակի
Պիտի խօսէի	Պիտի խօսէինք
Պիտի խօսէիր	Պիտի խօսէիք
Պիտի խօսէր	Պիտի խօսէին

Հրամայական եղանակ

Եզակի	Յորնակի
Խօսէ՛	Խօսի՛նք
	Խօսեցէ՛ք

Ստորադասական եղանակ

	Ներկայ
Եզակի	Յորնակի
Խօսիմ	Խօսինք
Խօսիս	Խօսիք
Խօսի	Խօսին

Անկասար

Եզակի	Յորնակի
Խօսէի	Խօսէինք
Խօսէիր	Խօսէիք
Խօսէր	Խօսէին

Անորոճ եղանակ

Անբերելոյք

Խօսիլ
Ներկայ Ընդունելութիւն
Խօսող

Անցեալ Ընդունելութիւն

Խօսած , խօսեր
Ապառնի Ընդունելութիւն
Խօսելու

Գ. ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ. — ԿԱՐԴԱԼ

Սահմանական եղանակ
Ներկայ

եզակի	Յոթնակի
Կը կարդամ	Կը կարդանք
Կը կարդաս	Կը կարդաք
Կը կարդայ	Կը կարդան

Անցեալ Անկասար

եզակի	Յոթնակի
Կը կարդայի	Կը կարդայինք
Կը կարդայիր	Կը կարդայիք
Կը կարդար	Կը կարդային

Անցեալ Կասարեալ

եզակի	Յոթնակի
Կարդացի	Կարդացինք
Կարդացիր	Կարդացիք
Կարդաց	Կարդացին

Բացարձակ Ապառնի

եզակի	Յոթնակի
Պիտի կարդամ	Պիտի կարդանք
Պիտի կարդաս	Պիտի կարդաք
Պիտի կարդայ	Պիտի կարդան

Անկասար Ապառնի

եզակի	Յոթնակի
Պիտի կարդայի	Պիտի կարդայինք
Պիտի կարդայիր	Պիտի կարդայիք
Պիտի կարդար	Պիտի կարդային

Հրամայական եղանակ

եզակի	Յոթնակի
Կարդա՛	Կարդա՛նք
Կարդա՛	Կարդացե՛ք

Ստորադասական եղանակ
Ներկայ

եզակի	Յոթնակի
Կարդամ	Կարդանք
Կարդաս	Կարդաք
Կարդայ	Կարդան

Անկասար

եզակի	Յոթնակի
Կարդայի	Կարդայինք
Կարդայիր	Կարդայիք
Կարդար	Կարդային

Անորոշ եղանակ

Անեղծոյք

Կարդալ

Ներկայ Ընդունելութիւն

Կարդացող

Անցեալ Ընդունելութիւն

Կարդացած, կարդացեր

Ապառնի Ընդունելութիւն

Կարդալու

ԲԱՅԻՆ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆԸ

ԼԵ. ԸՆԹԵՐՅՈՒԱԾ — Վ.Ա.Ր.Գ.ԵՆԻՆ

Փոքրիկ քոյրս իր պատուհանին առջև վարդենի մը ունէր, զոր շատ կը սիրէր: Չէր ուզեր որ մէկը դպչի անոր. և երբ գարունը գար և վարդերը բուսնէին, ա՛լ անոր քովէն չէր հեռանար: Ջուր կու տար, գօս թերթերը կը փետատէր, սաստիկ արևէն ու խոնաւ ցուրտերէն կը պահպանէր զայն: Բայց, որովհետև դպրոց կ'երթար, շատ անգամ դասերուն չեր համներ վարդենիին պատճառաւ, և յանդիմանութիւն կը լսէր վարժուհիէն: Օր մը, առանց վարդենիին ջուր տալու, ելաւ վարժարան գնաց: Իրիկունը, իր ազուոր թփիկը չորցեր էր:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

- 154. Խաչանիշով ցոյց տալ եկրակաները եւ ստորագծել բայերը:
- 155. Սորվիլ այս հասուածին ուղղագրութիւնը:
- 156. Յորճակիի վերածել այս հասուածը:

Գ Ա Ս

92. Բայը ի՞նչպէս կը համաձայնի իր եկրակային հետ: — Բայը քիւտլ ու դեմֆով կը համաձայնի իր ենթակային հետ:

93. Բայը ե՞րբ յոճակի կը դրուի: — Բայը յորճակի կը դրուի երբ իր ենթական յորճակի է, և կամ երբ քանի մը եզակի ենթակայ ունի:

157. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի եւ գրաւոր:

- 1.—Փոքրիկ քոյրդ ի՞նչ ունէր: 2.—Երբ գարունը գար, ի՞նչ կ'ընէր:
- 3.— Ի՞նչպէս կը ինամէր զայն: 4.— Ի՞նչ է վարդենի: 5.— Իր ծաղիկը ի՞նչպէս կը կոչուի և ի՞նչ գոյն ունի: 6.—Քոյրդ ինչո՞ւ յանդիմանութիւն կը լսէ վարժուհիէն: 7.—Օր մը ի՞նչ պատահեցաւ: 8.—Վարդենին ի՞նչ եղաւ:

158. Խոնարհել պահպանել, շնել բայերը:

24. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԵՐԲ ԶԻՒՆ ԳԱԹ

Երկիրն հագուեր է ճերմակ
Զիւն համակ,
Ու կը փչեն հովեր ցուրտ
Ծովէն լուրժ:

Ա՛լ լըռիկ է հէք Թռչուն
Դողրոզուն,
Ու երդին մօտ կը Թառի
Կը սառի:

Մենք քաշուած ենք ասդին տաք
Յարկին տակ,
Կը ճաշակենք անուշիկ
Միրգ, նուշիկ:

Իսկ տըղաքը խեղճ, լըքուած,
Ո՛վ Աստուած,
Դուն տաքցուր միշտ և հոգա՛
Երբ ձիւն գայ:

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅ

ԼԶ. ԸՆԹԵՐՅՈՒԱԾ. — ՄՐՋԻՆՆԵՐ ԵՒ ԱՂԱՆԻՆՆԵՐ

Մրջիւն մը ջուրը ինկեր էր: Բիչ մնացեր էր որ խեղդուէր երբ աղանի մը, որ հոն մօտը կը կենար, տեսաւ զայն ու մեղքացաւ: Անմիջապէս կտուցովը խոտի շիւղ մը առաւ, և կամաց մը ջուրին վրայ դրաւ: Մրջիւնը անոր վրայ ելաւ ու աղատեցաւ: Աղանին ալ թռաւ գնաց ծառի մը վրայ թառեցաւ: Որսորդ մը որ հոնկէ կ'անցնէր, զայն տեսաւ, հրացանը լեցուց և պատրաստուեցաւ զայն սպաննելու: Բայց մրջիւնը անոր ոտքը խայթեց: Որսորդը ետին դարձաւ: Թռչունն ալ թռաւ ու աղատեցաւ:

Ք ԶԻՐ Ա. ՀՂԱՆ Գ ՆՅԵ Ր

- 159. Խաչանիշով ցոյց տալ հեքիակաները եւ ստորագծել բայերը:
- 160. Սորվիլ այս հասուածին ուղղագրութիւնը:
- 154. Օրինակել այս հասուածը, բայերը սահմանական ներկայի վերածելով:

Գ Ա Ս

94. Բային քիւր, դեմքը, եղանակը, ժամանակը ո՛րեկէ կը հասկցուին:—Բային վերջաւորութենէն կը հասկցուին եր քիւր, դեմքը, եղանակը, ժամանակը:

95. Բային վերջաւորութիւնները ե՞րբ կը սարքերին իրարմէ:—Բային վերջաւորութիւնները ամէն մէկ լծորդութեան մէջ կը տարբերին իրարմէ:

96. Սահմանական ներկայից վերջաւորութիւնները որո՞նք են:— Սահմանական ներկային վերջաւորութիւնները շեռեւեալներն են:

Ա. Լծորդութեան մէջ. եւ, ես, է, եւիք, եք, են:
 Բ. " " " իւ, իս, ի, ինք, իք, ին:
 Գ. " " " աւ, սս, սյ, աւիք, աք, աւ:

162. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի եւ գրաւոր.

1.— Ի՞նչ պատահեր է մրջիւնին: 2.— Մրջիւնը ի՞նչ տեսակ կենդանի է: 3.— Ի՞նչ է ձմին: 4.— Դրեցէք ձեր գիտցած ճճիւններուն անունները: 5.— Ո՞վ տեսաւ մրջիւնը: 6.— Ի՞նչ ըրաւ աղանին: 7.— Ի՞նչ է աղանոցը: 8.— Հաւերը ո՞ր կը բնակին: 9.— Մրջիւնը ի՞նչպէս ազատեցաւ: 10.— Ո՞ր թառեցաւ աղանին: 11.— Ո՞վ տեսաւ զայն: 12.— Որսորդը ի՞նչ ըրաւ: 13.— Ո՞վ ազատեց աղանին: 14.— Ի՞նչ է երախտագիտութիւնը:

163. Խոնարհել հետեւեալ բայերը՝ բերանացի եւ գրաւոր.

Թառիլ, խայթել, ազատիլ, սպաննել, պատրաստուիլ:

25. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԵՆԵՂԱԾԻՒՆ ՄԷՋ

Երկու Թափօր հանդիպեցան իրարու. Թաղում մըն է, սեւ դազաղ մը խեղճ տղու. Սեւեր հագած մայրը կ'երթայ ետեւէն, Տրտում տըխուր՝ աչքերն անդուլ կ'արտասուեն:

Մանկիկ մըն է միւսն ալ՝ չքնաղ նորածին Բեհեզներու մէջ զայն կնքել կը տանին. Թռչունի պէս ճըռուողելով կ'ուտէ կամ իր զըւարթ մօր Թեւերուն մէջ խանդակամ:

Երբ կ'աւարտին Թաղման հանդէսն ու կընունք, Խաչելուժեան պատկերին տակ սրբաշուք, Երկու մայրերն հանդիպելով՝ ծնրաղիբ՝ Իրարու սիրտ կը հասկընան անձկալիր:

Եւ, աղօթքի ազդեցութեամբ հրաշալի, Ջըւարթ մայրն ալ յանկարծ կուլայ, կ'այլայլի Դազաղին մօտ, զոր գերեզման կը տանին. Իսկ լացող մայրն հոն կը ժպտի նորածնին:

ԱՆՅԵԱԼ ԱՆԿԱՏԱՐ

ԼԷ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — ԹՈՉՈՒՆՆԵՐՈՒՆ ԲՈՅՆԵՐԸ

Ամառ օր մը անտառին մէջ կը պտըտէի: Օղբ տաք էր: Ծառի մը տակ նստեցայ ու կը դիտէի անօր ճիւղերէն կախուած բոյները, որոնց մէջ փոքրիկ թռչունները կը ճլուրլային: Յանկարծ ծառերուն ետեւէն մէկ քանի տղաք երեւան ելան: Անոնք ալ սկսան բոյները դիտել, յետոյ մագլցելով ծառը ելան: Այդ տղոց մէկը բոյները կը քակէր, ուրիշ մը ձագերը դուրս կը քաշէր, միւսը հաւկիթները կ'առնէր: Պզտիկ թռչունները միաձայն կը ձուային: Իսկ ես կը ցաւէի խեղճ պզտիկ թռչուններուն վրայ, և չար տղայ ըլլալ չէի ուզեր:

Հ Ր Ա. Հ Ա. Ն Գ Ն Ե Ր

- 164. Օրինակել այս հասուածը եւ ստորագծել բայերուն անկասարները:
- 165. Սորվիլ այս հասուածին ուղղագրութիւնը:
- 166. Այս հասուածին անկասար բայերը կասարեալի վերածել:
- 167. Հետեւեալ բայերը անկասար ընել.
Ան բաղել.— Ես քաշէի.— Դուն երգել.— Մենք խնդալ.— Դուք պարել.— Անոնք սորվիլ.— Ես յուզուիլ:

Գ Ա Ս

97. Անցեալ անկասարին վերջաւորութիւնները որո՞նք են:—Անցեալ անկասարին վերջաւորութիւնները հետեւեալներն են.

- Ա. Լծորդ. մէջ. եի, էիր, էր, էիւն, էիք, էին:
- Բ. " " եի, էիր, էր, էիւն, էիք, էին:
- Գ. " " այի, այիր, առ, այիւն, այիք, ային:

98. Սահմանական ներկան եւ անկասարը ի՞նչ մասնիկ կ'առնեն:—Սահմանական ներկան և անկասարը իրենց սկիզբը կը մասնիկը կ'առնեն:

168. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի եւ գրաւոր.

- 1.—Ամառ օր մը թնչ կ'ընէիր. 2.— Ի՞նչ կը դիտէիր. 3.— Բոյնը ո՞վ կը շինէ. 4.— Ինչո՞վ կը շինէ. 5.— Տղաքը թնչ ըրին. 6.— Ի՞նչ կը նշանակէ մագլցիլ. 7.— Ինչո՞ւ ծառը ելան. 8.— Թռչունները թնչ կ'ընէին. 9.— Դուն թնչ կը մտածէիր:

169. Յարմար բայեր դնել հետեւեալ ենթականերուն քով.
Թռչունը և արարողը . . . : Սագը եւ բաղը . . . : Ձին և ոչխարը . . . : Հաւը . . . : Տունը . . . : Կրակը . . . : Հովը . . . : Տղաք. . . :

170. Գ. դէմքի վերածել հետեւեալ բայերը.
Դրեցինք.— Խօսեցար.— Խաղացի.— Մաշեցայ.— Մարեցար.— Տարեցանք.— Դրեցինք.— Բուժեցի.— Լուացի.— Մտեցար.— Պիտի մեռնիմ.— Կը սխալէիր.— Կը պոռաս.— Կը սողաս:

26. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԲՈՅՆԸ

Ի՞նչ կ'ընէիր, անկիրթ տղաք, Կը քանդէիր բոյնն այն սիրուն. Արդեօք բընաւ մայր չունեցնար Որ կը մոռնար զայն այս պահուն:

Շիկահաւի բոյն մ'է զըւարթ. Կակուղ օրրան, տընակ քնքուշ, Ուր հէք մայրիկն այն անհանդարտ Զետեղած է իր բեռն անուշ:

Զքննող արդիւնք գորովանքի. Գիտէք ինչպէս են զայն հիւսեր, Որչափ Թռչունն այն վանաքի Վասնք է օր, հընարք ու սէր:

Օրրաններուն էն սըխրային Քակել կ'ուզէք, անկիրթ տղաք, Գիտէք, ձեզ պէս մայրիկ մ'ունին Թռչուններն ալ, զոր կը գողնար:

ԱՆՑԵԱԼ ԿՎՏԱՐԵԱԼ

ԼԸ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — ԱՐԹՈՒՆ ԱՂՋԻԸ

Արուս պատուհանին առջև նստած կար կը կարէր :
Տանը կատուն ալ քովը երկնցեր պառկեր էր իր ձազին
հետ : Յանկարծ եկքանիկ մը ներս մտաւ , ու քարտափած
սկսաւ ասդին անդին թռչտիլ : Վերջապէս յոգնած գե-
տինը ինկաւ : Կատուն իսկոյն եկքանիկին վրայ ցատքեց :
Արուս մտածեց որ վտանգաւոր էր կատուին ճանկէն
թռչունը ըռնի առնել : Ուստի գնաց անոր ձագը առաւ
ու պատուհանէն վար նետելու ձեւ մը ըրաւ : Կատուն
թռչունը թողուց , և իր փխսիկին քով վազեց : Այն ատեն
Արուս եկքանիկը առաւ ու վանդակի մը մէջ պահեց
որ՝ երգէ :

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

- 171. Որինակել այս հասուածը եւ ստորագծել րայերուն կասարեալները :
- 172. Սորվիլ այս հասուածին ուղղութեամբ ինչը :
- 173. Խոնարհել կարել , նստիլ , երկնեայ րայերը :
- 174. Հետեւեալ րայերը եզակի ընել .
Կար կարեցին : — Պիտի պառկենք : — Կը ցատքէինք : — Մտածեցիք : —
Վազեցիք : — Պիտի ընենք : — Պիտի կոտրենք : — Կը թռչնէին :

Գ Ա Ս

99. Անցեալ կասարեալին վերջաւորութիւն-
ները որո՞նք են : — Անցեալ կասարեալին վեր-
ջաւորութիւնները հետեւեալներն են .

- Ա. Լծոր. մէջ. եցի , եցիր , եց , եցիւնք , եցիք , եցին :
- Բ. " " եցայ , եցար , եցաւ , եցանք , եցաք , եցան :
- Գ. " " ացի , ացիր , աց , ացիւնք , ացիք , ացին :

175. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ րերանցի եւ գրաւոր-

- 1. — Արուս ինչ կ'ընէր : 2. — Կատուն ո՞ր էր : 3. — Ի՞նչ պատահե-
ցաւ : 4. — Յետոյ եկքանիկը ինչ ըրաւ : 5. — Ի՞նչ է եկքանիկը : 6. — Ի՞նչ կը
նշանակէ սարսափած : 7. — Կատուն ինչ ըրաւ : 8. — Արուս ինչ մտածեց :
9. — Ի՞նչ ըրաւ : 10. — Ինչո՞ւ համար այդպէս ըրաւ : 11. — Կատուն ինչ ը-
րաւ : 12. — Եկքանիկը ինչ ըրաւ : 13. — Ո՞վ ազատեց եկքանիկը :

- 176. Տարբեր կերպով մը պատմեցէք ու գրեցէք այս ընթերցումը :
- 177. Խոնարհել սարսափիլ բայը :

27. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — « Հ Ա Յ Բ Մ Ե Բ »

— Աղօթքիդ մէջ , ինչո՞ւ այդպէս
կանգ կ'առնես
Օ՞ն ըսկըսէ , ետ մի մընար
Անդադար :
Ըսէ տեսնեմ « Տուր մեզի հաց , »
— « Մեզի հաց . . . »
— Բայց կը կենաս երէն այդ տեղ
Ամէն հեղ ,
Եւ ցած ձայնով րաւերի կ'ըսես
Խենդի պէս :
— Անո՞ւշ մայրիկ , մըտիկ ըրէ ,
Ու ներք .
Կ'աղօթէի որ հացին հետ
Մեզ յաւէտ ,
Գիշ մ'ալ կարագ տայ գէթ Աստուած
Ողորմած :

ԲԱՅԱՐՁԱԿ ԱՊԱՌՆԻ ԵՒ ԱՆԿԱՏԱՐ ԱՊԱՌՆԻ

ԼՔ. ԸՆԹԵՐՅՈՒԱԾ, — ԵՐԲՈՐ ՄԵՆՇՆԱՍ

Քանի մը տարիէն ես պիտի մեծնամ: Դպրոցական շրջանս պիտի աւարտեմ, ու դպրոցէն պիտի ելլեմ: Այն ատեն պիտի սկսիմ տանը դարձեալու աշխատիլ, և մօրս պիտի օգնեմ իր բոլոր աշխատութեանց մէջ: Սեղանը ես պիտի յարդարեմ: Վեր վար պիտի աւլեմ, անկողինները ես պիտի շտկեմ: Կարաններուն փոշիները պիտի մաքրեմ: Երբոր լուացք ընենք, ձերմակեղէնները ես պիտի փռեմ, պիտի ժողվեմ, պիտի ծալլեմ ու պիտի արդուկեմ: Վերջապէս ամէն ջանք պիտի ընեմ որ տուներնիս մաքուր ու կանոնաւոր ըլլայ, և մայրս չյոգնի: Որովհետեւ մայրս շատ կը սիրեմ:

Հ Ր Ս. Հ Ա Ն Գ Ն Ե Ր

- 178. Օրինակել եւ ստորագծել ապառնիները,
- 179. Սորվիլ այս հասուածին ուղղագրութիւնը,
- 180. Բացարձակ ապառնի Բ. Պեմբի վերածել բոլոր բայերը,
Օրինակ.—Քանի մը տարիէն դուն պիտի մեծնաս, եւ այլն:
- 181. Անկասար ապառնի Գ. Պեմբի վերածել բոլոր բայերը,
Օրինակ.—Քանի մը տարիէն ան պիտի մեծնար, եւ այլն:

Գ Ա Ս

100. Բացարձակ ապառնի ի՞նչպէս կը շինուի: — Բացարձակ ապառնին կը շինուի սահմանական ներկային կը մասնիկին տեղ պիտի դնելով, ինչպէս. կը սիրեմ, պիտի սիրեմ:

101. Անկասար ապառնի ի՞նչպէս կը շինուի: — Անկասար ապառնին կը շինուի սահմանական անկատարին տեղ պիտի դնելով, ինչպէս. կը սիրէի, պիտի սիրէի:

182. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի եւ գրաւոր.

- 1.— Երբոր մեծնաս քնչ պիտի ընես:
- 2.— Ի՞նչ աշխատութիւններ կան տան մէջ:
- 3.— Ձերմակեղէնները քնչ ինչամի պէտք ունին լուացքէն ետքը:
- 4.— Ինչո՞ւ կ'արդկեն ձերմակեղէնները:
- 5.— Ո՞ր ձերմակեղէնները օսլայով կ'արդկեն:
- 6.— Օսլան քնչ բանի կը ծառայէ:
- 7.— Ինչո՞ւ պիտի ուզես մասնակցիլ այդ աշխատութեանց:

28. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԿԱՊՈՅՑ ՊԱՐՈՒԸ

Պառաւ կին մը, որ մը, կողով մը շալկած
Միրգով լեցուն զանազան,
Լեռնէն կ'երթար անկասկած,
Երբոր զըպաւ բար մ'ահագին
Իր ոտքին,
Միրգերն ալ վար Թափեցան:
Ճիշդ այդ պահուն գեղըզի տրդեկ մը կ'անցնէր
Շուտ վագելով անդադար,
Չեւրը բունած ծրարներ:
«Տըղաս, ըսաւ, կնիկն անոր
Ինդրաւոր,
Քիչ մը կեցիր, մի փուճար,
Սա միրգերը մէկտեղ ժողվենք, կ'աղաչեմ,
Գիւղէն կուգամ շատ յոգնած,
Եւ առանձին կարող չեմ:»
Երբ տըղան գործն աւարտեց
Խանդով մեծ,
Պառան անոր բով զընաց,
Տըսաւ փայտի մեծ ու պզտիկ կրտորներ.
Բայց տըղուն ձեռք կար շատ բան,
Այդ փայտերը քնչ ընէր:
Երկու հատը ծոցը զըրաւ
Դժուարաւ,
Յետոյ զընաց իր ճամբան:
Բայց տեսաւ որ անոնք զինքը կը նեղեն,
Ծոցէն քաշեց ու ժգնակի,
Փայտերն էին ոսկեղէն:
Եւ մեր տըղեկն ըզզաց մեծ ցաւ,
Ետ դարձաւ.
Ոչ փայտ զըտաւ, ոչ ոսկի,
Կապոյտ պարիկն էր այդ պառան արտաւոց
Որ գիւղին մէջ կը շրջէր,
Եւ աղջկանց ու տըղոց
Ոսկի, գոհար ու մարմաշներ
Կը բաժնէր.
Մեղք որ տըղան ճանչցած չէր:

Հ Ի Ա Մ Ա Յ Ա Կ Ա Ն

Խ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — ՄԵՐ ԴԱՍՏԻԱՐԱԿԻՆ ԽՐԱՏՆԵՐԸ

Երէկ դպրոցին մէջ մեր դաստիարակը ըսաւ մեզի.
«Ժամանակը մեծ դրամագլուխ մըն է, որմէ ամէնքնիդ
ալ ունիք. անոր յարզը գիտցէ՛ք և պարապ տեղը մի՛
վատնէք զայն: Մարդ կրնայ իր դրամը մնտուկին մէջ
պահել որ չկորսուի. բայց ժամանակը ձեռքերնիս չէ.
կ'անցնի, կ'երթայ, և անցնելէն ետքը ա՛լ ետ չի դառ-
նար: Ուստի ջանացէ՛ք որ օգուտ քաղէք անկէ: Այխա-
տեցէ՛ք որ վայրկեան մը պարապ տեղը չկորսուի, և
երբեք չպիտի զղջաք:

Հ Ի Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

- 183. Ստորագծել այս հասուածին հրամայականները.
- 184. Սորվիլ այս հասուածին ուղղագրութիւնը.
- 185. Խոնարհել պահել բայը:

Դ Ա Ս

102. Որո՞նք են հրամայականին վերջաւորութիւնները:—
Հրամայականին վերջաւորութիւններն են .

- Ա. Լծորդութեան մէջ է՛, եցէ՛ք, ե՛նք:
- Բ. " " է՛, եցէ՛ք, ի՛նք:
- Գ. " " ա՛, ացէ՛ք, ա՛նք:

186. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի եւ գրաւոր.

- 1.— Ի՞նչ է դրամագլուխը?
- 2.— Ի՞նչ ըսել է վասնել?
- 3.— Ի՞նչ կը նշանակէ յարզը գիտնալ?
- 4.— Խնայողութիւն ընող անձին ի՞նչ անուն կու տան?
- 5.— Ի՞նչ ըսել է օգուտ քաղել?
- 6.— Օգուտ բառին ածականը ի՞նչ է?
- 7.— Կորսուիլ բային գոյականը ի՞նչ է?

187. Խոնարհել վասնել, կորսուիլ բայերը:

29. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ, — ՄՈՒՆԿԻԿԻՆ ԿՈՒՆԸ

Նիրհէ, մանկիկս իմ սիրուն,
Անուշ բունով նիրհէ դուն
Օրրանիդ բով եկան հիւր
Արեւն, արծիւն ու զեփիւռ,
Թողած ծովերն, ամպն ու սար,
Համբոյր բերել բեզ հազար:

Բացու արծիւն իր թեւեր
Գլխուդ վերեւ ոսկեհներ,
Շրթունքներուդ վըրայ նուռ
Մրսկեց արփին վարդ եւ հուր,
Ու փայփայեց քամին զով
Այտերդ իր նուրբ բեհեզով:

Նիրհէ, մանկիկս իմ սիրուն,
Անուշ բունով նիրհէ դուն:
Բոյնը դարձաւ զոռ արծուին.
Մարը մտաւ լոյս արփին.
Թըռաւ զընաց իր մօր բով
Զեփիւռն անհուն նագանբով:

Սիւզին դարձին անձկայիր
Մայրիկն հարցուց, «Ո՞ր էիր,
Դեւերու հետ կըռուեցար,
Յուզեցիր ծնով ու մացառու»
Իսկ համբոյրով մը շերտին
Պատասխանեց խօլ քամին.

«Ես ծառ ու՞ծով չեմ յուզեր,
Եւ դեւի հետ չեմ կըռուեր.
Մանկիկին բով ամէն օր
Ըսի երգեր ու օրօր.
Նիրհէ մանկիկս իմ սիրուն,
Անուշ բունով նիրհէ դուն»)

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԵՐԿԱՅ ԵՒ ԱՆԿԱՏԱՐ

ԽԱ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — ԱՋ ՉՅՈՒՐԸ ԵՒ ՉԱՆ ՉՅՈՒՐԸ

Օր մը աջ ձեռքը ձախին ըսաւ. «Դուն աւելորդ բեռ մըն ես մարդուն համար. աւելի աղէկ էր որ բնաւ գոյութիւն չունենայիր. ամէն բանի մէջ ես եմ իրեն ծառայողը: Եթէ աշխատիլ ուզէ, ես եմ որ կը գրեմ, կը կարեմ, կը ցանեմ, կը հնձեմ. եթէ անօթեհայ, ես եմ որ զինքը կը կշտացնեմ. եթէ վտանգի մը հանդիպի, ես եմ որ զինքը կը պաշտպանեմ: Իսկ դուն ինչ կ'ընես » : — Յանցանքը իմս չէ, պատասխանեց ձախ ձեռքը, քեզի չափ գործունեայ չըլլալուս. եթէ մարդիկ քեզի պէս զիս ալ գործածէին, թերեւս ես ալ քու ըրածներդ ընէի: Սակայն պէտք չէ ուրանաս որ դուն շատ դժուարութիւն պիտի կրէիր, եթէ ես չըլլայի. որովհետեւ ամէն բանի մէջ ինծի կարօտ ես: »

Հ Ր Ա. Հ Ա. Ն Գ Ն Ե Ր

- 188. Օրինակիլ այս հասուածը եւ ցոյց տալ ստորադասական ներկաները մէկ զծով, իսկ անկասարները երկու զծով:
- 189. Սորվիլ այս հասուածին ուղղագրութիւնը:

Դ Ա Ս

103. Ստորադասականը ի՞նչպէս կը շինուի: — Ստորադասականին թէ՛ ներկան, թէ՛ անկասարը տահմանականին ներկայէն և անկատարէն կը շինուին անոնց առջեւի կը մասնիկը ջնջելով, ինչպէս. կը գրեմ, գրեմ, կը գրէի, գրէի:

190. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի եւ գրաւոր.

1. Աջ ձեռքը ի՞նչ ըսաւ ձախին 2. Աջ ձեռքով ի՞նչ գործեր կրնանք կատարել: 3. — Չափ ձեռքը ի՞նչ պատասխանեց: 4. — Ո՞րը իրաւունք ունէր:

191. Խոնարհել, բերանացի եւ գրաւոր, այս ընթերցուածին մէջ զընուած ստորադասականներուն թէ՛ ներկաները եւ թէ՛ անկասարները:

192. Ստորադասական ներկայի, յետոյ անկասարի վերածել հետեւեալ թայէրը:

Կը հազամ—Կը ջանամ—Կը պտըտիմ—Կը խմեմ—Կը հառաչեմ—Կը մերժեմ—Կը խօսիմ—Կը հեւայ—Կը ծիծաղի—Կը մանէ—Կը մեկնիմ—Կը պարսպիմ—Կը դառնանք—Կը բաշեն—Կը ներէք—Կը շրջիմ—Կը խոստանար—Կը լռեն:

30. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՕՉՆ ՈՒ ՓՈՍՈՒՌԱՆ

Փոսուռայ մը կը խաղար
Կնձնիներուն տակ դալար.
Մօտեցաւ օձ մ'անոր խեռ
Ու զայն խոցեց կարեվէր.
«Ի՞նչ ըրի, օձ նենգաւոր»
— «Ինչո՞ւ փայլիս լուսաւոր»

ԼԱՅԷ

ԱՆՈՐՈՇ ԵՂԱՆԱԿ ԿԱՍ ԴԵՐԲԱՅ

ԽԲ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — ԴՈՐԾՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆ

« Կ'ուզէի շատ հարուստ ըլլալ, շատ եկամուտներ ունենալ, որպէս զի կարենայի աղքատներուն օգնել, հիւանդանոցներ հաստատել, դպրոցներ կառուցանել, մատենադարաններ հիմնել: Մեղք որ ունեցածս չի բաւեր այս փափաքներս գործադրելու », կ'ըսէր հարուստ մարդ մը, որ ընտանիք չուներ: — « Եթէ այդ ամէնուն չի բաւեր, անշուշտ մէկ հատին կը բաւէ. նախ այդ մէկը բրէ' », պատասխանեց բարեկամ մը:

Հ Ր Ա. Հ Ա. Ն Գ Ն Ե Ր

193. Օրինակի այս հասուածը, ստորագծել աներեւոյնները եւ ն, ան, ապ զիրերով նշանակել ներկայ, անցեալ եւ ապառնի ընդունելութիւնները:

194. Սորվիլ այս հասուածին ուղղագրութիւնը:

Դ Ա Ս

104. Աներեւոյքը ինչէ՞ն կը շինուի: — Աներեւոյքը կը շինուի սահմանական ներկային առաջին դէմքէն, առջեւի կըն վերցնելով ու վերջի մ գիրը շի փոխելով, ինչպէս. կը խօսիմ, խօսիլ:

105. Ուր՞նք են ներկայ, անցեալ, ապառնի ընդունելութիւններուն վերջաւորութիւնները: — ներկայ ընդունելութեան վերջաւորութիւնն է՝ ող, անցեալին ած, եր, ապառնիին երո կամ աշո:

106. Աներեւոյքը եւ ընդունելութեան երեք ժամանակները ի՞նչ կը կոչուին: — Աներեւոյքը եւ ընդունելութեան երեք ժամանակները անորոշ եղանակ կամ դերբայ կը կոչուին:

195. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի եւ գրաւոր.

1. — Ի՞նչ կ'ըսէր հարուստ մարդը որ ընտանիք չուներ: 2. — Ինչո՞ւ կ'ուզէր շատ հարուստ ըլլալ: 3. — Փափաք բառին բայը ինչպէս կ'ըլլայ: 4. — Կը բաւէ բային աներեւոյքը ինչպէս կ'ըլլայ: 5. — Ինչո՞ւ հարուստ մարդը չէր կրնար իր փափաքները գործադրել: 6. — Ի՞նչ պատասխանեց իր բարեկամներէն մէկը: 7. — Ի՞նչ է այս պատասխանին բարոյականը:

196. Խոնարհել գործադրել բայը:

197. Հետեւեալ բառերուն ամէն մէկովը զատ զատ նախադասութիւններ շինել:

Բարեկամ, բարեկամութիւն, բարեկամանալ, բարեկամական:

198. Լուծել վերոյիշեալ բառերը:

Յ I. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԾՆՈՒՆԴՈՒ ՎԱՐԴԵՐԸ

Մէզին մէջէն զեկտմբերին
Տրտում վարդեր ալ կը փթթին՝
Նըման աչքին արցունքով լի,
Զոր չի վառեր իդձ մը կեանքի:

Արեւն անոնց բուրում չի տար
Ոչ ալ զոյներ ոսկենդկար .
Բայց սիրտերուն գէթ վշտաբեկ
Դաւուկին ցաւ չ'ազդեր երբեք:

Եւ քանի որ մատղաշ գարուն
Նորաբողոք հողիններուն
Կը սահմանէ գեղն իր փայլուն,

Տառապողին համար, ո՞վ Տէր,
Թող որ փթթին միշտ այդ վարդեր,
Այդ ծընունդի տօգոյն վարդեր:

ԳՏՆԵԼ, ՄՏՆԵԼ, ԵԼԼԵԼ, ԻՋՆԵԼ, ՀԵԾՆԵԼ ԲԱՅԵՐԸ

ԽԳ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — ԲԱՂԵՂԸ

Պարտէզի մը մէջ բաղեղ մը կար, որ չկրնալով մինակ կենալ, իր մօտերը գտնուած ցեցի մը փաթթուեցաւ: Իրենցմէ հեռու՝ դաշտին մէջ՝ եղեւին մըն ալ կար. բաղեղը դայն ցիցին ցոյց տալով ըսաւ. «Սա ծառը ի՞նչ տգեղ կ'երեւայ քու քովդ. ի՞նչ ծուռումուռ հասակ, ի՞նչ անհաճոյ գոյն ունի: Ի՞նչ ի՞նչ աղուոր ես, հասակդ ի՞նչ պէս շիտակ ու ճապուկ է:» Քանի մը օրէն պարտիզ պանը պարտէզ իջաւ, ցիցը անկէ առաւ տարաւ, և եղեւինը գտաւ բերաւ անոր տեղը տնկեց: Բաղեղը մինակ մնալով՝ այս անգամ ալ ելաւ եղեւինին քով դնաց, անոր փաթթուեցաւ, ու ցիցին տուած գովեստները սկսաւ այս անգամ ալ անոր տալ:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Բ

- 199. Օրինակել այս հասուածը, եւ ստորագծել նեղ վերջացող բայերը:
- 200. Խոնարհել՝ բերանացի եւ գրաւոր՝ իջնել, գանել, ելլել (եղնել) բայերը:

Դ Ա Ս

107. ԳՏնել բայը ո՞ր լծորդութեան պէս կը խոնարհուի եւ ի՞նչպէս կ'ըլլան կասարեալն ու հրամայականը: — ԳՏնել բայը Ա. Լծորդութեան՝ սիրելին պէս կը խոնարհուի, և կատարեալը կ'ըլլայ. գսայ, գսար, գսաւ, գսանք, գսաք, գսան: Իսկ հրամայականը կ'ըլլայ. գսի՛ր, գսնե՛նք, գսե՛ք:

108. Ո՞ր բայերը գՏնելին պէս կը խոնարհուին մՏնել, ելլել, իջնել, հեծնել:

201. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի եւ գրաւոր:

- 1.— Բաղեղը ի՞նչ ըրաւ:
- 2.— Բաղեղը ինչո՞ւ չէր կրնար կանգուն կենալ:
- 3.— Բաղեղը ի՞նչ ըրաւ ցիցին:
- 4.— Ի՞նչ է ցիցը:
- 5.— Ի՞նչ կը նշանակէ մալուխ բառը:
- 6.— Փարտիզացիները ի՞նչ ժամանակ է:
- 7.— Ի՞նչ է փարտիզացաւին աներեւոյթը:
- 8.— Պարտիզացիները ի՞նչ ըրաւ:
- 9.— Ի՞նչ է եղեւինը:
- 10.— Բաղեղը ի՞նչ ըրաւ եղեւինին:
- 11.— Ի՞նչ ըսաւ անոր:
- 12.— Ի՞նչ է շողոխորդութիւնը:
- 13.— Ի՞նչպէս կ'ըլլայ շողոխորդութիւն բառին ածականը:
- 14.— Ի՞նչպէս կ'ըլլայ բայը:

202. ԳՏնել հետեւեալ գոյականներուն բայերը:

- Մշակի—Պատասխանի—Ծիծաղի—Համբերութիւնի—Յուզումի—Լոռու Թիւնի—Օրինակի—Բայլի—Կարի—Անձրևի—Տարութիւնի—Տէրի—Ծառայի—Սուտի—Խաչի—Նաւի—Սուրի:

32. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԱՆԾԵՂՆ ՈՒ ԽԱՅԵՐԸ

Օր մը ըսաւ շատգրուց

Անծեղն անուշ խայտախին.

«Սորվեցուր երգ մ'ինձ բերնուց

«Գարնան երգէդ, զոր լըտողներ կ'զմայլին»

— «Կատակ չ'ուզեր, սիրելիս,

Քու տեսակէդ անձեր բան մը չէն սորվիր»

— «Պատճառն ըսել կը հաճիս»

— «Ո՛վ որ կ'ուզէ բան մը սորվիլ, այնպիսին

Պէտք է ըլլայ ունկընդիր.

Շատախօսն ալ մտիկ չ'ըներ ուրիշին»

ՏԻՎԻՆ ՏԸ ԼԱ ՖԵՌԱՆՏԻԿՈՒ

ԱՌՆԵԼ, ԽԱԾՆԵԼ, ԹՔՆԵԼ, ՊԱԳՆԵԼ ԲԱՅԵՐԸ

ԽԴ. ԸՆԹԵՐՅՈՒԱԾ.— ԱԶՆԻՒ ՍՏԱԼԵՍՍՈՒԹԻՒՆ

Ծերունի մը փոքրիկ թոռանը հետ դռնէ դուռ կը մուրար: Խեղճին աչքերը չէին տեսներ, և դժբախտ տղան դիմացը ելլողին կ'աղաչէր, կը պաղաատէր որ բան մը տայ իրեն կոյր ծերունին կերակրելու համար: Օր մը մինչեւ իրիկուն պտրտեր էին, և կտոր մը չոր հաց միայն կրցեր էին ձեռք անցընել: Օղը ցուրտ էր, և ձիւնը իրենց ձեռքերն ու երեսները կը խածնէր: Ծերունին շատ անօթեցեր էր. «Տղաս, քիչ մը բան ուտենք», ըսաւ: Թոռը հանեց հացին կտորը անոր տուաւ: Մեծ հայրը առնելով հացը, հարցուց: «Ի՞նչն ալ ունի՞ս»: — «Ունի՛մ, մեծ հայր» պատասխանեց տղան, և գլուխը անոր ծունկին վրայ դնելով անօթի քնացաւ:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

- 203. Օրինակել այս հատուածը եւ ստորագծել ներ վերջաւորող բայերը:
- 204. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը:
- 205. Խոնարհել խածնել, պագնել, քֆնել բա երբ:

Գ Ա Ս

109. Ո՞ր լծուղութեան պէս կը խոնարհուի առնել բայը, եւ ի՞նչպէս կ'ըլլայ կատարեալն ու հրաւայակա՞նը: — Առնել բայը: Ա. Լծորդութեան պէս կը խոնարհուի, և կատարեալը կ'ըլլայ. առի, առիր, առաւ, առիմ, առիք, առին: Հրամայականը կ'ըլլայ. ա՛ռ, առնե՛նք, առե՛ք:

110. Ո՞ր բայերը այսպէս կը խոնարհուին: — Այսպէս կը խոնարհուին խածնել, քֆնել, պագնել:

206. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի եւ գրաւոր:

- 1.— Ծերունին ի՞նչ կ'ընէր Թոռանը հետ
- 2.— Ինչո՞ւ չէին աշխատեր անոնք փոխանակ մուրալու:
- 3.— Աչքը չտեսնողին ի՞նչ կ'ըսեն:
- 4.— Ականջը չսողին:
- 5.— Ձխտողին:
- 6.— Փոքրիկ տղան ի՞նչ կ'ընէր դիմացը ելլողին:
- 7.— Ինչո՞ւ համար:
- 8.— Օր մը ի՞նչ պատահեցաւ:
- 9.— Ի՞նչ կը նշանակէ ձիւնը երեսները կը խածնէր:
- 10.— Ծերունին ի՞նչ ըսաւ:
- 11.— Տղան ի՞նչ պատասխանեց:
- 12.— Ինչո՞ւ սուտ խօսեցաւ:
- 13.— Ի՞նչպէս ուրախութիւն էր այդ:
- 14.— Սուտ խօսողին ի՞նչ կ'ըսեն:
- 15.— Չարիք գործողին:
- 16.— Բարիք գործողին:
- 17.— Այդ տղուն ըրածը բարիք էր թէ չարիք:

33. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ, — ԾԱՊԱՆԱԿԸ

Վարպետին հետ օր մը Արսէն կու գար ժուռ.
«— Բան սորվիլը ի՞նչ անհամ է և անծուր.
Ինչո՞ւ տըղաք այնչափ ատեն աշխատին,
կ'ըսէր Արսէն վարպետին»

Ուսուցիչը դեռ չէր տըլած պատասխան,
Երբոր յանկարծ իր ոտքին տակ մեր տըղան
Տեսաւ ծաղկած մարմնողներուն մէջ փոշոտ
Խոշոր փեճեկ մը փըշոտ:

Չեւրն երկնցուց մանկին իսկոյն առնելու
— Ըզգուշացիր ու մի դպչիր: — Բայց ինչո՞ւ:
— Ամէն կողմէ պաշարած են փուշեր զայն:
— Մէջը պըտուղ կայ սակայն:

— Եթէ դպչիս, փուշերն ըզրեզ կը խայթեն:
— Բայց ամէն օր միւրգ չի գտներ մարդ գետնէն,
Ի՞նչ փոյթ քիչ մը Թող իմ մատերս ալ ցաւին,
Հոգ չեմ ըներ բընախն:

— Այո՛, տըղաս, բայց սորվէ որ ուսման ալ
Մարդ դժուարաւ կրնայ այսպէս տիրանալ:
Այդ փուշերն են աշխատութեան նըշանակ,
Մէջն է պահուած շագանակ:

ՆԻԼ ԵՒ ՉԻԼ ՎԵՐՉԱՅՈՂ ԲԱՅԵՐԸ

ԽԵ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ.— ԳԱՐՈՒՆԸ ԵՒ ԾԱՂԻԿՆԵՐԸ

Երբ գարունը գայ, դաշտերը, պարտէզները գոյն-
ըզգոյն ծաղիկներով կը զարդարուին: Մանուշակը, լե-
լակը, կուսածաղիկը, խաժուրիկը կապոյտ են, թէպէս
բոլորովին իրարու չեն նմանիր գոյնով: Շուշանը, յաս-
միկը, ձիւնածաղիկը, հովտաշուշանը, երիցուկը ձերմակ
են, բայց ոչ մէկը միւսին կրնայ բաղդատուիլ: Հարս-
նուկը, կակաչը, շահոքրամը կարմիր են: Նուռուֆարը,
միմուկը, նարգէսը, շահպրակը, քրքուժը, հրանուէկը դե-
ղին են, և ասոնցմէ շատերը գեղեցիկ բոյր ունին: Իայց
ամէնքն ալ վաղանցուկ են. գարունէն ետքը, կը դեղ-
նին, կ'անցնին, և հոտերնին կը փախչի: Նուռուֆարը միայն
կ'ապրի, և այդ պատճառաւ անթառամ ալ կը կոչուի:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

- 207. Օրինակել այս հասուածը, եւ ստորագծել նիւ, չիլ վերջացող բայերը:
- 208. Սորվիլ այս հասուածին ուղղագրութիւնը:
- 209. Խոնարհել բերանացի եւ գրաւոր՝ անցնիլ, դպչիլ բայերը:

Գ Ա Ս

111. Ո՞ր լծորդութեան պէս կը խոնարհուին
հասնիչ եւ թոյիչ բայերը, եւ ի՞նչպէս կ'ըլլայ
անոնց կատարեալն ու հրատայականը:— Հասնիչ
և թոյիչ բայերը Բ. Լծորդութեան խօսիչին պէս
կը խոնարհուին, բայց կատարեալնին կ'ըլլայ. հա-
սայ, հասար, հասար, հասակ, հասակ, հասակ.
թոայ, թոար, թոար, թոակ, թոակ, թոակ:
Իսկ հրամայականնին կ'ըլլայ. հասի՛ր, թոի՛ր:

112. Ո՞ր բայերը ասոնց պէս կը խոնարհ-
ուին:— Ասոնց պէս կը խոնարհուին նիւ և չիլ վեր-
ջացող բայերը, ինչպէս. հասնիչ, թոսնիչ, մեռ-
նիչ, անցնիչ, հագնիչ, փախչիչ, փչիչ, դպչիչ,
կպչիչ, փակչիչ:

210. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի եւ գրաւոր.

- 1.—Ծաղիկները երբ կը ծլին: 2.—Գարնան ամիսները որո՞նք են:
- 3.—Կապոյտ ծաղիկներէն որո՞նք են որ հոտ ունին: 4.—Երիցուկը ի՞նչպէս
է, հոտ ունի, ի՞նչ բանի կը ծառայէ: 5.—Հարսնուկը ո՞ր կը բուսնի: 6.—
Կակաչը աղուոր է թէ շահոքրամը: 7.—Գեղին ծաղիկներուն մէջէն որն է
այն որ չի թառամիր: 8.—Միմուկը ի՞նչ ձև ունի: 9.—Ուրիշ ի՞նչ ծա-
ղիկներ կը ճանչնար: 10.—Ո՞ր ծաղիկները ամէնէն աւելի կը սիրէք:

211. Հետեւեալ պատմութիւնը գրել ընդարձակելով.

Սիմոն ազնիւ տղայ մըն է:—Սմէնուն հետ քաղաքավարութեամբ կը
վարուի:—Անուշ քնատրութիւն մը ունի, և ամէնքը զինքը կը սիրեն:—
Շատ բարեկամներ ունի, որոնք հաճոյք կ'ըզան իր ընկերակցութենէն:

212. Այս պատմութեան հակառակը գրել:

Օրինակ.—Սիմոն կոպիտ տղայ մըն է, և այլն:

34. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԿԱԿԱԶՆ, ՈՒ ՄԵՆԵԱԿԸ

Փունջի մը մէջ, ծաղիկներով լի նաբօտ,
Կակաչն օր մը եղաւ վարդին զըրացի:
Շուտով անոր բուրումն առաւ բաղքահոտ:
Պէտք է ընտրել միշտ ընկերներ խելացի:

ՆԱԼ ՎԵՐՉԱՑՈՂ ԲԱՅԵՐԸ

ԽՁ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — Ա. Ն. Հ. Ն. Ա. Չ. Ա. Ն. Գ. Ն. Ե. Ն.

Աղքատ կին մը, որ պզտիկ աղջիկ մը ունէր Նուարդ անունով, ամէն օր կ'երթար օրականով աշխատելու: Առտուները, մեկնած պահուն, քովը կը կանչէր իր սիրելի աղջիկը, և շատ մը խրատներ կու տար անոր, մանաւանդ կը պատուիրէր որ պատուհանէն վար չկախուի և հորին չմտննայ: Նուարդ բարի ու աշխատասէր էր. մօրը բացակայութեան միջոցին տունը կը կենար, իր պարտքերը կը ճանչնար և կը կատարէր, որպէս զի մայրիկը հանգիստ ընէ դարձին: Բայց մեծ թերութիւն մը ունէր. անհնազանդ էր: Օր մը, լսեց որ յուզարկաւորութիւն մը կ'անցընէին փողոցին ծայրէն. պատուհանը բացաւ, և այնքան վար կախուեցաւ որ սալայատակին վրայ ինկաւ, և գլուխը ջախջախուեցաւ:

Հ Ր Ա. Հ Ա Ն Գ Ն Ե Ր

213. Օրինակել այս հասուածը եւ ստորագծել նաչ վերջացող բայերը:

214. Սորվիլ այս հասուածին ուղղագրութիւնը:

215. Խոնարհել վախնաչ, ճանչնաչ, ջախնաչ, հասկնաչ բայերը:

Գ Ա Ս

113. Բարկանաչ բայը ո՞ր լծորդութեան պէս կը խոնարհուի, եւ ի՞նչպէս կ'ըլլայ կասարեալն ու հրամայականը:— Բարկանաչ բայը Գ. Լծորդութեան կարդալին պէս կը խոնարհուի, բայց կատարեալը կ'ըլլայ. բարկացայ, բարկացար, բարկացաւ, բարկացանի, բարկացաի, բարկացան: Իսկ հրամայականը կ'ըլլայ. բարկացի՛ր:

114. Ո՞ր բայերը այսպէս կը խոնարհուին:— Այսպէս կը խոնարհուին նաչ վերջացող բայերը, ինչպէս. ճանչնաչ, գիտնաչ, գողնաչ, վախնաչ, կեննաչ, առննաչ, ջախնաչ, մօտենաչ, հասկնաչ:

216. Պատասխանել հետեւեալ հարցոյ մտերուն՝ բերանացի եւ գրաւոր.

- 1.— Նուարդին մայրը ինչ տեսակ կին էր, և ինչ կ'ընէր:
- 2.— Առտուները ինչ պատուէր կու տար իր աղջկանը:
- 3.— Նուարդ ինչպէս աղջիկ էր:
- 4.— Մօրը բացակայութեանը ինչ կ'ընէր:
- 5.— Ի՞նչ թերութիւն ունէր:
- 6.— Ի՞նչ է անհնազանդութիւնը:
- 7.— Այս բառին հակառակը ինչ է:
- 8.— Օր մը ինչ պատահեցաւ:
- 9.— Այս պատմութիւնը ինչ կը սորվեցնէ մեզի:

217. Լուծել վերոգրեալ հասուածին բոլոր բայերը:

Լ Ո Ւ Ծ Մ Ա Ն Օ Ր Ի Ն Ա Կ

Ունէր	Ունենաչ բայ, սահմ. անկ. եզ. Գ. դէմք:
Կ'երթար	Երթաչ բայ, սահմ. անկ. եզ. Գ. դէմք:
Աշխատելու	Աշխատիչ բայ, ապառնի ընդունելութիւն:

Գիտողութիւն.— Բայ մը լուծելու համար պէտք է ըսել Թէ ինչ է բային անունը և Թէ ինչ ժամանակ, ինչ եղանակ, ինչ քիւ և ինչ դեմք է:

218. Խոնարհել գողնաչ բայը:

35. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՓՇՈՏ ԹՈՒՓԸ

Փոքրիկ տղեկ մը՝ զոր փուշն էր խայծեր, իր ցան արցունքով հօրը կը պատմէր.
«Ինչնու գեղեցիկ արտին մէջ մեր տան Բուսեր է արդեօք այս Թուփն անպիտան»
— «Որպէս զի փորձով սորվիս դուն, տղանս, Թէ պէտք է չարէն միշտ հեռու կենաս»:

ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐ

ԽԷ. ԸՆԹԵՐՅՈՒԱԾ.—ՈՐԿՐԱՄՈՒ ՏՂԱՆ

Երուանդ որկրամու ազայ մըն էր: Օր մը խոհանոց երթալով՝ պնակով բան մը նշմարեց դարանի մը վրայ, կարծեց որ անուշեղէն մըն է: Բայց դարանը բարձր էր, և հարկ եղաւ երկու աթու իրարու վրայ դնել, ու ինք ալ անոր վրայ ելլելով, հաղիւ կրցաւ ձեռքը պնակին հասցնել: Յանկարծ մատերը խայթուեցան: Տղան սարսափած ետ քաշուելու միջոցին՝ աթուները շարժեցան ու ինք գետինը ինկաւ: Պնակին մէջ ողջ խեչեփառներ կային, որոնք վար թափեցան: Երուանդ վախէն սկսաւ լալ պռուալ: Ծառաները վազեցին եկան, և անոր որկրամու ըլլալը գիտնալով՝ վրան խնդացին: Երուանդ ուրիշ անգամ ասանկ բան չըբաւ:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

- 219. Օրինակել այս հասուածը, եւ ստորագծել անկանոն բայերը:
- 220. Սորվիլ այս հասուածին ուղղագրութիւնը:
- 221. Խոնարհել ուսել եւ բանալ բայերը:

Դ Ա Ս

115. Անկանոն բայերը որո՞նք են: — Անկանոն են այն բայերը, որոնք առանց յատուկ օրէնքի մը կը տարբերին ընդհանուր կանոնէն կասարեալին կամ հրաւայականին մէջ, և կամ երկուքին մէջ միանգամայն:

116. Որո՞նք են անկանոն բայերը: — Անկանոն բայերն են. բերել, դնել, գարնել, ընել, քսել, ուսել, տեսնել, տակնի, գալ, լալ, տալ, կրքալ, բանալ, դառնալ, իյնալ, մնալ:

222. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի եւ գրաւոր.

- 1.— Երուանդ ինչպէս տղայ է: 2.— Ի՞նչ նշմարեց խոհանոցին մէջ:
- 3.— Ինչո՞ւ երկու աթու զրաւ իրարու վրայ: 4.— Ի՞նչ պատահեցաւ երբ ձեռքը պնակին երկնցուց: 5.— Իյնալ անկանոն բայ է թէ կանոնաւոր: 6.— Ի՞նչ կար պնակին մէջ: 7.— Խեչեփառը ինչ է: 8.— Ջրային կենդանի է թէ ցամաքային: 9.— Երուանդ ինչո՞ւ լսցաւ պռուաց: 10.— Ծառաները ինչ ըրին: 11.— Ուրիշ անգամ ասանկ բան ըրաւ Երուանդ: 12.— Ինչո՞ւ համար չըբաւ:

223. Խոնարհել ընել բայը՝ բերանացի եւ գրաւոր:

224. Սահմանական անկասարի վերածել հետեւեալ բայերը

Ես գարնել, — Դուն ուտել, — Ան բանալ, — Մենք լալ, — Դուք գալ, — Անոնք տալ, — Ես դառնալ, — Դուն իյնալ:

Դիտողութիւն. — Լալ, տալ, գալ բայերը փոխանակ կրի կու կ'անեն խոնարհան մէջ, ինչպէս. կու լաւ, կու տաւ, կու գաւ:

36. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՊԱՐԾԵՆԻՔՈՑ Ա.Ղ.ՋԻԿԸ

Աղջիկ մը ելած ոեղանին վըրան,
«Տես, հայրիկ, կ'ըսէր, հասալս է երկայն»
Հայրն ըսաւ անոր. «Իջիլ ատկէ դուն,
Պիտի կարճընայ հասակդ ալ իսկոյն»
Ո՞վ է առակիս աղջիկն անձնագով,
— Ան որ կը պարծի իր սուտ պերճանքով:

Ա Ն Կ Ա Ն Ո Ն Բ Ա Յ Ե Ր

ԱՆԵՐԵԼՈՅՔ Սահմանական Կատարեալ Հրամայական

Բերել, Բերի, բերիր, բերաւ, Բեր :

բերինք, բերիք, բերին,

Դնել, Դրի, դրիր, դրաւ, Դրի :

դրինք, դրիք, դրին,

Չարնել, Չարկի, զարկիր, զարկաւ, Չարկ :

զարկինք, զարկիք, զարկին,

Ընել, Ըրի, ըրիր, ըրաւ, Ըրէ :

ըրինք, ըրիք, ըրին,

Ըսել, Ըսի, ըսիր, ըսաւ, Ըսէ :

ըսինք, ըսիք, ըսին,

Ուտել, Կերայ, կերար, կերաւ, Կեր :

կերանք, կերաք, կերան,

Տեսնել, Տեսայ, տեսար, տեսաւ, Տես :

տեսանք, տեսաք, տեսան,

Տանիլ, Տարի, տարիր, տարաւ, Տարի :

տարինք, տարիք, տարին,

ԱՆԵՐԵԼՈՅՔ Սահմանական Կատարեալ Հրամայական

Գալ, Եկայ, եկար, եկաւ, Եկի :

եկանք, եկաք, եկան,

Լալ, Լացի, լացիր, լացաւ, Լաց :

լացինք, լացիք, լացին,

Տալ, Տուի, տուիր, տուաւ, Տուի :

տուինք, տուիք, տուին,

Բանալ, Բացի, բացիր, բացաւ, Բաց :

բացինք, բացիք, բացին,

Դառնալ, Դարձայ, դարձար, դարձաւ, Դարձիր :

դարձանք, դարձաք, դարձան,

Երթալ, Գացի, գացիր, գնաց, Գնա' :

գացինք, գացիք, գացին,

Ինալ, Ինկայ, ինկար, ինկաւ, Ինկիր :

ինկանք, ինկաք, ինկան,

Մնալ, Մնացի, մնացիր, մնաց, Մնացիր :

մնացինք, մնացիք, մնացին,

Թ Ո Ղ Ո Ւ Լ Բ Ա Յ Ը

Սահմանական եղանակ

Ներկայ

Եզակի	Յոքնակի
Կը թողում	Կը թողունք
Կը թողուս	Կը թողուք
Կը թողու	Կը թողուն

Անցեալ Անկասար

Եզակի	Յոքնակի
Կը թողուի	Կը թողուինք
Կը թողուիր	Կը թողուիք
Կը թողուր	Կը թողուին

Անցեալ Կասարեալ

Եզակի	Յոքնակի
Թողուցի	Թողուցինք
Թողուցիր	Թողուցիք
Թողուց	Թողուցին

Բացարձակ Ապառնի

Եզակի	Յոքնակի
Պիտի թողում	Պիտի թողունք
Պիտի թողուս	Պիտի թողուք
Պիտի թողու	Պիտի թողուն

Անկասար Ապառնի

Եզակի	Յոքնակի
Պիտի թողուի	Պիտի թողուինք
Պիտի թողուիր	Պիտի թողուիք
Պիտի թողուր	Պիտի թողուին

Հրամայական եղանակ

Եզակի

Յոքնակի

Թո՛ղ

Թողո՛ւնք

Թողուցե՛ք

Ստորագասական եղանակ

Ներկայ

Եզակի

Յոքնակի

Թողում

Թողունք

Թողուս

Թողուք

Թողու

Թողուն

Անկասար

Եզակի

Յոքնակի

Թողուի

Թողուինք

Թողուիր

Թողուիք

Թողուր

Թողուին

Անորոճ եղանակ

Աներեւոյր

Թողուլ

Ներկայ Ընդունելութիւն

Թողող

Անցեալ Ընդունելութիւն

Թողած , թողեր

Ապառնի Ընդունելութիւն

Թողելու

Պիտողութիւն.— Ուշ վերջացող բայերէն շատ բիչերը կը գործածուին աշխարհաբարի մէջ և ընդհանրապէս անկանոն խոնարհում ունին:

Ն Ե Ր Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ն Բ Ա Յ

ԽԸ. ԸՆԹԵՐՅՈՒԱԾ. — ԹՈՒՆՍՈՐ

Մեր հաւերէն մէկը թուխտի նստեր էր, Երեք օր առաջ, հաւկիթներուն պատեանները ծակելով, ճերմակ աղուորիկ վառեակներ դուրս ելան: Ասոնք դեռ թեթեւ աղուամազով մը հազիւ ծածկուած՝ կը մօխն, կը դողդղան: Մայրերնին զանոնք իր փետուրներուն ներքեւ կը տաքցնէ, կտուցովը ուտելիք կուտայ անոնց, և պտրամած ատեննին վրանին կը հսկէ որ մէկը չգպչի անոնց: Եթէ մէկը ձագերուն մօտենայ, անոր վրայ կը յարձակի:

Հ Ր Ա Ղ Ա Ն Գ Ն Ե Ր

- 225. Որինակել այս հառուածը եւ ստորագծել ներգործական բայերը:
- 226 Սորվիլ այս հառուածին ուղղագրութիւնը:
- 227. Խոնարհել ծածկել ներգործական բային կասարեալը:

Գ Ա Ս

117. *Ներգործական բայ որո՞ւ կ'ըսուի:— Ներգործական կ'ըսուին այն բայերը, որոնց ենթական ուրիշի մը վրայ գործողութիւն մը կը կատարէ, ինչպէս. կը ծեծել տղան, կը սիրել մայրս:*

118. Ո՞ր բայերը սեռի խնդիր կ'առնեն:— Միայն ներգործական բայերը սեռի խնդիր կ'առնեն:

228. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի եւ գրաւոր.

1. — Որո՞նք հաւը թուխտի նստեր էր:
2. — Ի՞նչ կը նշանակէ թուխտի նստիլ:
3. — Ի՞նչ էլաւ հաւկիթներուն մէջէն:
4. — Ո՞վ ծակեց պատեանները:
5. — Ինչո՞վ ծակեցին:
6. — Ի՞նչ է աղուամազը:
7. — Մայրը ինչպէս կը տաքցնէ իր ձագերը:
8. — Ի՞նչպէս կը կերակրէ զանոնք:
9. — Ի՞նչ կ'ընէ եթէ մէկը մօտենայ վառեակներուն:

229. Խոնարհել սեւեւէլ ներգործական բային ապառնին:

37. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՀՐԵՇՅԱԿՆ ՈՒ ՄԱՆԿԻԿԸ

Հրեշտակ մ'աղուոր լուսաներ,
Օրրանին քով վայրահակ,
Իր պատկերն հոն կը դիտէր՝
Կարծես ջուրի մէջ յստակ:

«Թող քու տունէդ ոչ որ լայ,
Հագնի սուզի հագուստներ,
Թող քու վերջին ժամդ ըլլայ
Ծընունդիդ պէս խնդարեր:

«Եկ՛ուր, կ'ըսէր, վնդ մանկիկ,
Դուն՝ որ ինձի ես նըման,
Եկ՛ուր, ըլլանք երջանիկ
Երկիրն է քեզ անարժան:

«Ձըլլան դէմքերն հոն՝ տըխուր,
Մահուան ողբերն անհետին.
Երբ մարդ քեզ պէս է մաքուր,
Բարեբախտ է օրն յետին:»

«Ինչո՞ւ կսկիծ ու վրդով
Ճակտիդ խորշոմ տան քուկին,
Ինչո՞ւ աղի արցունքով
Խածուկ աչքերդ աղօտին:

Թըռաւ հրեշտակն հովաթիւ,
Թեւեին ուղղեց բացխլովիկ
Դէպ ի կայանն իր անձիւր.
Մեռնու զաւակդ, հէք մայրիկ:

ՌԸՊՈՒԼ

Չ Է Չ Ո Ք Բ Ա Յ

ԽՅ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — Ա.Ն.ԽՈՀԵՄ՝ ՊՍ.ՏՈՒՏԱԿԸ

Պատուտակ մը խոշոր մայրիի մը կոճղին փաթթուած կը մեծնար և կապոյտ աղուոր ծաղիկներով կը զարդարուէր: Հովին հարուածները չէին դպչեր իրեն, վասն զի մայրին զինքը կը պաշտպանէր. և անձրևէն չէր թըրջուեր, որովհետև դարաւոր ծառին սաղարթները հովանի կ'ըլլային իրեն: Օր մը, սակայն, ձանձրացաւ իր խաղաղ կեանքէն, մտածելով որ ինք իր գլխուն կրնար աւելի զուարճանալ առղին անղին թափառելով, քան թէ հոն գամուած մնալով: Ու բաժնուեցաւ իր նեցուկէն: Բայց յեղակարծ փոթորիկ մը շուտով պատժեց անխորհուրդ թուփը, քախքախելով զայն որ չէր գիտցեր իր հանգստութեան յարգը:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

- 230 Օրինակել այս հատուածը եւ ստորագծել չեզոք բայերը
- 231. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը:
- 232. Խոնարհել մտի չէզոք բային կատարեալն ու հրահայտակներ:

Դ Ա Ս

119. Չէզոք բայ որո՞ւ կ'ըսուի: — Չէզոք կ'ըսուին այն բայերը, որոնց ենթական գործողութիւնը ինք իր վրայ կը կատարէ, ինչպէս. կը փայլեմ, կը յողաւ, կը խաղաւ, կը ցասեմ:

233. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի եւ գրաւոր.

- 1.— Ի՞նչ է պատուտակը: 2.— Իր ծաղիկները ի՞նչ գոյն ունին: 3.— Ի՞նչ է մայրին: 4.— Ի՞նչպէս կը պաշտպանէր մայրին պատուտակը: 5.— Պատուտակը ինչո՞ւ ձանձրացաւ իր կեանքէն: 6.— Ի՞նչ ընել ուզեց: 7.— Աւելի աղէկ զուարճացնու: 8.— Ի՞նչ պատահեցաւ իրեն: 9.— Թուքի բառը ի՞նչ կը նշանակէ:

234. Խոնարհել փայլի, նստի չէզոք բայերուն բացարձակ եւ անկասար ապառնիւները:

235. Սկզբնաստուերով նշանակել հետեւեալ բայերուն չեզոքներն ու ներգործակաւները.

Վառել, խնդալ, կարդալ, կաղալ, լալ, լուծել, հիւսել, գրկել, փաթթել, փաթթուիլ, ձանձրանալ, զուարճանալ, խառնել, կոտրել, թափել, շինել, բարձրանալ, երթալ, վազել, այրիլ, մարիլ:

136. Վերոգրեալներէն մէյմէկ չեզոք բայ ընտրելով ամբողջացնել հետեւեալ խօսքերը.

Ճրագը կը . . . : Կրակը կը . . . : Ջուրը կը . . . : Տուն մը . . . : Գաւաթը . . . : Ինչո՞ւ կու . . . : Այս տղան քիչ մը կը . . . : Մարդ երբ մինակ մնայ, կը . . . : Այդչափ շատ մի . . . : Հասակով բարձրանալ արժանիք մը չէ, պէտք է մտքով . . . :

Կ Ր Ա Ի Ո Ր Ա Կ Ա Ն Բ Ա Յ

Ծ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ.—ՈՍԿԻ ԵՋՆԱԿՆԵՐԸ

Ալիս օր մը պարտէզ ելաւ վարդ քաղելու: Վարդենիի մը մօտեցաւ. բայց յանկարծ կանգ առաւ տերեւներուն մէջ ոսկի եզնակներու բոյն մը նշմարելով, որուն վրայ չորս հատ փոքրիկ ձագեր կային: Ալիս այնքան յափշտակուեցաւ այս տեսարանէն որ ուզեց քակել տանիլ զանոնք, տուփի մը մէջ պահել, վարդ կերցնել անոնց, և ուղած ժամանակը դերձանի մը ծայրը կապել տալով խաղալ հետերնին. բայց վայրկեան մը խորհելէ ետքը, հետացաւ դնաց առանց բանի մը դպչելու: Մտածեց թէ չարութիւն էր աւրել այդ բոյնն ու վարդենին, որոնք այնքան ազուոր յօրինուեր էին Աստուծոյ:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

- 237. Օրինակել այս հասուածք եւ ստորագծել կրաւորական բայերը:
- 238. Սորվիլ այս հասուածին ուղղագրութիւնը:
- 239. Թոնարհել ծեծուիլ կրաւորական բայը:

Դ Ա Ս

120. Կրաւորական բայ որո՞ւ կ'ըսուի: — Կրաւորական կ'ըսուին այն բայերը, որոնց գործողութիւնը աւրիչի մը կողմէն կը կատարուի ենթակային վրայ, ինչպէս. շինել, շինուիլ. խօսիլ, խօսուիլ. ծեծել, ծեծուիլ:

240. Պատասխանել հետեւեալ հարցումներուն բերանացի եւ գրաւոր.

- 1.—Ալիս ինչո՞ւ պարտէզ գնաց: 2.—Ինչո՞ւ յանկարծ կանգ առաւ:
- 3.— Ոսկի եզնակները ի՞նչ են: 4.— Մարդու կը վնասեն: 5.— Ինչո՞վ կը անին: 6.—Ալիս ի՞նչ ընել ուզեց: 7.—Ինչո՞ւ իր փափաքը չգործադրեց:

38 ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ.—ՈՍԿԻ ԵՋՆԱԿՆԵՐԸ

Սաղարթներուն վերայ աղուոր
Սատափի բոյն մ'է ինկեր:
Վարդերուն մէջ փայլուն, բոսոր,
Լեցուն ոսկի եզնակներ:

Տը՛գ, տը՛գ Սուփին մէջ կը թռչին,
Տը՛գ, տը՛գ կ'ելլեն օդն ի վեր,
Եւ ուտերուն մէջ կը թառին
Արեւուն զէմ լուսայեռ:

Կանանչ ու բիլ ճանճեր խոշոր
Կը պըտուտկին հոյլ ի հոյլ,
Թոյր թեւերնին թոյր է բոլոր
Եւ ձայներնին թեթեւ սոյլ:

Ճակատնին լայն, կունկնին լայն,
Թաթիկնին հաստ, լերկ ու սուր,
Բայց մանուկներ կը մօտենան
Անոնցանվախ անսարսուռ:

Կեռ ճանկերէն չըլլայ վախճար,
Չունին ասեղ ո՛չ խայթոց.
Փարնան՝ վարդի թուփերուն տակ,
Մեծ գրօսանքն են տըղոց:

Կ Ո Ջ Ա Կ Ա Ն

ՄԱ. ԸՆԹԵՐՅՈՒԱԾ. — ՊԱՏՃՈՒԱԾ ՍՏԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Փոքրիկ Նեկտարը Հարմային ձեռքը ոսկի մը տեսնելով հարցուց. «Եղբայր, ո՞ւրկէ գտար այդ դրամը:» — «Մառէն փրցուցի,» պատասխանեց: — «Ի՞նչ կ'ըսես, Հարմա՛, դրամը ծառին վրա՞յ կը բուսնի:» — «Հապա՛, քոյրս, չե՞ս գիտեր. եթէ այս ոսկին տնկես, եկող տարի ոսկիէ ծառ մը կ'ըլլայ:» Եւ դրամը գզրոցին մէջ պահելով ելաւ դպրոց գնաց: Նեկտար, որ անոր խօսքին հաւատացեր էր, վազեց դրամը գզրոցէն առաւ և պարտէզին մէջ տնկեց: Իրիկուան Հարմա տուն դառնալով քրոջը ըրածը խմացաւ, ու զայրացած պարտէզ վազեց. բայց փոքրիկ աղջիկը տնկած տեղը մոռցեր էր, և ստախօս տղան ամէն կողմ փորեց ու դրամը չգտաւ:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

- 241. Օրինակել այս հատուածը եւ ստորագծել կոչականները:
- 242. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը:
- 243. Խոնարհել հաշատայ բայը:

Դ Ա Ս

121. Ի՞նչ է կոչականը: — Այն անձին առնունը, որուն խօսք կ'ուղղեւր, կոչական կ'ըսուի, ինչպէ՛ս. եկո՛ւր, զաւա կս, համբուրեա՛մ գեղ:

122. Կոչականը ի՞նչ հոլով կ'ըլլայ: — Կոչականը միշտ ուղղական հոլով կ'ըլլայ:

244. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի եւ գրաւոր.

- 1.—Նեկտար ի՞նչ հարցուց եղբորը: 2.—Հարմա ի՞նչ պատասխանեց: 3. Նեկտար հաւատոնց անոր ըսածին: 4.—Հարմա դպրոց զացած ատեն դրամը ո՞ւր պահեց: 5.—Նեկտար ի՞նչ ըրաւ: 6.—Երբ Հարմա դպրոցէն դարձաւ, ի՞նչ պատահեցաւ:

245. Կոչականներ դնել հետեւեալ կէտերուն տեղ.

. . . եկուր դպրոց երթանք:—Ներք իմ յանցանքիս . . . — . . . գնա՛ սուրճ մը բեր ինձի: — . . . ինչո՞ւ այդչափ տագոյն ես: — Դժան ինձի ո՞վ . . . :

246. Խոնարհել սակիչ, յետեւ, զարնել անկանոն բայերը:

247. Հետեւեալ կոչականներուն ամէն մէկուն յարմար խօսքեր շինել:

Ա՛տուած, եղբայր, բանեկամ, զաւանկս

39. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՄՐՋԻՒՆԸ

Եզը դաշտէն յոգնած դադրած կը դառնար
Յամբարար:

Մրջիւն մըն ալ իր եղջիւրին ծայրն ելեր
Թառեր էր:

Երբ զիւզն հասան, ընկերները սրտացին
Մրջիւնին.

«Քուրբիկ մրջիւն, այդպէս ուրկէ կը դառնաս,
Ի՞նչ է աս:»

— «Կը հարցընէք, ապուշներ,
Ձէք տեսներ,

Հողն հերկեցինք արտերուն
Օրն ի բուն:»

ԲԱՅԱՅԱՅՏԻՉ ԵՒ ԲԱՅԱՅԱՅՏԵԱԼ

ԾԲ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — ԴՍ. ԶԱՍԻՐՏ ԱՐԱԷՆ

Երէկ գիշեր մեր դրացիին՝ Արեւեանին տունը բռնկեցաւ: Բոլոր թաղեցիները վազեցին եկան. սակայն տանը տանիքը փլեր էր արդէն, և բոլոր սնահակները բոցի մէջ էին: Արեւեանին պզտիկ քոյրը, Սուրբիկը, մուխէն մարած զուրս հանեցին: Խեղճ աղջիկը քիչ մնաց որ պիտի խեղդուէր հոն, եթէ Արսէն, մեր քաջ խոհարարը, բոցերուն մէջ նետուելով չազատէր զայն: Սուրբիկին բոլոր ընտանիքը՝ հայրը, մայրը, եղբայրները և քոյրը երախտապարտ մնացին Արսէնին:

Հ Ր Ա. Հ Ա Ն Ք Ն Ե Ր

- 248. Օրինակել այս հասուածը եւ ստորագծել բացայայտիչները, իսկ բացայայտեալներուն վրայ խաչանիշ դնել:
- 249. Սորվիլ այս հասուածին ուղղագրութիւնը:
- 250. Խոնարհել վագի, գալ եւ երախտապարտ մնալ բայերը:

Դ Ա Ս

123. Ի՞նչ է բացայայտիչը: — Այն անունը կամ ածականը որ ուրիշ անունի մը ո՞վ կամ ինչպէս ըլլալը կը բացատրէ, բացայայտիչ կ'ըսուի, և միւսը բացայայտեալ, ինչպէս. Մասրէոս, Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարք. Նապի, Օսմանցի բանասէղծը:

251. Պատասխանել հետեւեալ հարցո մներուն՝ բերանացի եւ գրաւոր.

1.—Երէկ գիշեր ի՞նչ պատահեցաւ: 2.—Ի՞նչ կը նշանակէ բռնկեցաւ: 3.— Թաղեցիները ի՞նչ ըրին: 4.— Ի՞նչ կը նշանակէ սնահիփ: 5.— Տուն մը ուրիշ ի՞նչ մասերէ կը բաղկանայ: 6.— Սուրբիկը ի՞նչպէս զուրս հանեցին տունէն: 7.— Ո՞վ էր Սուրբիկ: 8.— Ի՞նչ պիտի ըլլար Սուրբիկ, եթէ Արսէն բոցերուն մէջ չնետուէր: 9. — Ի՞նչ կը նշանակէ երախտապարտ մնալ:

252. Բերանացի պատմել այս պատմութիւնը, յետոյ գրել ինքնիրեն:

253. Խոնարհել լալ, ջալ, դառնալ բայերը:

254. Հետեւեալ բայերուն գոյականներ գտնել.

Հարցնել, — Խաղալ, — Պտրտիլ, — Գրել, — Երգել, — Արտասուել, — Հառաչել, — Վախնալ, — Սոսկալ, — Զարմանալ, — Տրտիլ:

255. Հետեւեալ բայերը յոքնակի ընել:

Կը ժողվեմ, — Կը Թղթատես, — Կը հեգէ, — Կը գնեմ, — Կը ծախես, — Կը նետէ, — Կը ծեծեմ, — Կը վանես, — Կը պահէ, — Կը կանչեմ, — Կը ձգես, — Կը մարի, — Կը դեղնիմ, — Կը կարմրիմ, — Կը մտի:

40. ԱՐՏԱԱՆՈՒԹԻՒՆ. — ՆԱԻՍՏԻՆ

Նաւաստի մը կը մեկնէր
Դէպ ի հեռու երկիրներ,
«Կ'երթաս, ըսաւ մէկն իրեն,
Բայց չես վախնար ծովերէն:
Հայրդ ու մեծ հայրդ ալ գացին,
Եւ զոհ եղան արկածին»
— «Իսկ բուկին հայրդ ո՞ւր մեռաւ»
— «Իր անկողնին մէջ հարկաւ»
— «Ուրեմն այնտեղ դուն ի՞նչպէս
Ամէն գիշեր կը ննչես»

Մ Ա Կ Բ Ա Յ

ԾԳ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ.—Գ.Ս.Ղ.Թ.Ա.Ա.Ն. Թ.Ո.ՉՈՒՆՆԵՐ

Միժեռնակները, արագիրները, կարմրալանջները, լորամարգները, տարմահաւերը զաղթական թռչուններ են: Երբոր ձմեռը մօտենայ, անոնք ցուրտ երկիրներէն կը մեկնին: որովհետեւ չեն կրնար սաստիկ ցուրտերուն դիմանալ, և անօթի կը մնան, երբ ձիւնը գետինը ծածկէ: Ուստի տաք երկիրներ կ'երթան խմբովին: Նախ կը հաւաքուին մարգագետիններուն վրայ, գիւղի մը կամ լճակի մը եղերքը շամբերու մէջ, իրենց ուղեւորութեան օրը որոշելու համար, և յետոյ, ամէնքը միասին ճամբայ կ'ելլեն: Բայց երբ գարունը գայ, նորէն կը դառնան կը գտնեն իրենց նախկին բոյնը, ուր պիտի զետեղեն իրենց նորաբուսած ընտանիքը:

Հ Բ Ա. Հ Ա. Ն Գ Ն Ե Ր

256. Օրինակել այս հասուածը եւ ստորագծել մակրայները:

257. Սորվիլ այս հասուածին ուղղագրութիւնը:

258. Հետեւեալ մակրայներէն՝ սեղ, ժամանակ, ֆանակոթիւն, հարցում, ժխտում ցուցնողները զոս զոս սիւնակներու մէջ դնել: Երբեմն, ոչ, հոն, շատ, ետքը, երբեք, առաջ, ինչո՞ւ, վաղը, այսօր, քիչ, շատ վեր, արդեօք, ո՞ր, պակաս:

Գ Ա Ս

124. Խճէ է մակրայը: — Մակրայ կ'ըսուին այն բառերը, որոնք գործողութեան մը սեղը, ժամանակը, կերպը, ֆանակոթիւնը, ևլն, կը ցուցնեն:

125. Գլխաւոր մակրայները որո՞նք են: — Գլխաւոր մակրայներն են. այսօր, վաղը, երեկ, հիմայ, ետքը, առաջ, երբեմն, երբեք, վեր, վար, այստեղ, այնտեղ, աոչեւ, ետեւ, դիմաց, ինչո՞ւ, ո՞ր, արդեօք, թերեւս, շոտ, աւելի, քիչ, աղէկ, գէշ, շոտ, կամաց, այո՛, ո՛չ, ևայլն:

259. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի եւ գրաւոր.

- 1.—Որո՞նք են զաղթական թռչունները: 2.— Խճէ տեսակ թռչուններ են ծիծեռնակները: 3.— Խճէ գոյն ունին կարմրալանջները: 4.— Այդ թռչունները կ'ուտուին: 5.—Ե՞րբ կը մեկնին ցուրտ երկիրներէն: 6.— Ինչո՞ւ կը մեկնին: 7.—Մեկնելէն առաջ ո՞ր կը հաւաքուին: 8.—Ո՞ր երկիրները կ'երթան: 9.—Նորէն կը դառնան: 10.— Ե՞րբ կը դառնան:
260. Խոնարհել Յշմարեղ ներգործական բայը եւ Յշմարեղ կրաւորական բայը:

41. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ.—ՆԱՐՈՒՍ.Կ.Ն ՈՒ ՄԵԾԱՏՈՒՆԸ

Կարուակ մը կար ստնօք
Որ՝ թէպէտ խեղճ, չըբաւոր,
Կ'երգէր զըւարթ և անհոգ
Աշխատելով ամէն օր:

Դրացի մ'ունէր մեծատուն
Որ շըբեղ կեանք կը վարէր,
Բայց ոչ հանգիստ ոչ ալ բուն
Ունէր ցորեկն ու զիշեր:

Առտըւան դէմ երբ նիրհէր,
Կարուակն ելած էր արդէն,
Եւ երգելով միշտ երգեր—
Կ'արթընցընէր զայն քունէն:

Հարուստն ըսաւ օր մ'իրեն.
«Կ'ուզեմ բարիք մ'ընել ես.
Հարիւր ոսկի թող բերեն,
Ա՛ռ, ամէնքն ալ կու տամ բեզո՛»

Կարուակն առաւ երբ ոսկին
Ա՛լ աշխարհք իրն էր կարծես.
Բայց այդ զանձով թանկագին
Հոգն ալ մըտաւ տունէն ներս:

Դադրեցաւ ձայնն իր երգին,
Գունն ալ փախաւ աչքերէն.
Տանջանքն եղաւ իր բաժին
Խաղող կեանքին փոխարէն:

Օր մ'ալ զընաց հարուստին
Որ ան հանգիստ էր առտուն
«Ա՛ռ, ոսկիներդ, ըսաւ, սին,
Տնւր քունս ու երգս ինձի դուն»:

ՆԱԽԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԴ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — ՉՍՐԱՊԻՏՑ ՏՂԱՆ

Անձրեւոտ օր մը, պզտիկ տղայ մը, դասագիրքերը անութին տակ, կերակուրին սակառն ալ ձեռքը բռնած՝ դժուարութեամբ կը քալէր: Թըջուած սալայատակները սահուն էին: Խեղճ տղան հաւասարակշռութիւնը կորսընցնելով՝ ցեխին մէջ ինկաւ, և դէմքը բոլորովին աղտոտեցաւ: Թուվաս, որ այն տեղէն կ'անցնէր, փոխանակ անոր օգնելու՝ սկսաւ վրան խնդալ. «Օ՛, Պարոն, այդ ի՞նչ աղուոր ես, պիտերդ շատ շուտ բռնսեր են,» պոռաց հեզնութեամբ: Այս խօսքերը ըսած վայրկեանին՝ յանկարծ իր ոտքն ալ սահեցաւ ու այնպէս ուժգին պառկեցաւ սալայատակին վրայ որ քիթը բերանը արիւնեցաւ:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

- 261. Օրինակել այս հատուածը եւ ստորագծել նախադրութիւնները
- 262. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը:

Գ Ա Ս

126. Ի՞նչ է նախադրութիւնը: — Նախադրութիւնը բառ մըն է, որ երկու բառեր միացընելու և զանոնք յարաբերութեան մէջ դնելու կը ծառայէ:

127. Նախադրութեան անաջ դրուած բառը ի՞նչ կը կոչուի: — Նախադրութեան անաջ դրուած բառը անոր խնդիրը կը կոչուի:

128. Գլխաւոր նախադրութիւններն են. վրայ, քով, Տակ, շուրջ, ի վեր, մէջ, մօտ, առջեւ, ետեւ, առաջ, ետք, առանց, հարևար, հետ, վեր, դեմ, պէս, գաս, մեկտեղ, վար, և այլն:

263. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի եւ գրաւոր.

1.—Անձրեւոտ օր մը փոքրիկ տղան ի՞նչպէս կը քալէր: 2.—Ի՞նչ ունէր անութին տակ և ձեռքը: 3.—Ո՞վ տեսաւ զայն: 4.—Ի՞նչ ըրաւ: 5.—Ի՞նչ ըսաւ անոր: 6.—Ի՞նչն ալ այնպէս ըսաւ: 7.—Ի՞նչ պատահեցաւ իրեն: 8.—Պէտք է խնդալ ուրիշին պատահած դժբախտութեան վրայ:

264. Նկարագրել Թէ ինչպէս պիտի վարուէր բարի տղայ մը այս պարագային մէջ:

265. Խոնարհել իշնայ բայը:

42. ԱՐԱԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԿՈՅՐ ՏՂԱՆ

Գեղեցիկ է, կ'ըսեն, արվին,
Ծաղկին ճիւղերն ալ կը հակին
Գետին վրայ վայելչօրէն.
Թէ պերճախօս Թռչնիկն աղու
Եւ միջատներն այերաչու
Շողող՝ լոյսին մէջ կը պարեն:
Բոլոր, կ'ըսեն, ծաղկներուն
Այն Թոյրերուն չափ չէ սիրուն
Որ Թերթերնուն կը ձօնէ լոյս՝
Թէ բլբլներ, ձոր ու ծործոր,
Լեռներ, մարգեր, ջուրեր բոլոր,
Եւ պուրակներ և այգեր կոյս

Այնքան հրապոյր ունին գողտրիկ
Որ ծռնկի գան պէտք է մարդիկ
Այդ պերճութեանց առջեւ շրքեղ:
Բնայ իմ սրբոյս չէ ցաւ ու խոց
Որ չեմ տեսներ ծովն աղեկոծ,
Ոչ ալ ծաղկին գոյներն ու գեղ,

Ոչ երկինքը, ոչ շողն այգուն
Ոչ պուրակը և միրգն հասուն,
Ոչ Թռչնիկը, լոյսն անսահման
Բոլոր այս պերճ բարիքներէս
Հատ մը, ո՞վ Տէր, կ'ըզձայի ես
Տեսնել մայրիկս իմ սիրական:

ՕՐ. ՍԱՍԵՌԵՑ ՏԸ ԹԻՒԹԻՆ

Շ Ա Ղ Կ Ա Պ

ՄԵ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — ՃԱՆՃՆ ՈՒ ԹԻԹԵՌՆԵՒԿԸ

«Անխոհմ կենդանի, թեւհրը պիտի այրէ», կ'ըսէր ճանճ մը թիթեռնիկի մը ճրագին շուրջը թռչտիլը տեսնելով: Խեղճ կենդանին կը դառնայ, կ'երթայ, կու գայ, վերջապէս բոցին մէջ իյնալով կ'այրի: Բայց ճանճը աւելի խոհեմ չէ. կ'երթայ կաթնամանի մը եղերքը կը թառի. յետոյ կը ծռի խմելու համար, և մէջը իյնալով կը խեղդուի: Թէև թիթեռնիկին սպառնացող վտանգը տեսեր էր, սակայն չէր նշմարեր թէ ինչ անդունդ կար իր ոտքին տակ:

Հ Ր Ա Հ Ա Ն Ք Ն Ե Ր

- 266. Օրինակել այս հասուածը եւ ստորագծել շաղկապները:
- 267. Սորվիլ այս հասուածին ուղղագրութիւնը:
- 268. Խոնարհել դառնաչ, երբայ բայերը:

Գ Ա Ս

129. Ի՞նչ է շաղկապը: — Շաղկապ կ'ըսուին այն բառերը, որոնք բառերը կամ խօսքերը իրարու կը կապեն:

130. Գլխաւոր շաղկապները որո՞ցք են: — Գլխաւոր շաղկապները հետեւեալներն են. բայց, կառ, մանաւանդ, եւ, երէ, քէ, որ, ետք, սակայն, որովհետեւ, քէւ, իսկ, որպէս զի, ալ, իսկ քէ, ևայլն:

269 Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի եւ գրաւոր.

- 1.— Ի՞նչ ըսաւ ճանճը Թիթեռնիկը տեսնելով:
- 2.— Ի՞նչ պատահեցաւ Թիթեռնիկին:
- 3.— Ճանճը անկէ աւելի խոհեմ է:
- 4.— Ո՞ր կը Թառի:
- 5.— Ի՞նչ կ'ընէ յետոյ:
- 6.— Եւ շաղկապը որ խօսքերը միացուցած է այս ընթերցուածին մէջ:
- 7.— Սակայն շաղկապը:

270. Պատմեցէք այս առակը ձեր ուզած կերպով:

271 Խոնարհեցէք այս ընթերցումին բոլոր բայերուն սահմանական ներկան:

43. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ԾԱՂԻԿԸ

Հիւծուած ծաղիկ դուն մենաւոր,
Որ փառքն եղար ծործորին,
Մըրիկներէն ցըրուած բոլոր
Թերթերը վար կը ծորին:

Մարդիկ են զո՞հ նոյն մանգաղին
Եւ նոյն կամքին միշտ հըլու:
Թերթ մը կ'իյնայ ընզմէ հողին,
Եւ բախտն ըզմեզ կը թողու:

Կորսնցուցած մարդ ցընորքներ՝
Կը հարցնէ տրտօրէն.
Ո՞րն աւելի վաղանցուկ էր,
Ծաղիկը Թէ կեանքն իրեն:

ՄԻԼՎՈՒԱ

Չ Ա Յ Ն Ա Ր Կ ՈՒ Թ Ի Ի Ն

ԾԶ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾ. — ՄԵԾ ՄՕՐ Ա.ՍԵՂԸ

«Վայ, ա՛յ ձանձրացայ», կ'ըսէր Երանիկ, ամէն անգամ որ մեծ մայրը զինքը կը կանչէր ասեղը անցընելու համար: Օր մը Երանիկ երազին մէջ տեսաւ որ բոլոր ծովը ասեղ՝ և ցամաքը դերձան կտրեր էր, ու ինք միս մինակ մնացեր էր անոնց մէջտեղը: Կ'անցընէր, կ'անցընէր զանոնք ու չէին հատներ. թւերը կը յոգնէին ու լալով կ'ըսէր. «Աւա՛ղ, ինչո՞ւ կը զանգատէի խեղճ մեծ մօրս ասեղէն: Իցի՛ւ թէ նորէն քովս ըլլար, ու ամէն վայրկեան իր ասեղը միայն անցընէի:» Երբոր արթնցաւ, երդում ըրաւ այնուհետեւ սիրով ծառայելու իր մեծ մօրը:

Հ Ր Ա. Հ Ա. Ն. Գ Ն Ե Ր

272. Օրինակել այս հատուածը, եւ ստորագծել ձայնարկութիւնները:

273. Սորվիլ այս հատուածին ուղղագրութիւնը:

274. Խոնարհել կարգաչ ներգործական բայը:

1.—Ի՞նչ կ'ըսէր Երանիկ երբ մեծ մայրը զինքը կանչէր: 2.— Ինչո՞ւ կը կանչէր: 3.—Օր մը երազը ի՞նչ տեսաւ Երանիկ: 4.—Ի՞նչ կ'ըսէր Երանիկ երազին մէջ: 5.—Ինչո՞ւ այդպէս կ'ըսէր: 6.—Երբոր արթնցաւ ի՞նչ ըրաւ:

Դ Ա Ս

131. Ի՞նչ է ձայնարկութիւնը: — Ձայնարկութիւնը բառ մըն է, որ առանց խօսքին հետ կապ ունենալու՝ վախ, ցաւ, բաղձամբ, գղջում և բարկութիւն կը յայտնէ:

132. Գլխաւոր ձայնարկութիւնները որո՞նք են: — Գլխաւոր ձայնարկութիւններն են. ա՛խ, աւա՛ղ, վա՛յ, երանի՛ր թէ, իցի՛ւ թէ, անէ՛ծփ, ո՛հ, մե՛ղփ, վա՛խ, կեցցե՛, օ՛ն, ա՛յ, և այլն:

275. Պատասխանել հետեւեալ հարցումներուն՝ բերանացի եւ գրաւոր.

276. Նկարագրել ինչ որ պիտի ընէր բարի աղջիկ մը Երանիկին տեղ:

277. Որոշել Թէ հետեւեալ ձայնարկութիւններէն ո՞րը գղջում, ո՞րը բարկութիւն, ո՞րը ուշախառնութիւն կը յայտնէ:

Ա՛խ, մեղք, երանի՛ Թէ, վայ, ա՛յ, կեցցէ, աւա՛ղ:

44. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — ՅԻՍՈՒՍԻ ԳՈՒՆԸ

Օրօրոցին մէջ ձիւնի պէս ճերմակ, Սուրբ Կոյսը կ'օրրէր իր մանկիկն Յիսուս Որ կը զեղզեղէր միւ, միւ շարունակ. Ա՛յ մարեր էին լոյսերն ու կըրակ: Մայրիկը կ'երգէր օրօրներ հագար, Բայց մանկիկն Յիսուս դեռ չէր քնանար:

«Քընացիր, կ'ըսէր, զառնուկս իմ աղուօր, Հովը կը փռչէ, երկինք լոյս չըկայ. Գոցէ աչուկներդ որ ըսեմ օրօր. Գիրքս տաքուկ է. դուրսը ձիւն կու գայ» Մայրիկը կ'երգէր անդու անդադար Բայց մանկիկն Յիսուս դեռ չէր քնանար:

«Քընացիր որ գան կայծերը բոլոր Լոյս լոյս աչքերով բովիկըդ խաղան Կապոյտ Թըռչուններն ալ կըլոր, կըլոր Բարձիկիդ վըրայ՝ ոսոստուն՝ դառնան» Այսպէս մայրիկը կ'երգէր անդադար Յիսուս մանուկը դեռ չէր քնանար:

Բայց խեղճ մայրիկը ա՛յ շատ էր յոգներ.

Գըլուկը կախեց, շունչը կը հատնէր.

«Դուն չես քնանար, ինչ ընեմ ես ալ . . .

Սիրտըս կոտրեցաւ.» եւ ըսկաւ լալ:

Այն ատեն Յիսուս՝ մանկիկն ըզգայուն,

Աչուկը գոցեց, քընացաւ իսկոյն:

Յ Ա Ն Կ Ն Ի Ի Թ Ե Ր Ո Ի

	Էջ
Յառաջաբան	5
Նախնական գիտելիք	8
Անուն կամ Գոյական	22
Յօղ	36
Ածական	44
Դերանուն	56
Բայ	68
Մակբայ	128
Նախադրութիւն	130
Շաղկապ	132
Չայնարկութիւն	134

Յ Ա Ն Կ Ը Ն Թ Ե Ր Յ Ո Ւ Ա Շ Ն Ե Ր Ո Ւ

	Էջ		Էջ
Բարի աղջիկը	8	Այգին	44
Առտուն	10	Գիւղացիներուն աշխատանքը	46
Շնիկը	12	Նախանձոտ տղան	48
Մաքրասէր տղան	14	Սարգեին ու շերամը	50
Օրիորդ Վախկոտ	16	Հիւանդ բարեկամուհին	52
Նուարդին պուպրիկը	18	Ինքնահաւան աղջիկը	54
Ձկնորսութեան հասոյքը	20	Ծաղիկները և պտուղները	56
Կաղանդի նուէրներս	22	Փոքրիկ կատունները	58
Ճնճողուկը	24	Մեր պուպրիկները	62
Ձատկի տօնը	26	Ծոյլ աղջիկը	64
Մարդուս մարմինը	28	Մեր նոր տունը	69
Չուարճալի պարտէզը	30	Հովիւը	68
Հայ գիրերը	32	Բաղեղը և կաղնին	70
Ստախօս աղջիկը	36	Վեհանձնութիւն	72
Նորածինը	38	Փոսուռանները	74
Մեր պարտէզը	40	Հալկան տղան	78
Մեր դրացիին տղան	42	Արծաթ դրամը	80

	Էջ		Էջ
Վարդենին	88	Անհնագանդ աղջիկը	110
Մրջինը և աղանին	90	Որկրամոլ տղան	112
Թուչուններուն բոյները	92	Թուխսը	118
Արթուն աղջիկը	94	Անխոհեմ պատուտակը	120
Երբոր մեծնամ	96	Ոսկի եզնակները	122
Մեր դաստիարակին խրատները	98	Պատժուած ստախօսուծին	124
Աջ ձեռքը և ձախ ձեռքը	100	Քաջասիրտ Արսէն	126
Գործնական խորհրդատուն	102	Գաղթական Թուչուններ	128
Բաղեղը	104	Զարսիրտ տղան	130
Ազնիւ ստախօսուծին	106	Ճանճն ու Թիթեռնիկը	132
Գարունը և ծաղիկները	108	Մեծ մօր պսեղը	134

Յ Ա Ն Կ Ո Տ Ա Ն Ա Ի Ո Ր Ն Ե Ր Ո Ւ

	Էջ		Էջ
Բարի աղջիկը	9	Եկեղեցիին մէջ	91
Շնիկը	13	Բոյնը	93
Փոքրիկ բարձիկը	17	«Հայր մեր»ը	95
Պուպրիկին	19	Կապոյտ պարիկը	97
Զուարթ նաւաստին	21	Մանկիկին քունը	99
Փոքրիկ վարձակալը	27	Ծնունդի վարդերը	103
Ստախօսին պատիժը	39	Անծեղն ու խայտիտը	105
Տերեւը	41	Շագանակը	107
Խաղողը	45	Կակաչն ու մեխակը	109
Եեծը	51	Պարծենքոտ աղջիկը	113
Մայրը և երկու զաւակները	57	Հրեշտակն ու մանկիկը	119
Պահապան հրեշտակը	59	Ոսկի եզնակները	123
Բարեկամուծինը	63	Մրջինը	125
Տղու հարցում	65	Նաւաստին	127
Պահուած գանձը	71	Կարուակն ու մեծատունը	129
Փոսուռան	75	Կոյր տղան	131
Հայլին	79	Ծաղիկը	133
Երբ ձիւն գայ	89	Յիսուսի քունը	135



13-02

« Ազգային գրադարան



NL0059650

« Ազգային գրադարան



NL0059651

« Ազգային գրադարան



NL0059652

